

Արմ.

2-5593a

2-5593a

ԲԳԳՐ ԳՆԼՈՔԵՆՆԵՆ ԳՆՐԶՈՒԹՅՈՒՆ

355.23

117

Բ-27

# Ծ Ր Ա Գ Ի Ր

Գնդային դպրոցների ուսանողների, 2-րդ սարգա  
ծառայության կարմիր բանակայինների յեզ  
սեխնիկական գործառնների կարմիր բա-  
նակայինների հետ սարգոյ քաղաքա-  
կան պարապմունքների

1932—33 ՈՒՍՈՒՄՆԱԿՆՆ ՏԱՐՎԱ ԷՍՄԱՐ

355.23  
Բ-27

ՄԱՅ. № 21510

Ռ Ա Զ Մ Հ Ր Ա Տ Բ Ա Ժ Ի Ն

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

1932

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

ՄԱՐՏԻՆԻ 1932—33 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ **MAR 30 1932**  
 ԳՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, 2-ՐԳ ՏԱՐՎԱ ԾԱՌԱՅՈՒ-  
 ԹՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՈ-  
 ՐԱՄԱՍԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՔԱ-  
 ՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՐԻՇՆՏԻՐ ՊԼԱՆ

1. Զանազան օճան

1	Կարմիր բանակի խնդրներն ու կազմությունը . . . . .	8 ժամ
2	Տեխնիկան ԲԳԿԻ-ում . . . . .	4 »
3	Գոյետարիտի դիկտատուրան և խորհրդային պետությունը . . . . .	2 »
4	Ազգային բաղաբաղանուցությունը . . . . .	6 »
5	Տնտեսության կապիտալիստական և սոցիալիստական սխե- մանը . . . . .	6 »
6	Սոցիալիստական դիկտատուրա գլխավոր . . . . .	16 »
7	ՀԱՄԻԿ (ա) . . . . .	10 »
8	Ի՞նչ և ի՞նչ պետություններ են լինում . . . . .	6 »
9	ԽՍՀՄ-ի սոցիալիստական շրջափակման մ. ջ. . . . .	10 »
10	Միջազգային հեղափոխական շարժումը և կոմիտեները . . . . .	10 »
		<hr/>
		Ընդամենը՝ 78 ժամ
Կարմիր բանակի մարտական սեղան . . . . .		6 ժամ
Ընթացիկ քաղաքականությունը . . . . .		20 »
Կրկնական և ստորագրական պարագամ լինելը . . . . .		16 »
		<hr/>
		Ընդամենը՝ 42 ժամ

2. Ամսագրային օճան

ա) ուսանողների համար

1	Հիմնական թեմաների կրկնությունը . . . . .	35 ժամ
2	Ընթացիկ քաղաքականությունը . . . . .	50 »
		<hr/>
		Ընդամենը՝ 85 ժամ

ա) կարմիր բանակայինների համար

1	Հիմնական թեմաների կրկնությունը . . . . .	25 ժամ
2	Ընթացիկ քաղաքականությունը . . . . .	35 »
		<hr/>
		Ընդամենը՝ 60 ժամ

012

233

Գրքերի քանակը և արժեքը

Պատվեր 3573    Հրատ. № 2437    Գրավված 6000(ը)    Տրամ 1000

Հանձնված է արտադրության 27 նոյեմբերի 1932 թ.  
 Ստորագրված է արտադրության 10 դեկտեմբերի 1932 թ.



40765-60

### I. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄՈՒՅՅՈՒՆԸ

ա) Թեմայի բովանդակությունը

#### I. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ (2 ժամ)

1. Կարմիր բանակը—սյրոլետարական դիկտատուրայի բանակն է, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի պահակը: «Կարմիր բանակը հանդիսանում է աշխատավորության՝ աշխարհում առաջին և միակ հայրենիքի՝ պրոլետարական պետության զենքը: Նա կոչված է ապահովելու և պաշտպանելու ԽՍՀՄ անկախությունն ու սոցիալիստական շինարարությունը սոցիալիզմի և պրոլետարական հեղափոխության բոլոր թշնամիների հարձակումներից» (ԲԳԿԻՑ Դաշտային կանոնադրելից):

Բոլոր կապիտալիստական յերկրներում «բանակը ճնշում է բանվորներին, ծառայում է վորպես հենարան տիրողների համար: Իտարբերություն այդպիսի բանակներից, մեր Կարմիր բանակն այն առանձնահատկությունն ունի, վոր նա հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման զենքը, բանվորներին և գյուղացիներին կապիտալիստների և կալվածատերերի լծից ազատագրելու զենքը» (Ստալին): Կարմիր բանակի սկզբնավորությունը, վորպես Հոկտեմբերյան հեղափոխության բանակի, նրա կոփումն ու աճումը քաղաքացիական պատերազմի տարիներին պրոլետարական դիկտատուրայի, ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու համար ոտարերկրյա և ուսական կապիտալիստների ու կալվածատերերի դեմ մղած մարտերում: Կարմիր բանակը սո-

ցիալիզմի պահանջներն և ՌՍՀՄ-ում, խորհրդային իշխանութիւն  
խաղաղութեան քաղաքականութեան հենարանը:

Կարմիր բանակի անխղճի կապն աշխատավորութեան  
հետ—ապացուցն և Կարմիր բանակի դասակարգային էյու-  
թեան, վորը պայքարում և աշխատավորութեան շահերի հա-  
մար, սոցիալիզմի համար: «Հին ժամանակներում, և հենց  
հիմա յեւ կապիտալիստական յերկրներում ժողովուրդը վա-  
խենում ևր և շարունակում և վախենալ բանակից: Բանակի  
և ժողովրդի միջև գոյութիւն ունի պատենչ, վորն անջրպե-  
տում և բանակը ժողովրդից: Մեղ մոտ ընդհակառակը, ժո-  
ղովուրդն ու բանակը կաղմում են մի ամբողջութիւն, մի բն-  
տանիք... Այդպիսի բանակը կունենա ամենամուր թիկունք,  
այդպիսի բանակն անդարտելի յե» (Ստալին):

2. Կարմիր բանակը— համաշխարհային հեղափոխութեան  
բանակն և: Ինտերնացիոնալ (միջազգային) բնութիւթ Կարմիր  
բանակի խնդիրները, վորը պաշտպանում և միջազգային պրո-  
լետարիատի սոցիալիստական հայրենիք ՌՍՀՄ սահմանները  
իմպերիալիստների հարձակումներից:

«Կապիտալիստական յերկրներում բանակները սովորա-  
բար դաստիարակվում են ուրիշ պետութիւնների նկատմամբ  
ատելութեան վողով, ուրիշ յերկրների բանվորների և դյու-  
ղացիների նկատմամբ ատելութեան վողով... Մեր Կարմիր  
բանակի ուժը նրանումն և, վոր նա իր ծննդյան առաջին իսկ  
օրից դաստիարակվում և խտրնացիոնալիզմի վողով, բոլոր  
յերկրների բանվորների նկատմամբ սիրո և հարգանքի վողով,  
յերկրների միջև խաղաղութիւն պահպանելու և հաստատելու  
վողով... Ինտերնացիոնալիզմի վողով դաստիարակված մեր  
բանակը անհամար թվով բարեկամներ ու դաշնակիցներ ունի  
աշխարհի բոլոր մասերում» (Ստալին):

«Կարմիր բանակը հանդիսանում և համաշխարհային պրո-

լետարական հեղափոխութեան ղինված ուժերի ավանգարդը»  
(Ստալին):

3. Համկ(բ)կ— Կարմիր բանակի կազմակերպիչն ու  
առաջնորդն և: Պրոլետարական դիկտատուրայի ղեկավար  
ուժ—Համկ(բ)կ—կազմակերպիչն ու առաջնորդն և Կարմիր  
բանակի: «Կուսակցութիւնը պարծենում և վոր նրան հաջող-  
վեց բանվորները և դյուղացիները ոգնութեամբ ստեղծել աշ-  
խարհում առաջին Կարմիր բանակը, վոր մեծագույն մարտե-  
րում պաշտպանել և բանվորներին և դյուղացիներին: Կու-  
սակցութիւնը պարծենում և, վոր Կարմիր բանակին հա-  
ջողվեց պատվով անցնել մեր յերկրի բանվոր դասակարգի  
և դյուղացիութեան ներքին և արտաքին թշնամիների դեմ  
մղած դաժան մարտերի ծանր ճանապարհը, վոր նրան հաջող-  
վեց ձեռնարկել վորպէս մեծագույն մարտական հեղափոխա-  
կան ուժ՝ իսպրսաի բանվոր դասակարգի թշնամիների և ի  
ուրախութիւն բոլոր ճնշվածների և ստրկացվածների» (Ստա-  
լին): Լենինի, Ստալինի և կուսակցութեան Կենտկոմի դերը  
Կարմիր բանակի ստեղծման, քաղաքացիական պատերազմի  
տարիներին նրա ղեկավարութեան և հաղթանակների ապա-  
հովման գործում: Կուսակցական գորահավաքները և կոմու-  
նիստների դերը քաղաքացիական պատերազմի տարիներին:  
Կուսակցութեան Կենտկոմի և ընկ. ղեկավարութիւնը Կար-  
միր բանակի նկատմամբ ժամանակակից շրջանում:

## II. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՅՎԱՅ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

1. Կարմիր բանակի համարման դասակարգային հի-  
մունքները: «Ձեռքը ձեռքին ՌՍՀՄ պաշտպանութիւնն իրա-  
դրեմքում և միայն աշխատավորների կողմից» (պարտադիր  
զինվորական ծառայութեան մասին օրենքից): Անհարպատ  
տարրերին Կարմիր բանակ չթողնելը, Կարմիր բանակային

զորամասերի դասակարգային միաձուլութունը—ԲԳԿԲ մարտունակութեան հիմքն է. Կարմիր բանակը բանվորների և գյուղացիների զինված միութունն է բանվոր դասակարգի ղեկավարութեամբ: Կարմիր բանակի դասակարգային միաձուլութեան ամրացումը սոցիալիստական շինարարութեան վիթխարի հաղթանակների և հաստատուն սլոճիտարական, բայլևիկյան ղեկավարութեան հիման վրա:

Յուրաքանչյուր կարմիր բանակայինի պարտականությունն է—ամեն կերպ ամրացնել Կարմիր բանակի շարքերի դասակարգային միաձուլութունը: Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է հայտնաբերի խորը դասակարգային աչալըջութուն, յերևան հանի և մերկացնի բանակ սողուկած դասակարգային խորթ տարրերին և անհաշտ հակահարված տա դասակարգային թշնամու յելույթներին:

2. Լենինյան ազգային քաղաքականությունը իրագործումը Կարմիր բանակում: Վեր բանակը հանդիսանում է ժողովուրդների միջև յեղբայրութեան բանակը, ճնշված ժողովուրդներին ազատագրելու բանակը, մեր յերկրի ժողովուրդների ազատութունն ու անկախութունը պաշտպանելու բանակը... Սովորաբար բանակները դաստիարակվում են յին շովինիզմի վոգով, համալուսողականութեան վոգով, ուրիշ ժողովուրդներին հպատակեցնելու վոգով... Մեր բանակն արժատապես տարբերվում է զաղութային ժողովուրդներից: Նրա ամբողջ ելութունը, նրա ամբողջ կառուցվածքը հիմնվում է մեր յերկրի ժողովուրդների միջև բարեկամութունն ամրացնելու վրա, ճնշված ժողովուրդներին ազատագրելու գաղափարի վրա, Սորհրդային Միութեան մեջ մտնող սոցիալիստական հանրապետութեանների ազատութեանն ու անկախութեանը պաշտպանելու գաղափարի վրա... Դրանումն է գրավականն այն բանի, վոր մեր բանակը կրտսիքական մո-

մենտին մեծագույն աջակցութուն կզտնի մեր անծայրածիր յերկրում բնակված բոլոր և ամեն տեսակի աղղութունների միլլիոնավոր մասսաների կողմից» (Ստալին):

Կարմիր բանակի աղղային զորամասերը: Աշխատանքը կարմիր բանակային զորամասերի աղղային փոքրամասնութունների միջև:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պարտավոր է ամրացնել բոլոր աղղութունների աշխատավորների մարտական զաչինքը Կարմիր բանակի շարքերում, անհաշտ պայքար մղել մեծապետական շովինիզմի, տեղական նացիոնալիզմի և հրեատեյութեան (անտիսեմիտիզմի) արտահայտութունների դեմ:

3. Կարմիր բանակի կազմութունը: Յերկրային (տիրիտորիալ) սիստեմի դերը ԽՍՀՄ գինված ուժերի շինարարութեան գործում: Յերկրային սիստեմի յայն և հետևողական կիրառման հնարավորութունները միայն Սորհրդային Միութեան պայմաններում: ԲԳԿԲ կաղղային զորամասերի հատուկ պատասխանատու դերը իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ վրա հարձակման դեպքում:

Սոցիալիստական արդյունաբերութեան աճման և գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման նշանակութունը յերկրային շինարարութեան համար:

Ընդհանուր պարտադիր զինվորական ծառայութուն: Կարմիր բանակի համալրման սիստեմը, ծառայութեան ժամանակամիջոցները: Մինչդիմապային պատրաստութուն, իսկական զինվորական ծառայութուն, պահեստում գտնվելը, արտադրային պատրաստութուն: Աշխատավորութեան ռազմական պատրաստութունը և Կարմիր բանակի ռեզերվ—Պաշր—Ավիաքլիմի դերը:

III. ՊԵՏԿԱԶՄԸ ԵՆՎ ԿՍՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԳԿԲ-ՈՒՄ

(2 ժամ)

1. Կարմիր բանակի պետերի կազմը: Կապիտուլիտական բանակների սպայութան դասակարգային կազմի արմատական տարբերությունը ԲԳԿԲ հրամանատարների և քաղաքախառողների դասակարգային կազմից: Կարմիր բանակի սկսկազմի համայրման սխեմներ: Ռազմա-ուսումնական հիմնարկները ԲԳԿԲ-ում: Կարմիր բանակայինին դերակետիկ ծառայություն թողնելու և ուղղա-ուսումնական հիմնարկներն ընդունելու կարգը: Պետկազմի (կրտսեր, միջին, ավագ և բարձր) դերը մարտական ու քաղաքական սրտոտություն թյունն ամրացնելում, յերկաթե զինվորական կարգապահությունն ամրացնելում: Հրամանատարը—«իր զորամասի վրճառական, հաստատամիտ, համարձակ և մարտական ղեկավարն է» (ԲՉԻՆների քարտուղարների 3-րդ համարանակային խորհրդակցություն վորոշումներից): Հրամանատարը—բարձր որինակ է հանդիսանում կարգապահություն և իր ուստորադրյալների նկատմամբ խստապահանջություն: Հրամանատարի կարգադրությունների անտարկելի կատարում—ԲԳԿԲ կարգապահություն հիմքն է:

Միահրամանատարությունը—Կարմիր բանակի ամրացման հիմնական սկզբունքն է: Քաղաքները, քաղաքականները, կոմիսարները, զնդի հրամանատարի քաղաքականները:

Գունք, զիմիտիա, կորպուս, մարզ, մարդային Հեղ. Ռազմ. Խորհուրդ: ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհուրդ: Ռազմածովային Ժողկոմ ընկ. Վորոշիլովը—Կարմիր բանակի քայլընկյան առաջնորդն է: ԽՍՀՄ Ռազմածովային Ժողկոմ և Հեղ. Ռազմ. Խորհրդի նախագահի տեղակալ և ՊՈՒՌ-ի պետ՝ ընկ. Գամարնիկի կենսազրուցությունը:

2. Կարգապահությունը ԲԳԿԲ-ում: Կարմիր բանակի կանոնադրման կենտրոնացումը: Յերկաթե զինվորական կարգապահությունը—Կարմիր բանակի մարտական ուղիղության հիմքն է: Կարգապահություն դասակարգային կյանքը իրար-ում, նրա սարքերությունը բուրսուպահան բանակների կարգապահությունը: Լենինը Կարմիր բանակի կարգապահության մասին—«և՛ ամբողջապես և անձվիրարար չի ուղնում Կարմիր բանակին, բոլոր ուժերով չի պաշտպանում կարգն ու կարգապահությունը նրանում, նա—դավաճան և և մատնել»: Կարգապահության նշանակությունը մարտական պարագայում: «Եթե ստածենք այն սասին, թե ինչն են վերջըվերջը ընկած այն բանի խորը հիմքում, վսր այդպիսի պատասպան հրաչք տեղի ունեցալ, վսր թույլ ուժասպառ յեղած, հետանաց յերկրը հալթեց ալյսարհի ամենահարուստ յերկրներին, ապա սենք կտեսնենք, վսր այդ—կենտրոնացումն էր, կարգապահությունը և շտպած անձվրությունը» (Լենին): Յերկաթե զինվորական կարգապահության վճռական նշանակությունը խաղաղ սրայթաններում (ներքին կարգ ու կանոնում, ուսուցման մեջ, տեխնիկայի խնամման գործում և այլն): Վորպես ԲԳԿԲ մարտունակության կարևորագույն պայման: Անկարգապահությունը—հիմնական պատճառն է վթարումների, ջարդվածքների, դժբախտ պատահարների:

«Կարգապահություն և կազմակերպվածություն—ահա այն խոսքերը, վորոնք պետք է ամբողջապես համակեն մեր կյանքը: Կարգապահություն և կազմակերպվածություն ալխատանքում, կենցաղում, ուսուցման մեջ, իր հետ ունեցած փոխհարաբերություն մեջ, փողոցում, հասարակական վայրերում իրեն պահելում, հանդատի ժամանակ—ամեն տեղ և ամենուրեք կարգապահություն և կազմակերպվածություն»:

Գրանք մեզ պետք են ինչպես ող» (Վորոշիով) :

Հրամանատարի պարսականութունն և—անչեղորեն պահանջել զինվորական կարգապահության ճիշտ պահպանում և վճռականապես պայքարել կարգապահության ամենանվազ լախտումների դեմ : Հրամանատարի իրավունքները զորամասում կարգապահութունն ամրացնելու գործում : Կարգապահական տուժերը, խրախուսանքները, պարգևները :

«Յուրաքանչյուր կարմիր բանակային պարտավոր և խըստորեն և անչեղ հեղափոխական կարգապահութուն պահպանել և անառարկելիորեն կատարել հրամանատարի բոլոր հրամանները» (Կարմիր բանակայինի հանդիսավոր խոստումից) :

Կարմիր բանակայինի պարտականութունները ռազմական գաղտնիքը պահելում :

#### IV. ԿՈՒՍԲԱՆԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԳԿԻ-ՈՒՄ (2 Ժամ)

1. Կուսակցական քաղաքական աշխատանքը ԲԳԿԻ-ում : Քաղաշխատանքը կարմիր բանակում—դեմք և կարմիր բանակի դասակարգային միաձուլության և սոցիալիստական լուսավորության համար : Կարմիր բանակն առաջնակարգ քաղաքական դպրոց և : Կուսակցական—քաղաքական աշխատանքը—ԲԳԿԻ մարտունակության ամրացման դեմքն և : Կուսակցութունն և ղեկավարում քաղաշխատանքը կարմիր բանակում :

Կուսակցական քաղաքական աշխատանքը ԲԳԿԻ-ում վորպես մարտիկներին կուսակցության գլխավոր գծի շուրջ համախմբելու, ուսուցման տեմպերն ու վորակը բարձրացնելու գեներ : Կուսակցական—քաղաքական աշխատանքի կազմակերպումը : Պետկազմի դերը կուսքաղաքական աշխատանքներում : Քաղմարմինները վորպես կուսքաղաշխատողների ղեկավարներ և կազմակերպիչներ ԲԳԿԻ-ում : ԲԳԿԻ Քաղաքա-

կան վարչությունը : ԲԳԿԻ Քաղվարչության պետ՝ ընկ. Գաժարնիկը :

Կոմունիստական բջիջները կարմիր բանակում և նրանց աշխատանքը : Կոմյերիտական կազմակերպությունները կարմիր բանակում և նրանց աշխատանքը :

Կոմունիստների և կոմյերիտականների խնդիրները վորպես ուսուցման և կարգապահության մեջ առաջավորների : ԲԳԿԻ կոմունիստները—Համկ(բ)Կ մարտական ջոկատն են, վորոնք պայքարում են կուսակցության գլխավոր գծի համար՝ ընդդեմ ոպորտունիզմի բոլոր տեսակներին : Կարմիր բանակայինի խնդիրները բջիջի նկատմամբ և կուսակցության ու կոմսոմոլի մեջ մտնելու կարգը :

Քաղաքական պարագմունքները—կարմիր բանակայինների քաղաքական պատրաստության կարևորագույն ձևն են : Կուսակցական լուսավորություն և նրա խնդիրները :

Ակումբները, լենինյան անկյունները, հասարակական կազմակերպությունները ԲԳԿԻ-ում : Կենտրոնական, մարդային, ղեկիղկական, ղնդային և վաչտային կարմիր բանակային մամուլը : Զինթղթակցական աշխատանքը : Կրոնի դասակարգային ելությունը և հակալրոնական աշխատանքը ԲԳԿԻ-ում :

Կարմիր բանակայինը պետք և ամեն կերպ բարձրացնի իր քաղաքական պատրաստությունը, իրազեկ լինի միջազգային դրության, Սորհրդային Միության կյանքին, կուսակցության և կառավարության վորոշումներին, ակտիվորեն մասնակցի զորամասում տարվող քաղաքական աշխատանքին, կանոնավոր կերպով թերթեր կարդա, ակտիվորեն ողնի քաղղեկին, կուսակցական կազմակերպությանը և կոմսոմոլին :

ԲԳԿԻ մարտիկը—ակտիվ կիրառողն և կուսակցության գլխավոր գծի : Կարմիր բանակի և աշխատավորության կա-

ալի ամրացումը — կուսքադաշինատանքի կարևորագույն խնդիրն է: Աշխատավորութեան հետ կարմիր բանակի կապի ձևերը: Բանվորական շեֆությունը և նրա նշանակությունը: Ո՞վ է տվյալ զորամասի շեֆը և շեֆական աշխատանքը զորամասում: Կարմիր բանակի պարտականությունները՝ աշխատավորութեան հետ կապի ամրացման դործում:

2. Սոցիալիստական մրցակցութունը և ինֆանտիստությունը կարմիր բանակում: Սոցմրցակցությունը—կարևորագույն զենք է սոցիալիստական շինարարության և աշխատավորության վերադաստիարակման համար: Սոցմրցակցության նշանակությունը դործարանում և կոլխոզում: Սոցմրցակցությունը բանակում: Կարմիր բանակայինների ամբողջ յեռանդի, ամբողջ խանդավառության կենտրոնացման անհրաժեշտությունը՝ զորամասի մարտական և քաղաքական պատրաստության ամրացման վրա: Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը վորպես կարևորագույն զենք՝ մարտական ու քաղաքական պատրաստության տեմպերը ու վորակի բարձրացման և զորմասի դասակարգային միաձուլության համար: Սոցմրցակցության ձևերն ու սրբիկաները կարմիր բանակում, հարվածայնության դրությունը վաչտում, գլնդում, բանակի մյուս զորամասերում. զենդի լավագույն հարվածայինների ազդանունները: Պայքար մարտական ուսուցման սլաններ կատարման և գերակատարման համար: Պետկազմը—դեկավարն է սոցմրցակցության: Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների դերը սոցմրցակցության մեջ:

Ուսցիտնալիզատորական աշխատանքը և նրա նշանակությունը: Ինքնաքննադատությունը կարմիր բանակում վորպես զենք ԲԳԿԻ մարտունակությունն ամրացնելու համար: Ինքնաքննադատությունը կարմիր բանակում կիրառելու առանձ-

նահատկությունները և նրա նշանակությունը զորամասի մարտունակության ամրացման և դասակարգային միաձուլության համար:

### ԿՈՆՏՐՈՒ ԶՄՐՑԵՐԻ

1. Ի՞նչումն է կարմիր բանակի տարբերությունը կապիտալիստական բանակներից:

2. Ի՞նչու մենք կարմիր բանակն անվանում ենք համաշխարհային հեղափոխության բանակ, բոլոր յերկրների բանվորների բանակ:

3. Ի՞նչպիսին է կուսակցության դերը կարմիր բանակի կազմակերպման և քաղաքացիական պատերազմի տարիներին ու ժամանակակից շրջանում նրա դեկավրման դործում:

4. Ո՞վ և ինչու է յերկրված կարմիր բանակի շարքերում լինելու իրավունքից:

5. Ի՞նչպես է իրադործվում լենինյան ազդային քաղաքականությունը կարմիր բանակի շինարարության մեջ և ի՞նչպիսին են կարմիր բանակայինների խնդիրները կարմիր բանակի շարքերում բոլոր ազգությունների աշխատավորների համախմբվածությունն ամրացնելում:

6. Ի՞նչումն է կարմիր բանակի տեղակազմի արմատական տարբերությունը բուրժուական բանակների սպայական կազմից:

7. Ի՞նչպիսին է հրամանատարի դերը զորամասում:

8. Ի՞նչով է տարբերվում ԲԳԿԻ կարգապահությունը բուրժուական բանակների կարգապահությունից:

9. Ի՞նչու է կարմիր բանակում անհրաժեշտ յերկաթի զինվորական կարգապահություն:

10. Ի՞նչպիսին է տեխնիկայի դերը ժամանակակից մարտում:

11. Ի՞նչ նշանակութիւն ունի մարտում զորքի բոլոր տե-  
սակների սերտ համագործակցութիւնը և ի՞նչում պետք է ար-  
տահայտվի այդ համագործակցութիւնը:

12. Ի՞նչպիսիք են ԲԳԿԻ խնդիրները տեխնիկայի տիրա-  
պետման դործում:

13. Ի՞նչ նշանակութիւն ունի կուսակցական-քաղաքա-  
կան աշխատանքը Կարմիր բանակում և ո՞վ է ղեկավարում  
այդ աշխատանքը:

14. Ի՞նչպիսին և սոցմրցակցութեան դերը Կարմիր բանա-  
կում:

15. Ի՞նչպիսին է ինքնաքննադատութեան դերը Կարմիր  
բանակում և ի՞նչումն է նրա գործադրման առանձնահատկու-  
թիւնները ԲԳԿԻ-ում:

16. Ի՞նչումն է բանակի և աշխատավորութեան փոխհա-  
բարեբուրութեան տարրերութիւնը մեզ մոտ և կապիտալիստա-  
կան յերկրներում և ի՞նչպէս պետք է վերաբերվի աշխատավո-  
րութեանը յուրաքանչյուր կարմիր բանակային:

Թեման մշակելու հետևանքով կարմիր բանակայինը բա-  
ցի վերոհիշյալ կոնտրոլ հարցերին պատասխանելուց, պետք է

1) Իմանա պարտադիր զինվորական ծառայութեան մա-  
սին որենքի (կարմիր բանակայինի ծառայութեանը վերաբե-  
րող մասի) 1-ին և 14-րդ բաժինների հիմնական դրութիւն-  
ները,

2) Յուրացնի հանդիսավոր խոստման տեքստը.

3) Իմանա կուսակցութեան և կոմսոմոլի կանոնադրու-  
թիւնների այն կետերը, վորոնք վերաբերում են կարմիր բա-  
նակայիններին կուսակցութեան և կոմսոմոլի մեջ ընդունե-  
լուն:

Թեմայի մշակման պրոցեսում յուրաքանչյուր կարմիր  
բանակային պետք է տեսրակի մեջ գրի առնի—

1) 3-րդ կոնտրոլ հարցի պատասխանը.

2) Կարմիր բանակի դասակարգային ելութեան մասին  
քաղվածքներ Դաշտային կանոնադրելից և ընկ. Ստալինի ճա-  
ռից, վորոնք բերված են 1-ին թեմայի 1-ին հատվածում և  
քաղվածք Դաշտային կանոնադրելից՝ Կարմիր բանակի ին-  
տերնացիոնալ խնդիրների մասին (II հատված, 1-ին կետ).

3) քաղվածք ԲԳԿԻ կարգապահութեան մասին ընկ. 1. և-  
նինի ցուցումից, վորը բերված է ներկա թեմայի III հատվա-  
ծի 1-ին կետում.

4) Կարմիր բանակի կառավարման սխեման (Հեղ. Ռազմ.  
Սորհրդից մինչև վաշտը).

5) Թվեր (հասարակ դիպրամա) Կարմիր բանակի պետ-  
կադմի դասակարգային կադմի մասին.

և բացի այդ—  
6) կարճ թղթակցութիւններ գրել իլիչևկային թեմայի  
հարցերից մեկն ու մեկի շուրջ (կարգապահութեան մասին,  
բջիջի մասին և այլն):

40765-67

17. ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ (4 ժամ)

ա) Թեմայի բովանդակութիւնը

I. ՏԵԽՆԻԿԱՆ ԲՈՒԹՅՈՒՆԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ  
ԲԱՆԱԿՈՒՄ

1. Տեխնիկայի դերը ժամանակակից պատերազմում:  
Տեխնիկան 1914—18 թ. իմպերիալիստական պատերազմում:  
Բուրժուազիայի ձգտումը՝ տնտեսութեան ամբողջ տեխնիկա-  
կան հղորութիւնը, գիտութեան և տեխնիկայի բոլոր նվա-



ճումներն ողտադործելու սպազա իմպերիալիստական պատերազմում: Ժամանակակից կապիտալիստական բանակները հաղեցվածութունը տեխնիկական միջոցներով (ղնդացիք, հրետանի, ավիացիա, տանկեր, քիմիա, մոտորային-մեխանիկական զորամասեր և այլն): Տեխնիկայի բանակական և վորակային աճումը—ղնդացիքի և հրետանու հեռավորութունն ու արագաձգութունը, սավառնակների բեռնատարության աճումն ու զործողության շառավիղի մեծացումը, տանկերի արագաշարժության և սպառազինման աճումը և այլն: Ռադմական տեխնիկայի աճման արդեցությունը բանակների կազմակերպման ձևերի և նրանց տակտիկայի վրա (ավիացիա, քիմիա, տանկեր և այլն):

2. Տեխնիկան կապիտալիստական բանակներում: Ժամանակակից բանակների մասսայական բնույթը: Հակասութունները բանակների մասսայական բնույթի և կապիտալիստական բանակների զինվորների դասակարգային գիտակցության միջև: Իմպերիալիստների վախը, վոր մասսայական բանակները կարող են քաղաքականապես անհուսալի լինել:

Բուրժուազիան ձգտում է ամրացնել բանակը ջոկովի ֆաշիստական կազմերով և տեխնիկայով:

Կապիտալիստական բանակների մասսայական բնույթի անխուսափելիությունը, այդ բանակների շարքերը ինդուստրիալ պրոլետարիատի հոծ մասսաներ զրավելու անխուսափելիությունը, ուղմական ժամանակվա բանակի սերտ կապը խոշոր արդյունարերական կենտրոնների և դասակարգային պայքարի բուռն աճման հետ—նախադրյալներ են իմպերիալիստական պատերազմի քաղաքացիականի վերածելու համար: Բուրժուազիայի միջոցառումները իր զինված ուժերն ամրացնելու համար. հրամանատարական կազմի դասակարգային ընտրությունը, վարձու զինվորների թվի ավելացումը

բանակում, ֆաշիստական ռեզերվների ստեղծումը, զինվորների քաղաքական մշակումը և այլն: Միջոցառումներ՝ լիկուենքի ամբացման համար (ֆաշիստական և սոցիալ-ֆաշիստական մարտական կազմակերպութուններ, արդյունարերության միլիտարիզացիա, որևէքներ՝ պատերազմի ժամանակ զործազույնների մասին և այլն):

3. ԽՍՀՄ ինդուստրացումը և ԲԳԿԲ տեխնիկական հագեցումը: Յերկրի ինդուստրացման և դյուզանտեսության կոլեկտիվացման հակայական հաջողութունները, ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը—Կարմիր բանակի տեխնիկական հաղեցման վճռական պայմաններն են: Յերկրի ինդուստրացումն ու դյուզանտեսության կոլեկտիվացումը ստեղծում են ամուր, հարաճուն բազա՝ նոր, առաջավոր ուղմական տեխնիկայով Կարմիր բանակի հաղեցման համար: Մեր շինարարության արագ տեմպերը—վճռական նախադրյալ է Կարմիր բանակի տեխնիկական հաղեցվածությանը տեխնիկապես առաջավոր կապիտալիստական բանակների մակարդակին բարձրացնելու համար: Ինդուստրացման արագ տեմպերի անհրաժեշտությունը: Արդյունարերության առաջավոր ճյուղերի զարգացման նշանակությունը ԲԳԿԲ տեխնիկական հզորության ամբացման և վերելքի համար (մետաղ, մեքենաշինարարություն, ավիոշինարարություն, ավտո-տրակտորաշինարարություն, քիմիա և այլն):

Մարդը և տեխնիկան Կարմիր բանակում: Ի տարբերություն բուրժուական բանակներից, տեխնիկայի և մարդու հակասության բացակայութունը Կարմիր բանակում: Մարտիկների դասակարգային գիտակցութունը—տեխնիկայի տիրապետման զրավականն և: Կարմիր բանակի դասակարգային գիտակցության և բարձր տեխնիկական մարդավածու

թյան նշանակութիւնը թշնամու նկատմամբ հաղթանակ տա-  
նելու համար :

Առաջալօր տեխնիկայում հաղեցումը բաղմապատկած  
կարմիր բանակախիւնների բարձր դասակարգային դիտակցու-  
թյան, դա—կարմիր բանակի հսկայական առաջելութիւնն է  
սպառազարտութեամբ :

## II. ԶՈՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ (2 ժամ)

1. Զորքերի տեսակների համագործակցութիւնը : ԽՍՀՄ  
զինված ուժերի կազմն ու ԲԳԿԻ կառուցվածքը՝ այն պահանջ-  
ների կապակցութեամբ, վորպիսիք առաջադրում է ժամանա-  
կակից մարտի բնույթը և ԲԳԿԻ տեխնիկական հագեցվածու-  
թյունը : Ընդհանուր տեղեկութիւններ զորքերի տեսակներին  
և նրանց կազմութեան մասին :

Զորքերի բոլոր տեսակների համագործակցութիւնը—  
մարտում հաղթանակ տանելու հիմքն է : Զորքերի բոլոր տե-  
սակների պարտականութիւնը՝ զորքի հիմնական տեսակ հե-  
տեակի նկատմամբ և հետեակի պարտականութիւնը զորքե-  
րի մյուս տեսակների նկատմամբ : Յերկաթե զինվորական  
կարգապահութիւնը—զորքերի բոլոր տեսակների համագոր-  
ծակցութեան հիմքն է :

2. Տեխնիկայի տիրապետման խնդիրը : Ընկ. Ստալինի՝  
«Բարյալեիկները պետք է տիրապետեն տեխնիկային» յոգունդը  
և նրա նշանակութիւնը կարմիր բանակի համար : «Մեզ վրա  
յեղած հարձակմանը մենք պարտաւոր ենք հակադրել մեր  
յերիաթե, զերազանց սովորած, քաղաքականապես կայուն,  
լավ պիմված բարյալեիկյան բանակ» (Վորոշիլով) : Կրտսեր  
հրամանատարի և մարտիկի կարևորագույն խնդիրները տեխ-  
նիկային տիրապետելում . իր զենքին, նրա նյութական մասին

և մարտական հատկութիւններին կատարելապես տիրապե-  
տելը, գորքի մյուս տեսակների զենքին ծանոթ լինելը և նրա  
հետ համադրածակցել կարողանալը, հակառակորդի դեմ  
պայքարել իմանալը, զենքի և մեքենաների խնամումը, վթա-  
րումների լիակատար լիկվիլդացիան :

Կարգապահութիւնը և տեխնիկան : Թույլ կարգապա-  
հութիւնն ունեցող զորամասը չի կարող տիրապետել տեխնի-  
կային : Անկարգապահութիւնը—հիմնական պատճառն է  
վթարումների :

Տեխնիկային տիրապետելու հարցը և զորամասի մարտա-  
կան պատրաստութիւնը : Հրաձգային պատրաստութիւնը և  
նրա նշանակութիւնը : Տակտիկական պատրաստութիւնը  
վորպէս մարտական պատրաստութեան առանցք : Ֆիզիկական  
և շարային պատրաստութիւն : Տակտիկական և համադր-  
ային պատրաստութիւն : Մանյովրաները : Ուսուցման պլա-  
նը և աստիճանները :

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսին է տեխնիկայի դերը ժամանակակից պա-  
տերազմում :

2. Ի՞նչու սպառազարտութեամբ բանակները մասսայա-  
կան կլինեն :

3. Ի՞նչպէս են տեխնիկայով հագեցվում կապիտալիստա-  
կան բանակները :

4. Ի՞նչումն են կայանում հակասութիւնները տեխնիկա-  
յի և մարդու միջև կապիտալիստական բանակներում :

6. Ի՞նչու կարմիր բանակում տեխնիկայի և մարդու միջև  
հակասութիւններ չկան :

7. Ի՞նչ նշանակութիւն ունի ժամանակակից մարտում  
զորքի բոլոր տեսակների համագործակցութիւնը :

Տ. Ի՞նչպիսիք են մարտիկի առաջ կանգնած խնդիրները տեխնիկայի տիրապետման դործում :

9. Ի՞նչ նշանակություն ունի վթարումների դեմ պայքարի և տեխնիկայի տիրապետման համար յերկաթի գլնվորական կարգապահությունը :

գ) Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակայինը պետք է—

1) գրավոր պատասխաններ տա 1-ին, 5-րդ և 8-րդ կոնսուլ հարցերին .

2) գրի առնել ժամանակակից պատերազմում տեխնիկայի գերը բնորոշող հիմնական թվերը .

3) ձևակերպել կոմսոմոլի համագումարում տեխնիկայի մասին ընկ. Վորոշիլովի արտասանած ճառի քաղվածքից դրսևվոր միտքը .

4) կարճ թղթակցություն գրել իլլյուկայում տեխնիկայի և տեխնիկային տիրապետելու մասին (ղեկի խնամում, նյութական մասի ուսումնասիրություն և այլն) :

### III. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԽՐՀՊԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (10—12 ժամ)

ա) Թեմայի բովանդակությունը

#### I. ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ (2 ժամ)

1. Բուրժուական պետությունը—կապիտալիստների դասակարգի տիրապետության գեմքն է : Ժամանակակից կապիտալիստական հասարակության յերկու հիմնական դասակարգերը—պրոլետարիատը և բուրժուազիան : Բուրժուական պետությունը—բուրժուազիայի և պրոլետարիատի դասա-

կարգային տիրապետության գեները : Բուրժուազիայի քաղաքական տիրապետության տնտեսական հիմքը—արտադրության կարևորագույն և վճռական միջոցներին տիրապետելը : Պետական ապարատը (պարլամենտ, բանակ, վստտիկանությունը, բանտերը, դատարանները և այլն) բուրժուազիայի կողմից պրոլետարիատի դասակարգային կեղեքման գեներն է :

2. Բուրժուական դեմոկրատիան և ֆաշիզմը—բուրժուազիայի տիրապետության մեքոդներն են : Բուրժուական դեմոկրատիան—բուրժուազիայի դիկտատուրայի քաղակված ձևն է : «Բուրժուա-դեմոկրատական իրավունքն ու աղէեցությունը... մասսաներին խարելու և ստրկացնելու միջոց են» (Կոմինտերնի ծրագրից) : «Կապիտալիստները միշտ «աղատություն» են անվանել հարուստների համար շահագործման աղատությունը, բանվորները համար քաղցից մեռնելու աղատությունը» (Լենին) :

Կապիտալիզմի հետպատերազմյան ընդհանուր ճղնածամը և մի շարք յերկրներում բուրժուազիայի անցումը՝ դիկտատուրայի քողարկված «դեմոկրատական» ձևերից անմիջական բացահայտ ձևերի—կառավարման Փաշիստական մեքողները : Բուրժուական դեմոկրատիայի և Փաշիզմի դասակարգային եյության միասնությունը : Հարմարվելով քաղաքական պարագայի փոփոխություններին, բուրժուազիան ողտտործում տիրապետության մերթ մեկ («դեմոկրատական») մերթ մյուս (բացահայտ Փաշիստական) մեքողը :

Վերջին սարիններում միջաղգային տնտեսական ճղնածամի և հեղափոխական շարժումների աճման հետ կապված, բուրժուական իշխանության դասակարգային բնույթը դերսևորվում է ավելի ու ավելի մերկացված ձևով : Բուրժուազիան ավելի ու ավելի յե դիմում դիկտատուրայի բացահայտ ձևերին, Փաշիզմին :

Ճաշիզմի զլխավոր խնդիրն ե—անող հեղափոխական շարժման և նրա ավանդարդ կոմունիստական կուսակցութեան ծախսախումբը: Փաստեր, վորոնք պատկերում են բուրժուական պետութեան Փաշխտական քաղաքականութեանը և սրա հետևանքները աշխատավորութեան համար (Լեհաստան, Իտալիա, Գերմանիա):

Սոցիալ-Փաշիզմը—կապիտալիստների տիրապետութեան զլխավոր պատվարն է, նրանց հավատարիմ հենարանը բանվոր դասակարգի մեջ: «Սոցիալ-դեմոկրատիայի հիմնական դերը կայանում է... իմպերիալիզմի դեմ պրոլետարիատի մղած պայքարի համար անհրաժեշտ մարտական միասնութեան խզումը» (Կոմինտերնի ծրագրից): Սոցիալ-դեմոկրատիայի ակտիվ դավաճանական դերը Փաշխտական դիկտատուրայի պատրաստման և իրագործման ասպարիզում:

«Կապիտալիստական յերկրներից մեծ մասում խոշոր բուրժուազիան կազմակերպում է քաղաքացիական պատերազմի Փաշխտական ջոկատներ, սխտեմ է դարձնում բաղաքական բանդիտիզմը, սպիտակ տերրորը, քաղաքական բանտարկյալներին տանջելը, պրովակացիաները, կեղծադրերը, դործազուլավորների և ցուցարարների գնդակահարութեանները, բանվորական կազմակերպութեանների ցրումն ու ավիրումը: Միաժամանակ բուրժուազիան բնավ չի հրաժարվում ոգտագործելու պարլամենտը և սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանների ծառայութեանը մասսաներին խաբելու համար» (Կոմինտերնի Գործկոմի 12-րդ պլենում):

3. Պրոլետարիատի վերաբերմունքը պետութեան նկատմամբ: Բանվոր դասակարգը ամենահեռուդական հեղափոխական դասակարգն է: Միայն նա կարող է զլխավորել բոլոր աշխատավորների պայքարը՝ կապիտալի լուծը տապալելու համար: Բանվոր դասակարգը—կապիտալիստական կարգի

գերեզմանավորն է: Համաշխարհային բանվոր դասակարգի արմատական խնդիրն է—կապիտալիստների իշխանութեան տապալումը, բուրժուական պետական տապալումը և «նրա փոխարինումը պրոլետարական իշխանութեան նոր մարմիններով» (Կոմինտերնի ծրագրից):

Սյդ խնդիրը կարելի չէ լուծել միայն զինված ապստամբութեան և պրոլետարական հեղափոխութեան ճանապարհով:

Սոցիալ-դեմոկրատական պնդումների հակահեղափոխական լինելը խաղաղ կերպով կապիտալիզմից սոցիալիզմի անցնելու մասին:

Պրոլետարիատն ձգտում է իր դիկտատուրան հաստատել վոչ թե նրա հավերժացման, այլ դասակարգերի վերացման համար, անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցելու համար:

Կոմունիստական հասարակակարգում պետութեանը կմահանա: Հասարակութեանը կարիք չի ունենա պետական մեքենայի:

4. Պրոլետարիատի դիկտատուրան: Հոկտեմբերյան հեղափոխութեանը վոչնչացրեց բուրժուական պետութեանը մեր յերկրում և ստեղծեց պետութեան նոր տիպ—Սորհրդային պետութեան: Սորհրդային պետութեանը—պրոլետարական դիկտատուրայի պետութեանն է: Նա ստեղծված է կապիտալի դեմ հեղափոխական պայքարում բոլոր աշխատավորների առաջնորդ բանվոր դասակարգի կողմից: Պրոլետարիատի դիկտատուրան—կապիտալիզմից սոցիալիզմի անցման շրջանի պետութեանն է: «Պրոլետարիատի դիկտատուրան, յեթե այդ արտահայտութեանն ասենք ավելի հասարակ լեզվով, նշանակում է ահա թե ինչ—միայն վորոշ դասակարգ և հենց քաղաքի ու ընդհանրապես Փարրիկա-դործարանային, արդյունաբերական բանվորներն են ի վիճակի ղեկավարելու

աշխատատիրներին և շահագործվողներին ամբողջ մասսային հաղթանակը պահելու և ամրացնելու համար մղվող պայքարում, նոր, սոցիալիստական հասարակարգ ստեղծելու գործում, դասակարգերի լիակատար վոչնչացման համար մղվող պայքարում» (Լենին) :

Մարքսն ու Ենգելսը—ստեղծողներն են պրոլետարական դիկտատուրայի ուսմունքի : Լենինը—հանճարեղ շարունակողը նրանց ուսմունքի, վորը հարստացրել և և զարգացրել և այդ ուսմունքը նոր Եսրիսայի պայմաններում, կազմակերպվելով՝ աշխարհում առաջին բանվորական պետութայն : Ստալինը—շարունակողն և Մարքսի—Լենինի :

Պրոլետարական դիկտատուրայի յերեք կողմերը—«1) պրոլետարիատի դիկտատուրան որենքով չսահմանափակված բռնութայն և կապիտալիստների և կալվածատերերի նկատմամբ, 2) պրոլետարիատի ղեկավարութայնը գյուղացիութայն նկատմամբ և 3) սոցիալիզմի շինարարութայնն ամբողջ հասարակութայն նկատմամբ» (Ստալին) :

## II. ԽՈՐՀՐԴՅՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Ե (2 Ժամ)

1. Պրոլետարիատի դիկտատուրան—պրոլետարիատի դասակարգային պայքարն և բուրժուազիայի դեմ : Շահագործող դասակարգերը կամավոր կերպով չեն զիջում իշխանութայնը : Պրոլետարիատի դիկտատուրան—պրոլետարիատի դասակարգային պայքարի շարունակութայնն և բուրժուազիայի դեմ նոր պայմաններում : Հեղափոխութայն բոլոր շրջաններում բանվոր դասակարգն ու նրա կուսակցութայնը պայքարել և ղեկավարել են աշխատավորութայն պայքարը շահագործող տարրերի դեմ : Չինված պայքարը շահագործող դասակարգերի դեմ քաղաքացիական պատերազմում : Ապա-

կուլակացումը քաղաքացիական պատերազմի շրջանում : Գուպիտալիստական տարրերի սահմանափակման և վտարման քաղաքականութայնը : Համատարած կուլեկտիվացումը և կուլակութայն սահմանափակման և վտարման քաղաքականութայնից շրջադարձը 1929 թվին դեպի կուլակութայն վորպես դասակարգի վոչնչացման քաղաքականութայնը համատարած կուլեկտիվացման հիման վրա : կուլակութայն վորպես դասակարգ լիկվիդացիայի ավարտումը ԽՍՀՄ վճռական շրջաններում : «Ով—ում» հարցի անդառնալի լուծումը հողուտ սոցիալիզմի՝ յերկրի ներսում : ԽՍՀՄ վերջնականապես հաստատվել և զարգացման սոցիալիստական ճանապարհի վրա :

Դասակարգային թշնամու կատաղի դիմադրութայնը սոցիալիստական հարձակմանը և այդ պայքարի ձևերը : Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը—«...կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիան, դասակարգային տարբերութայններ և շահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացում (17-րդ կուսկոնֆերանսի բանաձևից) :

2. Բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիութայն հետ : Բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիութայն աշխատավոր մասսաների հետ՝ ուղղված կուլակութայն, կապիտալիզմի դեմ պայքարին, սոցիալիստական հասարակութայն կառուցելուն, ունենալով այդ դաշինքում բանվոր դասակարգի ղեկավար դերը—ահա պրոլետարիատի դիկտատուրայի բարձր սկզբունքը :

Բանվոր դասակարգի և գյուղացիութայն դաշինքի հարցը պրոլետարական պետութայն գոյութայն զանազան շրջաններում : Հոկտեմբերի շրջանում և անմիջապես նրանից հետո (մինչև 1918 թվի աշնանը)—դաշինք չբալորութայն հետ՝ չեղոքացնելով միջակին, ընդդեմ ամբողջ բուրժուազիայի :

Պրոլետարական դիկտատուրայի ամրապնդումից հետո (1918 թվի աշնանից)—անցում դեպի չքավորի վրա հենվելու, միջակի հետ դաշնակցելու և ընդդեմ կուլակի՝ քաղաքականությանը: Համատարած կոլեկտիվացման հաջողութունները, պրոլետարական դիկտատուրայի համար գյուղում նոր հիմնական հենարանի— կոլխոզային գյուղացիության ստեղծումը, վորը դարձել է հողագործության կենտրոնական դեմքը, և այդ հիման վրա բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ու այդ դաշինքում բանվոր դասակարգի ղեկավար դերի հսկայական ամրացումը:

3. Համկ(բ)Կ պրոլետարական պետութայն տաջնորդն է: Համկ(բ)Կ—բանվոր դասակարգի ավանգարդն է: Համկ(բ)Կ պրոլետարական պետութայն առաջնորդն է: «Առանց կուսակցության, վորպես հիմնական ղեկավար ուժի, հնարավոր չէ պրոլետարիատի վորեւէ չափով յերկարատե և ամուր դիկտատուրան» (Ստալին):

Կուսակցության կողմից պրոլետարական պետության ղեկավարման սիստեմը մասսայական պրոլետարական կազմակերպությունների ոգնությամբ և նրանց միջոցով—պրոֆմիտիւթյուններ, խորհուրդներ, կոոպերացիան, յերիտմիւլություններ և այլն: Այդ կազմակերպությունների դերը կուսակցության կողմից բանվոր դասակարգին և աշխատավորությանը ղեկավարելու գործում: «Կուսակցությունն իրագործում է պրոլետարիատի դիկտատուրան: Բայց նա այդ իրագործում է վոչ անմիջականորեն, այլ պրոֆմիտիւթյունների ոգնությամբ, խորհուրդների և նրանց ձուղավորումների միջոցով: Առանց այդ «հազորդիչների» վորեւէ չափով ամուր դիկտատուրա անհնարին կլիներ» (Ստալին):

Կուսակցության պայքարը ոպորտունիզմի դեմ՝ մեր յերկրում պրոլետարական դիկտատուրան ամրացնելու հա-

մար: Կուսակցության պայքարը տրոցկիզմի դեմ, վորը դարձել է այժմ հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը: Կուսակցության պայքարը ժամանակակից շրջանի գլխավոր վտանգ աջ ոպորտունիստների դեմ, վորոնք գլորվել են կուլակային հակահեղափոխության դիրքերը: Կուսակցության պայքարը «ձախ» ոպորտունիստների դեմ, վորոնք փորձել և փորձում են պրակտիկայում վերածնել տրոցկիստական վերաբերմունքը գյուղացիության նկատմամբ և գործնականում ոգնում են աջ ոպորտունիստներին:

### ՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(2 ժամ)

1. Պրոլետարական դեմոկրատիան: Պրոլետարական և բուրժուական պետության միջև յեղած արմատական տարբերությունը... «Մինչև այժմ գոյություն ունեցած բոլոր դասակարգային պետությունները հանդիսացել են շահագործող փոքրամասնության դիկտատուրան շահագործվող մեծամասնության վրա, այն ինչ պրոլետարական դիկտատուրան հանդիսանում է շահագործվող մեծամասնության դիկտատուրան շահագործող փոքրամասնության վրա» (Ստալին):

Սորհրդային պետությունը—դ՛եմոկրատիայի բարձրագույն ձևն է, պրոլետարական դեմոկրատիան: Պետության դասակարգային բնույթի ընդունումը և շահագործողների ճնշման անհրաժեշտությունը բնակչության հսկայական մեծամասնության շահերի համար: Շահագործողներին քաղաքական իրավունքներից զրկելը: Ամենալայն մասսաներին պետության կառավարման ներգրավելը, նրանց ակտիվ մասնակցությունը հասարակական բոլոր գործերում—տնտեսական, ընդհանուր քաղաքական, ռազմական, և կուլտուրական:

Բուրժուական կուսակցությունների, բուրժուական մա-  
մուլի, հակահեղափոխական գործունեությունների արգե-  
լումը:

Ամբողջ խորհրդային պետական ասպարատը—խորհրդա-  
յին որդանները, միլիցիան, մամուլը, դպրոցները և այլն—  
ծառայում են աշխատավորների շահերին: Պայքարը բյուրո-  
կրատիզմի դեմ: Ինքնաքննադատությունը վորպես մեթոդ  
պրոլետարական դեմոկրատիայի: Սոցմրցակցությունն ու  
հարվածայնությունը: Խորհրդային դեմոկրատիան դա—աչ-  
խատավոր մասսաների դեմոկրատիան է, դեմոկրատիա՝ ընդ-  
դեմ շահագործողների:

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2. Ինչպես է կառուցված խորհրդային իշխանությունը:  
Խորհրդային սահմանադրությունը—ԽՍՀՄ հիմնական որեն-  
քն է, ընդունված ԽՍՀՄ խորհուրդների 2-րդ համագումարի  
կողմից:

Խորհուրդները պետական իշխանության որդաններն են,  
պրոլետարական դիկտատուրայի որդանները մեր յերկրում:  
Խորհուրդներում ընտրելու կարգը: Շահագործական տար-  
րերին խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրա-  
վունքից զրկումը: Բանվորներից և աշխատավոր դուռապի-  
ներից խորհուրդներում ներկայացուցիչներ ունենալու նոր-  
մաները և խորհուրդներում բանվոր դասակարգի դեկավար  
գերի ապահովումը: Գաղաքային և դուռապիական խորհուրդ-  
ները, նրանց Փունկցիաները: Սեկցիաները, պատղամավո-  
րական խմբակները ձեռնարկություններում: Երջաններ և  
մարզեր, չրջանային և մարդային գործկոմներ: Խորհուրդ-  
ների հանրապետական համագումարները, հանրապետու-  
թյունների կենտրոնացումներն ու ժողովուխորհները:

ԽՍՀՄ: Ի՞նչ հանրապետություններ են մտնում ԽՍՀՄ  
մեջ: ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմինները: ԽՍՀՄ  
կենտրոնացումը, նրա կառուցվածքը—Միութենական խոր-  
հուրդ և Աղղությունների խորհուրդ: ԽՍՀՄ ժողովուխորհ:  
Համամիութենական և միացյալ ժողովմասններ: ԽՍՀՄ պետ-  
նիչն ու դրոշակը:

Ընկ. Կալինինը—ՌՖՍՍՀ կենտրոնացումի նախագահն է  
և ԽՍՀՄ կենտրոնացումի նախագահներից մեկը: Ընկ. Մուր-  
տովը ԽՍՀՄ ժողովուխորհի նախագահ:

3. Կարմիր բանակայինը—Խորհրդային Միության քա-  
ղաքացի յե: Ձինվորների քաղաքացիական իրավունքների  
սահմանափակում և այդ իրավունքներից զրկումը բուրժու-  
ական բանակներում: Կարմիր բանակում «զինծառայողները  
և զինապարտները զինվորական ծառայությունն անցնելու  
ամբողջ ժամանակում ոգտվում են աշխատավորների տըր-  
վող բոլոր լիակատար իրավունքներով» (պարտադիր զինվո-  
րական ծառայության մասին որենքը):

Կարմիր բանակայինն իրավունք ունի ընտրելու և ընտ-  
րվելու խորհուրդներում, մասնակցելու համագումարների,  
կոնֆերանսների, ժողովների, հասարակական կազմակեր-  
պությունների աշխատանքներին և այլն:

Խորհրդային իշխանության կողմից կարմիր բանակային-  
ներին և նրանց ընտանիքներին տրվող արտոնությունները:

Հեղափոխական օրինականության մարմինները Կարմիր  
բանակում: Ռազմական դատախաղություն, ռազմական տրի-  
բունալ և նրանց խնդիրը օրինախախտումների դեմ և յերկա-  
թե զինվորական կարդապահության համար մղվող պայքա-  
րում:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է լինի ԽՍՀՄ  
գիտակից և ակտիվ քաղաքացի, ակտիվորեն մասնակցի

յերկրի հասարակական, քաղաքական կյանքին, ամեն կերպ  
ոգնի կուսակցութեանն ու Սորհրդային իշխանութեան՝ նրանց  
աշխատանքում :

#### IV. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (4 ժամ)

1. Խորհուրդների աշխատանքը: Սորհուրդները—կուսակցության գլխավոր գծի կիրառողներն են: Սորհուրդների դերն ու խնդիրները սոցիալիստական վերակառուցման շրջանում, վորպես աշխատավոր մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու գենը՝ սոցիալիստական շինարարութեան բայլելիկյան տեմպերի համար մղվող պայքարում: Սորհուրդները, համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակութեանը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականութեանն անցկացնելում: Պայքարն օպորտունիզմի դեմ, դասակարգային թշնամունկատմամբ հաշտվողականութեան դեմ, Վսորհրդային աշխատանքի պրակտիկայում:

Քաղաքային և գյուղական խորհուրդների խնդիրները Ստալինի վեց պայմանների կատարման և կոլսոդների կազմակերպչական-տնտեսական ամրացման համար մղվող պայքարում: Քաղաքային և գյուղական խորհուրդների խնդիրները կարևորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաներ անցկացնելում—գյուղատնտեսական հարկի հավաքում, հացամթերում, ցանքային ու բերքահավաքման կամպանիա և այլն: Սորհուրդները խնդիրը խորհրդային առևտրի ծավալման գործում:

Սորհուրդների խնդիրները բյուրոկրատիզմի և խորհրդային ասպարատի թերութեանների դեմ մղվող պայքարում: Բյուրոկրատիզմի դասակարգային արմատները և նրա դեմ պայքարի մեթոդները—պրոլետարական դեմոկրատիայի և

ինքնաքննադատութեան հետևողական կիրառումը, բանվորների մասսայական ներգրավումը պետական կառավարման գործի մեջ (բանվորական շեֆութեան, ապարատի հոտում, բողոքների բյուրո և բանգյուղտեսչութեան, սոցհամատեսչութեան, սեկյանների և պատգամավորական խմբակների աշխատանք):

Քաղաքային խորհուրդների խնդիրները քաղաքային տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման գործում: Կուսակցության վորոշումը քաղաքները շինարարութեան մասին: Որինակներ, վորոնք ցույց են տալիս, թե ինչպես են կենսագործվում այդ վորոշումները (նոր քաղաքների շինարարութեան, հների վերակառուցում, բնակարանային շինարարութեան և այլն):

Սորհուրդների խնդիրները կուլտուրական շինարարութեան ասպարիղում, ընդհանուր պարտադիր ուսման անցկացման գործում:

Սորհուրդների խնդիրները յերկրի պաշտպանութեանն ամրացնելում:

Սորհուրդների կարևորագույն խնդիրն է—պայքար հեղափոխական որինականութեան համար: Հեղափոխական որինականութեան խորհրդային մարմինները— դատախազութեան, դատարանների: ՍՍՀՄ կենտրոնիզմի և ժողկոմխորհի 1932 թ. հունիս 25-ի վորոշումը հեղափոխական որինականութեան մասին: Վճռական պայքարի անհրաժեշտութեանն այն պաշտոնական անձանց դեմ, վորոնք թույլ են տալիս միութենական կառավարութեան որենքի խախտումներ, նրանց դեմ, ովքեր հանցավոր են աշխատավորների դեմումներին բյուրոկրատական վերաբերմունք ցույց տալում, կոլսոդային շինարարութեան հիմնական սկզբունքները խախտելում:

Որոհուողներին խնդիրը հասարակական սոցիալիստական սեփականութունը պահպանելու, ժողովրդական գույքի փչացման և հատկատվման դեմ մղվող պայքարում :

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսիք են բուրժուական պետության խնդիրներն ու քաղաքականութունը :
2. Ի՞նչումն է արմատական տարբերությունը պրոլետարական դեմոկրատիայի և բուրժուական դեմոկրատիայի միջև (որինակներով) :
3. Ի՞նչումն է արտահայտվում բանվոր դասակարգի ղեկավար զերը խորհրդային պետության մեջ և ի՞նչու յե նա անհրաժեշտ :
4. Ի՞նչումն է արտահայտվում կուսակցության ղեկավարութունը խորհուրդների նկատմամբ և ի՞նչու առանց զբան հնարավոր խորհրդային իշխանության իրադրծումը :
5. Ի՞նչպես է բանվորական պետութունը պայքարել ու պայքարում կուլակության դեմ :
6. Ի՞նչ նշանակութուն ունեն համատարած կոլեկտիվացման և կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիայի յենիֆարկելու քաղաքականության հաջողությունները՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն ամրացնելու համար :
7. Ի՞նչու այժմ կոլխոզային գյուղացիութունը հանդիսանում է Որոհուողային իշխանության հիմնական և ամուր հենարանը գյուղում, հողագործության կենտրոնական դեմքը :
8. Ի՞նչու միայն բանվոր դասակարգի և նրա կուսակցության ղեկավար զերը կարող են ապահովել խորհրդային պե-

տության ամրութունը և ի՞նչումն է արտահայտվում այդ ղեկավար զերը :

9. Ի՞նչպես է կուսակցութունը ղեկավարում պրոլետարական պետութունը :

10. Ի՞նչ է յին ասում և ի՞նչ են ասում այժմ բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի և այդ դաշինքում բանվոր դասակարգի ղեկավար զերի մասին աջ և «ձախ» ոպորտունիտները և ո՞ւմ հայացքներն են նրանք արտահայտում :

11. Ի՞նչպիսիք են կարմիր բանակայինի իրավունքները վորպես ՈՍՀՄ քաղաքացի :

12. Ի՞նչպիսիք են խորհուրդների գլխավոր խնդիրները ժամանակակից շրջանում :

13. Ի՞նչպիսիք է յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը :

14. Ի՞նչու յե անհրաժեշտ պրոլետարական պետության ամեն կերպ ամրացումը :

Բացի կոնուրոյ հարցերին պատասխանելուց, կարմիր բանակայինը պետք է—

1) իմանա Որոհուողային սահմանադրության հիմունքները հետևյալ կետերը—ա) խորհուրդներում ընտրելու կարգը, բ) Որոհուողային իշխանության կառուցվածքը (սկսած գյուղխորհրդից և քաղխորհրդից մինչև ՈՍՀՄ Կենտգործկոմ և Ժողկոմխորհ) . գ) Որոհուողային իշխանության բարձրագույն մարմինների կազմութունը (Կենտգործկոմ և Ժողկոմխորհ) :

2) իմանալ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը հեղափոխական որինականության և հասարակական (սոցիալիստական) սեփականության պահպանման մասին :

3) իմանալ կարմիր բանակայինի ընտանիքին տրվող հիմնական արտոնութիւնները:

Թեմայի մշակման պրագետում յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է—

1) գրավոր պատասխան տա առաջին, յերկրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ կոնտրոլ հարցերին.

2) գրել քաղվածք 17-րդ կուսկոնֆերանսի բանաձևից՝ յերկրորդ հնդամյակի հիմնական քաղաքական խնդրի մասին.

3) գրի առնել «Խորհրդային իշխանութիւնն Երկրային մասին» ընկ. Լենինի ճառի հիմնական միտքը.

4) կազմել քաղվածքի կարճ պլան ընկ. Ստալինի «Լենինի իղմի հարցերի մասին» — «Կուսակցութիւնն ու բանվոր դասակարգը պրոլետարիատի զիկտատուրայի սիստեմում» հոդվածից (պրոլետարական զիկտատուրայի հաղորդիչ փոկերի մասին).

5) գրել Խորհրդային իշխանութիւնն կառուցվածքի սխեման՝ գյուղից և քաղաքից մինչև ԽՍՀՄ, գրել համամիութենական, միացյալ ու հանրապետական ժողովուրդների ցանկը և թվեր՝ Խորհրդային իշխանութիւնն ղեկավար որդանների սոցիալական և կուսակցական կազմի մասին.

6) գրել կարմիր բանակայիններին և նրանց ընտանիքներին տրվող հիմնական արտոնութիւնները:

### IV. ՀԱՄԿ(Բ)Կ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (4-6 Ժամ)

ա) Թեմայի բովանդակութիւնը:

#### I. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2 Ժամ)

1. Ազգային հարցը բուրժուական պետութեան մեջ: Բուրժուական ղեմ բանվոր դասակարգի դասակարգային պայքարի ազգային բնույթը: «Կապիտալը միջազգային ուժ է: Նրան հաղթելու համար հարկավոր է բանվորների միջազգային միութիւնը, նրանց միջազգային յեղբայրութիւնը» (Լենին): Ազգային հարցը, վորպէս պրոլետարական հեղափոխութեան կարեւորագույն հարց:

Ազգային հարցը ցարական Ռուսաստանում: Ազգային ծայրագավառները, — Ռուսաստանի գաղութներ: Յարիզմի ճնշման քաղաքականութիւնը ազգային ծայրագավառներում: «Ռուսաստանը վորպէս ժողովուրդների բանտ»: Ազգութիւններին իրար դեմ գրգռելը ցարիզմի կողմից, վորպէս պայքարի ղեկը հեղափոխական շարժման դեմ: Այդ քաղաքականութեան արտահայտութիւնները—կոտորած, ջարդ, հրետեցութիւն:

Ազգային հարցը կապիտալիստական յերկրներում: «Աշխարհը յերկու բանակների յե բաժանված՝ Փինանսական կապիտալն իր ձեռքում ունեցող ու յերկրազնդի բնակչութեան մեծամասնութիւնը շահագործող մի բուռն քաղաքակրթված ազգեր և մյուս բանակը՝ գաղութների ու կախյալ յերկրների շահագործվող ու ճնշված ժողովուրդներ, վորոնք այդ մեծամասնութիւնն են կազմում» (Ստալին): Ազգամիջյան թշնամութիւնը, շովինիզմ, ջարդեր կապիտալի յերկրներում:

րում : Գաղութային ժողովուրդների և աղբային փոքրամասնությունների ճնշումն ու հարստահարումը Արևմուտքի յերկրներում : Աղբությունների ճնշումը Արևմտյան Ուկրաինայում , Արևմտյան Բելոռուսիայում , Ռումինիայում և այլն : Համաշխարհային տնտեսական ճգնաժամ և գաղութային սարկության բոլոր ձևերի ուժեղացում , իմպերիալիստների ճգնումը «ճգնաժամի հետևանքները դնել գլխավորապես ամենից ասիլի թույլ և կախյալ ու ճնշված ժողովուրդների վրա» (Կոմինտերնի Գործկոմի XI սլենումը) :

Սոցիալ-դեմոկրատիան իմպերիալիստների հավատարիմ հենարանն է՝ գաղութները ճնշելու և աղբային փոքրամասնություններին հարստահարելու գործում : Որինակներ , վորոնք պատկերում են «սոցիալիստ» մինիստրների քաղաքականութունը գաղութներում :

Անհնար է վոչնչացնել աղբային ճնշումն առանց վոչընչացնելու կապիտալիզմը : Պրոլետարիատն ու նրա կուսակցութունը վորպես բոլոր աշխատավորների հեղափոխական պայքարի ղեկավար , այդ թվում նաև ճնշված աղբությունների հեղափոխական պայքարի ղեկավար , վորպիսի հեղափոխությունը միակն է , վոր հետևողականորեն մարտնչում է ամեն տեսակ ճնշման դեմ , այդ թվում նաև աղբային ճնշման դեմ :

2. Աղբային հարցը խորհրդային պետության մեջ : Համ Կ(բ)Կ և Սորհրդային Իշխանության աղբային քաղաքականության հիմնական հարցերն են . «... մոտեցնել զանազան աղբությունների պրոլետարներին և կիսապրոլետարներին՝ կալվածատերերին ու բուրժուազիային տասլալելու , միատեղ հեղափոխական պայքարի համար... ամեն տեսակ արտոնյալ դրություններ վոչնչացնելու համար... աղբերի լիակատար հավասարության համար , իրավունք տալու դա-

ղութներին և վոչ իրավահավասար աղբերին անջատվելու և պետություն կազմելու» : (Համ Կ(բ)Կ ծրագիր) :

«Միայն խորհուրդներում , միայն պրոլետարիատի դեկտատուրայի պայմաններում , իր շուրջը համախմբելով բնակչության մեծամասնությունը , հնարավոր չեղավ արմատապես վոչնչացնել աղբային ճնշումը , փոխադարձ վստահության պայմաններ ստեղծել և ժողովուրդների յեղբայրական աշխատակցության հիմքերը դնել» : (ՍՍՀՄ սահմանադրություն— կոնստիտուցիա) :

«Հենց Սորհրդային Իշխանության կառուցվածքը , իր ինտերնացիոնալ դասակարգային բնույթով , խորհրդային հանրապետությունների աշխատավոր մասսաներին հրում է դեպի միասնության ուղին , դեպի սոցիալիստական մի ընտանիք» (ՍՍՀՄ Սահմանադրություն) : «ՍՍՀՄ— միասնական համաշխարհային տնտեսության մեջ ասլադայում ժողովուրդներին համախմբելու կենդանի նախատիպն է» : (Ստալին) :

Աղբային հարցը խորհրդային սահմանադրության մեջ (Աղբությունների խորհուրդ , ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահներ , միութենական (ղաշնակից) հանրապետություններ , ինքնավար հանրապետություններ , ինքնավար , մարդեր , նրանց իրավունքները . համամիութենական ժողովմատներ և նրանց հարաբերությունները հանրապետությունների հետ) :

## II. ՊԱՅՔԱՐԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ( 2 ժամ )

1. ՍՍՀՄ աղբային քաղաքականության հարցը պետության մեջ : Տնտեսական , քաղաքական , կուլտուրական ամեն տեսակ ոգնություն նախկին ճնշված աղբություններին , աղբությունների միջև անհավասարությունը վոչնչացնելու համար :

Աղգային ծայրամասերի ինդուստրացման ասպարիզում ձեռք բերած նվաճումները: Աղգային հանրապետութիւնների ինդուստրացման տեմպերը գերազանցում են ընդհանուր-միութենական տեմպերին: Աղգային հանրապետութիւնների կապիտալ ներդրումները թվերը և արդյունաբերութիւնի հիմնական ֆոնդերի կուտակումներ համեմատած ընդհանուր-միութենականների հետ: Պրոլետարիատի կազմեր ստեղծելը տեղական ազգութիւններից: Աղգային ծայրամասերի գյուղատնտեսութիւնի սոցիալիստական վերակառուցման հաջողութիւնները: ԽՍՀՄ ժողովուրդների ձևով աղգային և բովանդակութիւնով պրոլետարական կուլտուրայի արագ աճումը: Անգրագիտութիւնի վերացումը, ժողովրդական կրթութիւնի ցմնցիլ արագ ընդարձակումը, թուրք-թաթարական և ԽՍՀՄ մյուս ազգութիւնների այբբենի լատինիզացիան:

Հին մնացորդների դեմ պայքարի հաջողութիւնները (կրոնական, կենցաղային) նախկին ճնշված ազգութիւնների մեջ:

Տեղական սրբապետական և կիսապրոլետարական տարբերից ամուր կուսակցական կազմակերպութիւններ ստեղծելը:

Սոցիալիստական շինարարութիւնի և կուլտուրական վերելքի ինդիքներն աղգային հանրապետութիւններում և մարդերում յերկրորդ հնգամյակում: «Յերկրորդ հնգամյակի ժամանակաշրջանում սոցիալիստական տնտեսութիւնի արագ աճն աղգային հանրապետութիւններում և մարդերում պայմանավորում է ցարական դադութային-կապիտալիստական տնտեսութիւնից ժողովրդած տնտեսական ու կուլտուրական հետամնացութիւնի վերացումը (XVII կուսկոնֆերանսի բանաձևից):

Աղգային ռայոնների սոցիալիստական շինարարութիւնի հաջողութիւնների համաշխարհային նշանակութիւնը:

ԲԳԿԻ աղգային զորամասերը: Մարտիկների ինտերնացիոնալ դաստիարակութիւնը:

2. Պայքարը լեւինյան ազգային քաղաքականութիւնի համար ընդդէմ դասակարգային թշնամու-մեծապետական շովինիստների և տեղական նացիոնալիստների: Վելիկոուսական շովինիզմը վորպես վելիկոուսական ազգի նախկին տիրող ու շահագործող, այժմս կործանվող դասակարգերի ձգտումը վերադարձնելու կորցրած արտոնյալ դրութիւնը: Աղգային տարբերութիւններն անմիջապես վերացնելու մասին մեծապետական թեորիաների դասակարգայնորեն-անհարգատ ելութիւններ: Մերժումն աջակցութիւն ցույց տալու նախկին ճնշված ժողովուրդների աղգային կուլտուրային: Տեղական նացիոնալիզմը նախկին ճնշված ազգերի անհետացող, վերացրչ կապիտալիստական դասակարգերի ձգտումն է ամփոփվելու իր աղգային պետութիւն մեջ և ախտեղ սահմանելու իր դասակարգային պետութիւնը: Տեղական նացիոնալիզմը թուլացնում է ԽՍՀՄ աշխատավոր ժողովուրդների միասնութիւնը, հոգուտ կապիտալիստների: Դասակարգային պայքարի սրումը և շովինիստական ազիտացիայի ուժեղացումը դասակարգային թշնամու կողմից: Մանր-բուրժուական նացիոնալիստական հակահեղափոխական կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները: Նրանց կապիտալիստական յերկրների նկատմամբ ունեցած որիննացիան: Հրեասանցութիւնը և նրա դասակարգային ելութիւնը: Աղգային հարցում կուսակցութիւնի մեջ թեքումների դասակարգային ելութիւնը և պայքարը նրանց դէմ:

Թեքում ղեպի մեծապետական շովինիզմի կողմը վերսկս  
վելավոր վտանգ:

Թեքում ղեպի տեղական նացիոնալիզմի կողմը:

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ԼԱՐՑՆԵՐ

1. Ինչո՞ւ կապիտալի և պրոլետարիատի միջև պայքարը  
միջադրային բնույթ ունի:

2. Ինչո՞ւ կապիտալիզմի ժամանակ հնարավոր չէ վոչըն-  
չացնել աղբյուրի ճնշումը:

3. Ինչո՞ւ աղբյուրի ճնշման վոչնչացումը կազմում է  
պրոլետարիատի դասակարգային պայքարի կարևորագույն  
խնդիրներից մեկը:

4. Ի՞նչ կացութիւնն ունեն գաղութային և կիսագաղու-  
թային ժողովուրդները կապիտալիստական աշխարհում:

5. Ի՞նչ կացութիւնն ունեն աղբյուրի փոքրամասնութիւն-  
ները մեր արևմտյան կապիտալիստական հարևան յերկրնե-  
րում (Լեհաստան, Ռումինիա):

6. Ի՞նչ դեր են կատարում սոցիալ-դեմոկրատները դա-  
ղութների և աղբյուրի փոքրամասնութիւնների ճնշման դոր-  
ժում:

7. Ինչո՞ւ Լեհինը ցարական Ռուսաստանն անվանում էր  
«ժողովուրդների բանտ»:

8. Ի՞նչ քաղաքականութիւնն էր վարում ցարական կա-  
ռավարութիւնն աղբյուրի հայրամասերում:

9. Ինչո՞ւ ցարական կառավարութիւնն աղբյուրի ճնշու-  
թիւնը դրդում էր միմյանց դեմ:

10. Վորո՞նք են կոմունիստական կուսակցութիւնն և  
Խորհրդային իշխանութիւնն աղբյուրի քաղաքականութիւն  
հիմունքները:

11. Ի՞նչպէս է վաստորեն վերացվում ԽՍՀՄ ազդու-

թիւնների նյութական և կուլտուրական անհավասարու-  
թիւնը:

12. Ի՞նչպէս է կառուցված Խորհրդային Սոցիալիստա-  
կան Հանրապետութիւնների Միութիւնը: Ի՞նչ հանրապե-  
տութիւններ են մտնում ԽՍՀՄ կազմի մեջ:

13. Վորո՞նք են աղբյուրի հանրապետութիւնների և  
մարզերի ինդուստրացման նվաճումները:

15. Ի՞նչ նվաճումներ են ձեռք բերված աղբյուրի հան-  
րապետութիւնների և մարզերի դուրստնտեսութիւնն սոցի-  
ալիստական վերակառուցման ասպարիզում:

16. Վորո՞նք են կուլտուրական շինարարութիւնն հա-  
ջողութիւններն աղբյուրի ծայրամասերում:

17. Վորո՞նք են սոցիալիստական շինարարութիւնն պլան-  
ները յերկրորդ հնգամյակում աղբյուրի սայուններում:

18. Ինչո՞ւ են աղբյուրի հանրապետութիւնների սոցիա-  
լիստական շինարարութիւնն հաջողութիւնների համաշխար-  
հային նշանակութիւնը:

19. Ինչո՞ւ են մեծապետական շովինիզմի ելութիւնը  
և Ինչո՞ւ թեքումը ղեպի մեծապետական շովինիզմի կողմը  
կուսակցութիւնն մեջ հանդիսանում է գլխավոր վտանգն աղ-  
բյուրի հարցում:

20. Վորո՞նք է տեղական նացիոնալիզմի դասակարգային  
եյութիւնը:

21. Ի՞նչումն է հրետեցութիւնն դասակարգային եյու-  
թիւնը:

3. Փաստական պարապիտուներին լրացուցիչ միջնամուր.

Բացի կոնտրոլ հարցերի պատասխաններից կարմիր բա-  
նակայինը պետք է՝

ԽՍՀՄ քարտեզի վրա պատմի ԽՍՀՄ մեջ մտնող հիմնա-

կան հանրապետութիւնները մասին (համառոտ տեղեկութիւններ այդ հանրապետութիւնները տնտեսութեան մասին, նրանց սոցիալիստական և կուլտուրական շինարարութեան մասին) :

4. Գրանցումների և ինքնուրույն աշխատանքի միջնամուրը.

Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակայինը պետք է՝

1) զբաղվոր պատասխաններ տա յերկրորդ, չորրորդ և տասերորդ կոնտրոլ հարցերին .

2) զբանցել հիմնական տվյալները սոցիալիստական շինարարութեան մասին աղբյուրին հանրապետութիւններում :

3) տետրի մեջ անցկացնել ԽՍՀՄ սխեման .

4) պատրաստել համառոտ բանավոր յերևութ հետևյալ թեմայի շուրջը՝ «Աղբյուրին հարցը կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ում» .

5) համառոտ պլան կազմել ընկ . Ստալինի աղբյուրին հարցում թեքումների դասակարգային ելութեան մասին կուսակցութեան XVII համագումարում արած զեկուցումից :

## V. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՄՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐ (6 Ժամ)

ա) Թեմայի բովանդակութեանը

I. ԿՄՊԻՏԱԼԻՉՄ (2 Ժամ)

1. Տնտեսութեան կապիտալիստական սխտեմ : Կապիտալի յերկրներում «1) իշխանութիւնը պատկանում է կապիտալիստներին . 2) արտադրութեան գործիքներն ու միջոցները պատկանում են շահագործողներին . 3) արտադրութիւնը տանում են կապիտալիստները վոչ թե աշխատավոր-

ները շահերը համար, այլ բարձր կապիտալիստական շահույթն ապահովելու համար . 4) ժողովրդական յեկամուտը բաշխում է նույնպէս կապիտալիստները դասակարգի ոգտին . 5) բանվոր դասակարգը, զբղւած է արտադրութեան գործիքներից ու միջոցներից, հարկադրւած է վաճառել իր բանվորական ուժը և աշխատել վոչ թե իր համար, այլ ոտար դասակարգի համար, շահագործողների դասակարգի համար» :

Արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութիւնը և բարձր կապիտալիստական շահույթ ստանալու համար պայքարը մրցում է առաջացնում : Կապիտալիստների կողմից շահույթի յետևից ընկնելը ձգտում է առաջացնում նրանց մեջ անսահմանորեն լալանացնելու արտադրութիւնը : Կապիտալիստական արտադրութեան անսահմանացնութիւնը (անարխիան) :

Ճգնաժամերի անխուսափելիութիւնը կապիտալիզմի ժամանակ : Գերարտադրութեան տնտեսական ճգնաժամերի հիմքը, նրանց պատճառը պետք է փնտռել հենց տնտեսութեան կապիտալիստական սխտեմի մեջ : Ճգնաժամի հիմքն արտադրութեան հասարակական բնութի և արտադրութեան արդիւնները յուրացնելու կապիտալիստական ձեռի միջև հակասութեան մեջ է : Կապիտալիզմի այդ հիմնական հասութեան արտահայտութիւնն է հանդիսանում՝ կապիտալիզմի արտադրական հնարավորութիւնների հսկայական աճման (վոր նկատի ունի մաքսիմում կապիտալիստական շահույթ ստանալ) և աշխատավորների միլիոնավոր մասսաների (վորոնց կենսական մակարդակը կապիտալիստները միշտ աշխատում են պահել ծայրահեղ միլիոնումի սահմաններում) վարկունակ պահանջի հարարերական կրնատման միջև հակասութիւնը» (Ստալին) :

Պատերազմների անխուսափելիութունը կապիտալիզմի ժամանակ

2. Ժամանակակից համաշխարհային տնտեսական ճգնաժամը: «Ներկայիս տնտեսական ճգնաժամը հանդիսանում է մինչև այժմ գոյություն ունեցող համաշխարհային ճշգրտագույնագույն ամենախորշ և ամենից խորը ճգնաժամը»: (Ստալին): Ճգնաժամի չտեսնված սրությունը, վորպես արդյունք նրա, վոր նա ծավալվում է ընդհանուր ճգնաժամի հիման վրա, կապիտալիզմի նեխման հիման վրա: Ժամանակակից տնտեսական ճգնաժամը գերարտադրության ճգնաժամ է: Ժամանակակից ճգնաժամը պատերազմից հետո առաջին համաշխարհային տնտեսական ճգնաժամն է: Արդյունաբերական ճգնաժամը հյուսվում է ագրարային և ֆինանսական ճգնաժամերի հետ: Ճգնաժամի զարգացման անհավասարաչափությունը: Ճգնաժամն ամենից ուժեղ հարվածը հասցրեց ամենից ուժեղ կապիտալիստական յերկրին—Հ.Ա. Միացյալ Նահանգներին:

Տնտեսական ճգնաժամի արտահայտություններն են՝ սպրանքների դերարտադրությունը, ֆարրիկների ու գործարանների փակումն ու քայքայումը, սնանկությունները, փողի դնի ընկնելը, գյուղատնտեսության արտադրության կրճատումը և այլն: Ճգնաժամի հետևանքներն աշխատավորների համար՝ գործազրկության վիթխարի աճումը, գործազուրկների միլիոնավոր բանակները, «վորոնք ռեզերվից դարձել են գործազուրկների մշտական բանակներ» (Ստալին). սովի ու աղքատության աճումը, աշխատավարձի իջեցումը (փաստորեն ու թվերն այդ մասին): Գյուղացիության միլիոնավոր մասսաների քայքայումը, աղքատացումը (որինակներ՝ գյուղացիությունից դուրս մասին): Կապիտալիզմի բոլոր հակասու-

թյունների անընդհատ խորացումը. ճգնաժամի հետևանքով սրույնտարիառի, գյուղացիություն և գաղութների աշխատավորների ապստամբությունների ծավալում, ընդհանուր ճգնաժամը և դասակարգային կատաղի պայքարը սրույնտարիառի ու բուրժուազիայի միջև, բուրժուազիայի ու գաղութների աշխատավորների միջև—այս բոլորը խարխուլ են կապիտալիզմի հիմքերը և մոտեցնում են նրա կործանման մոմենտը: Կապիտալիզմի կայունացման վախճանը և անցումը դեպի պատերազմների և հեղափոխությունների շրջանը: Ժամանակակից կապիտալիզմը կործանվող կապիտալիզմ է:

II. ԿՈՄՈՒՆԻՉՄ ՅԵՎ ՍՈՅԻԱԼԻԶՄ (2 ժամ)

Կոմունիզմ: Կոմունիստական ինտերնացիոնալի կողմից դեկլարվող համաշխարհային բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի վերջնական նպատակն է «համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը փոխարինել կոմունիզմի համաշխարհային սիստեմով» (Կոմինտերնի ծրագիր):

Այդ նոր հասարակական իրավակարգի—կոմունիզմի առաջացման համար բոլոր պայմանները հասունանում են կապիտալիզմի խորքում:

Կոմունիստական հասարակությունը «այնպիսի հասարակություն է, վորտեղ ա) չի լինի արտադրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականություն, այլ կլինի հասարակական սեփականություն, կոլեկտիվ սեփականություն բ) չեն լինի դասակարգեր և պետական իշխանություն, այլ չլինեն ինդուստրիայի և գյուղատնտեսության աշխատողներ (վորոնք տնտեսապես ղեկավարվում են վորպես աշխատավորների ազատ ընկերություն—ասոցիացիա). գ)

վորտեղ ժողովրդական տնտեսութիւնը կազմակերպված և պլանով, հիմնված բարձրագույն տեխնիկայի վրա, ինչպէս ինդուստրիայի ասպարիզում, այնպէս ել գյուղատնտեսութեան ասպարիզում. դ) վորտեղ չի լինի քաղաքի ու գյուղի, ինդուստրիայի ու գյուղատնտեսութեան միջև հակադրութիւն. ե) վորտեղ մթերքները կրաչլովեն հին Ֆրանսիական կոմունիստների սկզբունքի համաձայն. այն ե՞ «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակութիւնների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջների»։ զ) վորտեղ գիտութիւնն ու արվեստը կոգտագործվեն բավական բարենպաստ պայմաններով նրա համար, վորպեսզի ծագելյալ դրութիւն լինի. է) վորտեղ անձնավորութիւնն աղատ և կտոր հացի մասին հոգացողութիւնից, աղատ և «աշխարհի ուժեղներին» հարմարվելու անհրաժեշտութիւնից, կղառնա իսկական աղատ անձնավորութիւն...» (Ստալին)։

«Աշխատանքը դադարում է դասակարգային թշնամու համար աշխատանք լինելուց. աշխատանքը դադարում է միայն ապրուստի միջոց լինելուց և դառնում է առաջնակարգ կենսական պահանջ. անհետանում է աղքատութիւնը, անհետանում է մարդկանց միջև տնտեսական անհավասարութիւնը, ստրկացած դասակարգերի աղքատութիւնը, նյութական կյանքի խղճով մակարդակն ընդհանրապես. անհետանում է մարդկանց աստիճանավորումն աշխատանքի բաժանման ժամանակ, իսկ դրա հետ միասին նաև մտավոր ու Ֆիզիկական աշխատանքի միջև հակադրութիւնը. վերջնապես անհետանում են սեռերի սոցիալական անհավասարութեան բոլոր հետքերը» (կոմինտերնի ծրագիր)։ Հասարակական աշխատանքի հսկայական արտադրողականութիւն։ Գիտութեան և արվեստի ծագելյալ վիճակ։

2. Սոցիալիզմ։ Նախքան լիակատար կոմունիզմին անց-

նելը, հասարակութիւնն անցնում է նրա առաջին աստիճանը—սոցիալիզմը։ «Այստեղ կոմունիստական հասարակութիւնը նոր միայն դուրս է դալիս կապիտալիստական հասարակութիւնից, դուրս է դալիս բացարձակ բոլոր տեսակետներով այն ե՞ տնտեսական, բարոյական, մտավոր տեսակետներով, հին հասարակութեան բնածին խալերով... Սոցիալիզմի արտադրողական ուժերը տակաւին բավականաչափ չեն դարձացել, վորպեսզի ապահովեն աշխատանքի մթերքների բաշխումն ըստ պահանջների—նրանք բաշխում են ըստ աշխատանքի։ Աշխատանքի բաժանումը... դեռևս վերացված չի և մասնավորապես դեռևս վոչնչացված չի հիմնականում մտավոր ու Ֆիզիկական աշխատանքների միջև հակադրութիւնը։ Տակաւին գոյութիւն ունեն (չնայած դասակարգերի վոչնչացմանը) հասարակութեան հին դասակարգային բաժանման մնացորդներ, հետևապես և սրուլետարիատի պետական իշխանութեան մնացորդներ, իրավունքի հարկադրում... Դեռևս չի վոչնչացված և ամբողջութեամբ դեռևս չի վերացված քաղաքի և գյուղի միջև հակադրութիւնը։ Սակայն հին հասարակութեան այդ բոլոր մնացորդները չեն պաշտպանվում վոչ մի հասարակական ուժի կողմից» (Կոմինտերնի ծրագիր)։

### III. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍՍԱՐԱԿԱՐԳԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

1. Տնտեսութեան խորհրդային սխառտը։ Բանվոր դասակարգը վոչնչացնում է կապիտալիզմը և նոր կոմունիստական հասարակութիւն կառուցելու համար հաստատում է սրուլետարիատի դիկտատուրա—խորհրդային հասարակարգը։ Մենք դեռ լիովին չենք կառուցել սոցիալիստական հասարակութիւն (մենք նրա կառուցումը կավարտենք յերկրորդ

հնգամյակում), սակայն մեր հասարակակարգը—սոցիալիստական հասարակակարգ է: Մեր յերկրում՝ «1) կապիտալիստների իշխանութիւնը խորտակված է և փոխարինված է բանվոր դասակարգի իշխանութիւնով: 2) արտադրութեան գործիքներն ու միջոցները, հողը, ֆարրիկները, գործարանները և այլն խլված են կապիտալիստներից և վորպես սեփականութիւն են հանձնված բանվոր դասակարգին և դրուդացիութեան աշխատավոր մասսաներին: 3) արտադրութեան զարգացումը յենթարկված է վոչ թե մրցման և կապիտալիստական շահույթի ապահովելու սկզբունքին, այլ պլանային ղեկավարութեան և աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի սիստեմատիկ վերելքի սկզբունքին: 4) ժողովրդական յեկամուտը բաշխվում է վոչ թե շահագործող դասակարգերի հարստացման ոգտին, այլ բանվորների ու գյուղացիների նյութական դրութեան սիստեմատիկ բարձրացման համար և սոցիալիստական արտադրութիւնը լայնացնելու համար քաղաքում և գյուղում: 5) աշխատավորների նյութական դրութեան սիստեմատիկ լայնացումը և նրանց սպառման (գնողունակութեան) անընդհատ աճումը, արտադրութեան լայնացման մշտական ծաղկման աղբյուր լինելով, ապահովում են բանվոր դասակարգին ճշնաթամերից, դերարտադրութիւնից, գործադրկութիւնից և այլն: 6) բանվոր դասակարգը յերկրի տերն է, վորը աշխատում է վոչ թե կապիտալիստների, այլ իր սեփական դասակարգի համար»: (Ստալին):

2. Նրանցում և մեզանում: Մեզանում— իշխանութեան առկայութիւն, վորն ոգտվում է աշխատավորների միլիոնավոր մասսաների պաշտպանութեամբ, պլանային տնտեսութիւն և մեր հասարակակարգում կապիտալիզմի անբուժելի հիվանդութիւնների բացակայութիւնը: Նրանցում— «ճրգ-

նաժամ, գործադրկութիւն, շունչութիւն, լայն մասսաների աղքատութիւն—ահա կապիտալիզմի անբուժելի հիվանդութիւնները» (Ստալին):

Մեր ժողովրդական տնտեսութեան աճման տեմպերը վերջին տարիներում հնարավոր է յին միայն խորհրդային հասարակակարգի պայմաններում: Մեր դժվարութիւնները սոցիալիստական աճման դժվարութիւններ են: Դժվարութիւնների բայլընդիկան հաղթահարումը:

Կապիտալիզմի ընդհանուր քայքայումն ու նեխումը, համաշխարհային տնտեսական ճգնաժամը աշխատավորների համար բազմաթիւ ժողովրդական աղետներով հանդերձ նրանցում: Սոցիալիզմի հիմքի կառուցումը, «ովում» հարցի անվերադարձ լուծումը սոցիալիզմի ոգտին յերկրի ներսում, սոցիալիստական շինարարութեան չտեսնված տեմպերը, սոցիալիզմի շրջանը թեկուխումը և ԽՍՀՄ վերջնականապես զարգացման սոցիալիստական բելսերի վրա հաստատվելը, անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցումը յերկրորդ հնգամյակում—մեզանում:

Խիստ հակադրութիւն սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների միջև, վորպես բացարձակ փայլուն ապացույց սոցիալիստական սիստեմի առավելութեան և տարբերութեան հանդեպ կապիտալիստական սիստեմի: Մեր հաջողութիւնների համաշխարհային-պատմական նշանակութիւնը: «Այժմ գլխավոր մեր ներգործութիւնը միջազգային հեղափոխութեան վրա ցույց ենք տալիս մեր տնտեսական քաղաքականութեամբ... Այդ առպարիզում պայքարը տեղափոխված է համաշխարհային մասշտաբով: Կլուծենք մենք այդ խնդիրը— և այն ժամանակ մենք գործը կտանենք միջազգային մասշտաբով անպայման և վերջնականապես» (Լենին): Յերկու սիստեմների պայքարը և նոր իմպերիալիստա-

կան պատերազմների և ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի վտանգի  
աճումը :

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ինչի՞ վրա յե հիմնված տնտեսության կապիտալիստական սխտեմի :
2. Ինչո՞ւմն է տնտեսության անսլանայնությունը կապիտալիստական յերկրներում :
3. Ինչի՞ց են առաջ դալիս ճգնաժամերը կապիտալիստական յերկրներում :
4. Ինչո՞ւ է տարբերվում կապիտալիզմի ժամանակակից տնտեսական ճգնաժամը կապիտալիստական նախկին ճգնաժամերից :
5. Վորո՞նք են ժամանակակից տնտեսական ճգնաժամի հետևանքները կապիտալիստական տնտեսության և ալխատավորների համար :
6. Ինչո՞ւ բանվոր դասակարգը պայքարելով կապիտալիզմի լծից էր ազատագրման համար, ալղալիսով իսկ պայքարում է բոլոր ալխատավորների շահերի համար :
7. Ի՞նչն է միջազգային պրոլետարիատի հեղալիոսական պայքարի վերջնական նպատակը :
8. Վորո՞նք են կոմունիստական հասարակության հիմնական հատկանիչները :
9. Վո՞րն է կոմունիզմի առաջին աստիճանի (այսինքն՝ սոցիալիզմի) և կոմունիզմի բարձրագույն աստիճանի (այսինքն՝ լրիվ կոմունիզմի) միջև տարբերությունը :
10. Տնտեսության ի՞նչ սխտեմ է ԽՍՀՄ-ում Միության մեջ :
11. Տնտեսության մեր սխտեմն ի՞նչ առավելություններ ունի կապիտալիստական սխտեմի հանդեպ :

Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակալիմներ պետի է՝

- 1) դրանցեն տնտեսության կապիտալիստական սխտեմի հիմնական հատկանիչները, կոմունիզմի (ըստ Ստալինի), սոցիալիզմի (ըստ Կոմինտերնի ծրագրի) և տնտեսության մեր սխտեմի հատկանիչները (ըստ Ստալինի) :
- 2) դրանցեն հիմնական թվերն ու դիագրամները, վորոնք բնորոշում են տնտեսության դրությունը ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում .
- 3) պատրաստվեն բանավոր յելույթ ունենալու հետևյալ թեմաների շուրջը՝
  - ա) «Կապիտալիզմ, կոմունիզմ, սոցիալիզմ» :
  - բ) «Վորոնք են կապիտալիստական տնտեսության ճգնաժամի և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի բուռն աճման պատճառները» :

## VI. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԵ (14—16 ժամ)

### I. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ 4 (ժամ)

1. Սոցիալիստական շինարարության լեկնյամ պլանը : Լենինը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման մեծ պլանի ստեղծող : Լենինյան ուսմունքն այն մասին, վոր մեր յերկրում կան բոլոր հնարավորությունները սոցիալիստական հասարակության կառուցման համար և վոր սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում ամրոջլությունմբ կախված է բալլևեկյան կուսակցության ճիշտ քաղաքականությունից :

Սոցիալիստական ինդուստրացումը սոցիալիզմի շինարարութեան լենինյան պլանի հիմքն է, կուսակցութեան գլխավոր գծի հիմքն է: Լենինի ցուցումները ծանր արդյունաբերութեան և ելեկտրիֆիկացիայի մասին, վորպես ամբողջ ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման լծակներն մասին: «Սոցիալիզմի նյութական հիմքը կարող է լինել միմիայն խոշոր արդյունաբերութեանը, վորն ընդունակ է վերակարգավորել նաև հողագործութեանը» (Լենին):

Գյուղատնտեսութեան բաժան-բաժան լինելը և հետամնացութեանը ցարական Ռուսաստանում: Ծանր արդյունաբերութեանը, վորպես հետամնաց մանր գյուղացիական տնտեսութեան վերակերտման զենք խոշոր, առաջավոր մեքենացված սոցիալիստական գյուղատնտեսութեան համար: Լենինի ցուցումները մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսութեան կոոպերացիան, կոլեկտիվացիան մասին, վորպես գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հիմնական միջոցի մասին: Բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիութեան հետ, բանվոր դասակարգի կողմից գյուղացիութեան ղեկավարութեանը, վորպես հիմք մանր գյուղացիական տնտեսութեանը սոցիալիստական խոշոր տնտեսութեան վերածելու քաղաքականութեան համար: Այդ քաղաքականութեան արտահայտութեանն է արդյունաբերական արտադրանքով, մեքենաներով, գործիքներով և արտադրութեան միջոցներով գյուղին մատակարարումն առաջին հերթին: Արտադրական և առևտրական գոգում:

Լենինի ցուցումն այն մասին, վոր սոցիալիզմի վիճակը իՍՂՄ-ում կախված է մեր տնտեսութեան մեջ սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարի յեղքից, նրանից, թե «ով-ո՞ւմ» կհաղթի այդ պայքարում, և վոր այդ

պայքարում մեր հիմնական ինդիքն է տանել աշխատավոր գյուղացիութեանը զարգացման սոցիալիստական ուղիով, բանվոր դասակարգի հետևից:

ՆեՊԸ լենինյան քաղաքականութեանն է, վորը հաշիվ յետևիված սոցիալիստական տարրերի կապիտալիստական տարրերի դեմ պայքարի համար, սոցիալիստական տարրերի կապիտալիստական տարրերի վրա հաղթանակ տանելու համար, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ամբողջում համար իՍՂՄ-ում:

Լենինի ցուցումները սոցիալիստական շինարարութեան ներսում դասակարգային թշնամուն հաղթելու համար: Լենինի առաջադրած ինդիքը՝ զարգացնել սոցիալիստական շինարարութեան այնպիսի տեմպեր, վորպեսզի ամենակարճ ժամանակում հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին տեխնիկական-տնտեսական տեսակետից:

2. Մեր հաջողութեանը սոցիալիստական շինարարութեան լենինյան պլանի իրականացման գործում:

Կուսակցութեան կողմից յերկրի ինդուստրացիան, ծանր արդյունաբերութեան զարգացման լենինյան գծի անչեղ անցկացումը դասակարգային թշնամու և ուղորտունիստների դեմ մղած անհաշտ պայքարում:

Ամենից ավելի արագ զարգացումն ու ծանր արդյունաբերութեան ղերակշիռ դերը իՍՂՄ ամբողջ արդյունաբերութեան մեջ: Միաժամանակ թեթև արդյունաբերութեան արագ զարգացումը: Հիմնական հանրագումարը՝ մեր հետամնաց յերկիրը դարձնել խոշոր առաջավոր արդյունաբերութեամբ յերկրի, վորն այժմ ղերակշիռ դեր է կատարում ժողովրդական տնտեսութեան մեջ:

«Նախընթաց ժամանակաշրջանում՝ մեր ծանր արդյունաբերութեանը հաստատուն ռեսուրսի վրա յե դրված և այդ»

պիսով ստեղծված է սեփական բազա ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար» : (XVII կուսկոնֆերանսի բանաձևեր) : (Բոլորը սոցիալիստական շինարարության կոնկրետ որինակները և փաստերի հիման վրա) :

Կուսակցությունը ընկ. Ստալինի ղեկավարության անց է կացնում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղիների մասին լենինյան ցուցումներն աջ և «ձախ» ոպորտունիստների դեմ պայքարում : (Որինակներում) : Մեր հաղթանակները. «գյուղատնտեսության մեջ արմատական բեկում է կատարվել, վորն արտահայտվում է ,յուզի չքավորամիջակային մասսաների դեպի սոցիալիզմը կտուրած վերջնական շրջադարձի մեջ : Գյուղատնտեսության մեջ գերիշխող տեղ են գրավել սոցիալիստական ձևերը (կոլտնտեսություններն ու խորհրդայինությունները) : Խորհրդային Միությունը մանր ու մանրագույն հողագործության յերկրից վեր է ածվել աշխարհում ամենախոշոր հողագործության յերկրի, կոլեկտիվացման, խորհրդայինությունների ընդարձակման և մեքենայական տեխնիկայի լայն գործադրման հիման վրա (XVII կուսկոնֆերանս) :

Կուսակցության կողմից սոցիալիստական շինարարության արագ տեմպերի մասին լենինյան ցուցումների անչեղ կենսագործումը և պայքարը ոպորտունիստների դեմ, վորոնք ձգտում են ձախողել սոցիալիստական շինարարության տեմպերը : Մեր մեծագույն նվաճումներն այդ խնդրի լուծման գործում : Առաջին հնգամյակի կատարումը չորս տարում, իսկ մի շարք ճյուղերում դեռ ե՛լ ավելի կարճ ժամկետներում : Ընկ. Ստալինի առաջադրած խնդիրը՝ կենսագործել լենինյան լողունգր—հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին տեխնիկական—տնտեսական տեսակե-

տից մոտակա տասնյամյակում : Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ժողովրդական տնտեսության հզոր աճը ԽՍՀՄ-ում, ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերի աշխարհում առաջին տեղը գրավելը :

Առաջին հնգամյակի սոցիալիստական շինարարության կարևորագույն հանրագումարն է հանդիսանում գյուղում կապիտալիզմի արմատահանումը, վորը կանխորոշում է կապիտալիստական տարրերի լիակատար վերացումը և դասակարգերի բոլորովին վոչնչացումը : ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտումը նշանակում է, վոր լենինյան «ով—ում» հարցը վճուված է հոգուտ սոցիալիզմի լիովին և անվերադարձ հանդեպ կապիտալիզմի թե՛ գյուղում և թե՛ քաղաքում» : (XVII կուսկոնֆերանս) : ԽՍՀՄ վերջնականապես հաստատվել է դարդացման սոցիալիստական ուղիների վրա :

3. Մեր դժվարությունների մասին : Լենինը մեր սոցիալիստական շինարարության դժվարությունների մասին և այդ դժվարությունները հաղթահարելու միջոցների մասին :

Լենինի վճռական պայքարն ոպորտունիստների դեմ, վորոնք զինաթափ էլին լինում դժվարությունների առաջ, փոխանակ այդ դժվարությունները բայլելիկորեն հաղթահարելու : Լենինյան Կենտկոմի ղեկավարության կուսակցության կողմից բոլոր դժվարությունների վճռական հաղթահարումը, դժվարություններ, վորոնք հանդիպում են սոցիալիստական շինարարության ճանապարհին, կուսակցության գլխավոր զիծը հաստատապես անցկացնելու և ոպորտունիստների դեմ պայքարի հիման վրա :

Մեր դժվարությունների արմատական տարրերությունը կապիտալիստական դժվարություններից : Կապիտալիստների դժվարությունները կապիտալիստական սխտեմի անցկացման ու քայքայման դժվարություններ են : Մեր դժվարություն-

ները—մեր ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական  
պարահառուցման ղեկավարութեանն են, ամեն ղեկավարու-  
թեանն են, առաջընթացի ղեկավարութեանն են: Մեր  
ղեկավարութեանն են—դասակարգային թշնամու դեմ պայ-  
քարի ղեկավարութեանն են, վերպիսի թշնամին կատաղորեն  
դիմադրում է սոցիալիստական շինարարութեան հաջողու-  
թեանն են: Լենինյան գլխավոր գծի անշեղ անցկացումը,  
անհաշտ պայքարը դասակարգային թշնամու և նրա ազենտ-  
լրի դեմ, առանձնապես աջ ուղղությունների դեմ, վերպես  
գլխավոր վտանգի դեմ սովյալ շրջանում—միակ միջոցն են մեր  
ղեկավարութեանն են հաղթահարելու համար:

Ժամանակակից ղեկավարութեանն են հայթայթման դուր-  
ծում նրանց պատճառները և վերացնելու միջոցները: Ի՞նչպես  
է կուսակցութեանը մորիլիզացիայի յենթարկում մասսաներին  
ղեկավարութեանն են հաղթահարելու համար: Կենտկոմի սեպ-  
տեմբերյան պլենումի վորոշումը լայն սպառման առարկաների  
արտադրութեան ընդարձակման մասին: Խորհրդային և կու-  
տնտեսական առևտրի ծավալումը: Պայքարը սպեկուլյանտ-  
ների դեմ:

## II. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳՄՅԱԿԸ (6 ժամ)

1. Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խըն-  
դիրները: Առաջին հնգամյակը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հիմքի  
կառուցման ավարտման հնգամյակն է: Յերկրորդ հնգա-  
մյակն անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կա-  
ռուցելու պլանն է:

«Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն  
է՝ վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերն և  
դասակարգերն ընդհանրապես, լիովին վոչնչացնել այն պատ-  
ճառները, վորոնք առաջացնում են դասակարգային տարբե-

րութեանն են և շահագործում, և հաղթահարել կապիտալիզ-  
մի մնացորդները եկոնոմիկայում և մարդկանց գլխավորու-  
թեան մեջ, ամբողջ աշխատավոր բնակչութեանը դարձնել  
անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառու-  
ցողներ» (XVII կուսկոնֆերանս): Այդ խնդրի համաշխար-  
հային նշանակութեանը:

Շահագործող տարրերի վոչնչացումը, վորպես վճռական  
խնդիր ԽՍՀՄ-ում դասակարգերի վերացման գործում, վո-  
րովհետև առանց շահագործողների չկան շահագործվողներ:  
Մեր հաջողութեանն են այդ խնդրի լուծման գործում—  
հիմնականում վերացել է կուլակութեանը վորպես դասա-  
կարգ ԽՍՀՄ գյուղատնտեսական վճռական ուսուցիչներում,  
«ովում» հարցը յերկրի ներսում լուծվել է հողուտ սոցիա-  
լիզմի: 1932—33 թ. թ. ամբողջ յերկրում համատարած կո-  
լեկտիվացումը հիմնականում ավարտելու խնդիրը և այդ  
հիման վրա հիմնականում կուլակութեան վերացումը վոր-  
պես դասակարգ ամբողջ յերկրում:

Դասակարգերի վոչնչացումը և աշխատավորների վերա-  
դաստիարակութեան խնդիրները: Կուտնտեսութեանն են  
կարմակերպչական տնտեսական ամրացումը—աշխատանքի  
ճիշտ կազմակերպումն է, պայքարն է հավասարեցման դեմ  
յեկամուտները բաշխելու գործում և այլն— կուտնտեսական-  
ների սոցիալիստական վերադաստիարակութեան կարևորա-  
գույն միջոցն է, կարևորագույն միջոցն է գյուղատնտեսու-  
թեան սոցիալիստական վերակառուցման հետագա հաջողու-  
թեանն են համար և այդ հիման վրա յերկրորդ հնգամյա-  
կում ստեղծելու համար այն բոլոր պայմանները, վորոնք  
ապահովում են քաղաքի և գյուղի միջև հակադրութեան վո-  
չընչացումը: Սոցիալիստական մրցակցութեան և հարվա-  
ծայնութեան հետագա ծավալումը, վորպես աշխատավորնե-

րին վերադաստիարակելու միջոցներ, վորն ստեղծում ե մարդկանց նոր սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը: Սոցմրցակցության դերը և ընկ. Ստալինի վեց ցուցումները (պայքար համասարեցման դեմ, մասնադեմոնների կադրերի ստեղծումը և այլն) բանվորներին նոր կադրեր վերադաստիարակելու դործում, վորոնք ներգրավվում են մեր արդյունաբերության մեջ:

Կուլտուրական շինարարությունը և նրա դերը աշխատավորներին վերադաստիարակության գործում: Ընդհանուր պարտադիր ուսումը, վորպես կարևոր մի քայլ Ֆիզիկական և մատավոր աշխատանքի միջև հակադրությունը վոչնչացնելու համար:

Կարմիր բանակի դերը աշխատավորների վերադաստիարակության գործում: Կարմիր բանակը առաջնակարգ քաղաքական դպրոցն է:

Դասակարգերի վոչնչացման անհնարինությունը պոանց դասակարգային կատաղի պայքարի: Դասակարգային թշնամու մոլեգին դիմադրությունը ամբողջ ճակատով սոցիալիզմի հաջող հարձակմանը: Դասակարգային թշնամու պայքարի մեթոդները սոցիալիզմ կառուցող բանվորական պետության դեմ՝ վնասարարություն, կուլակության քայքայիչ աշխատանքը կոլեկտիվացման, հացամթերման դեմ, պետական ու կոլտնտեսական գույքի հափշտակումն ու փչացումը, սպեկուլյացիա և այլն:

Դասակարգային պայքարը յերկրորդ հնգամյակում: «Հետադաշում տակավին անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումը առանձին մոմենտներում և սոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում, վոր դրա հետ միասին ընդգծում է պահպանման, իսկ մի քանի դեպքերում նաև աշխատավորների առանձին շերտերի և խմբերի

վրա բուրժուական ազդեցությունների ուժեղացման անհրաժեշտությունը, տակավին յերկար ժամանակի ընթացքում սրողետարիատին անհարադատ դասակարգային ազդեցությունների ներմուծումը բանվորների և նույնիսկ կուսակցության մեջ»: (XVII կուսկոնֆերանս): Դեպի կուլակային հակահեղափոխության դիրքերը զլորված աջ ուղորտունիստների դասակարգային պայքարի մարման մասին հայացքները— դասակարգային թշնամու հայացքներ են:

Բանվորական պետության ամեն կերպ ամրացման անհրաժեշտությունը, վորպես մեր յերկրում դասակարգային թշնամիների վոչնչացման գենք, վորպես աշխատավորներին վերադաստիարակելու և անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու միջոց:

2. Յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրը: Ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը— յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրն է:

Ամբողջ ժողովրդական տնտեսության— արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության— ծավալուն տեխնիկական վերակառուցման անհրաժեշտությունը յերկրորդ հնգամյակի հիմնական այդ քաղաքական խնդիրը կատարելու համար:

Յերկրորդ հնգամյակի ընթացքում մեր տնտեսությունը պետք է զինվի ամենաառաջավոր, նորագույն մեքենայական տեխնիկայով:

Խորհրդային մեքենաշինարարության առաջատար դերը ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման գործում: Մեքենաշինարարության ասպարիզում առաջադրված խնդիրները: Ստեղծել նորագույն ենթերգետիկ բաղա, հիմնված արդյունաբերության և տրանսպորտի ամենալայն

Ելեկտրիֆիկացիայի վրա, Ելեկտրոններգիան աստիճանաբար գյուղատնտեսութեան մեջ մտցնելու վրա, ջրային եներգիայի, քարածխի և նավթի, վառելիքի տեղական տեսակները ոգտադործելու վրա: Ելեկտրոններգիայի արտադրութեան, ածխահանման և նավթահանման խնդիրները:

Մետաղահանման խնդիրները: Մետաղի նշանակութիւնը Ժողովրդական տնտեսութեան և յերկրի պաշտպանութեան համար: Մեր նվաճումները սև մետաղադործութեան զարգացման ասպարիզում: Սև մետաղադործութեան յետ մնալը Ժողովրդական տնտեսութեան պահանջներէ, սև մետաղադործութեան զարգացման պլանների թերկատարումը: Կենտրոնի սեպտեմբերյան պլանումի վորոշումը սև մետաղադործութեան մասին: Յերկրորդ հնգամյակի նշումները սև մետաղադործութեան և գունավոր մետաղների վերաբերյալ:

Տրանսպորտի խնդիրները: Տրանսպորտը Ժողովրդական տնտեսութեան նեղ տեղն է: Յերկրորդ հնգամյակը—տրանսպորտի արմատապես վերակառուցելու հնգամյակն է՝ ամբողջ Ժողովրդական տնտեսութեան վերակառուցման խնդիրների համեմատ: Յերկաթուղային և ջրային տրանսպորտի, ճանապարհային և խճուղային շինարարութեան խնդիրները: Ոդային հաղորդակցութեան զարգացումը:

Գյուղատնտեսութեան վերակառուցման խնդիրները: Յերկրորդ հնգամյակը գյուղատնտեսութեան տեխնիկական վերակառուցման հնգամյակ է: Յերկրորդ հնգամյակի վերջում մեքենա-տրակտորային կայանները կընդգրկեն բոլոր կտրատնտեսութեանները և հիմնականում կավարտեն գյուղատնտեսական արտադրութեան մեքենայացումը:

Յերկրորդ հնգամյակի կարևորագույն խնդիրն է՝ վճռականապես բարձրացնել բերքատուութեանը և բայլչևիկորեն լուծել յերաշտի դեմ պայքարի խնդիրը: Ժողկոմխորհի սեպ-

տեմբերի 29-ի վորոշումը բերքատուութեանը բարձրացնելու միջոցառումների մասին: Կենդանաբուծութեան պրորէնի լուծումը գյուղատնտեսութեան կարևոր խնդիրն է յերկրորդ հնգամյակում:

Սորհտնտեսութեան շինարարութեան խնդիրները յերկրորդ հնգամյակում: Յերկրորդ հնգամյակում գյուղատնտեսութեան վերակառուցման մասին XVII կուսկոնֆերանսի վորոշումների մեծագույն նշանակութեանը: «Գյուղատնտեսութեան լիակատար կոլեկտիվացումը, խոշոր պետական գյուղատնտեսական ձեռնարկութեանների աճումը և առաջավոր մեքենայական տեխնիկայով խորհտնտեսութեանների ու կոլտնտեսութեանների զինումը, վորպիսի տեխնիկան գործնականում գյուղատնտեսական աշխատանքը դարձնում է ինդուստրիալ աշխատանքի աշխատակութեան, և տրանսպորտային կապի և արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան միջև ապրանքաշրջանառութեան նշանավոր չափով ամրացումը ստեղծում են պայմաններ քաղաքի ու գյուղի միջև հակադրութեանը լիովին վերացնելու համար»: (XVII կուսկոնֆերանս):

Աշխատավորների քարեկեցութեան լավացումը և թեթև արդյունաբերութեան խնդիրները: Աշխատավորների բարեկեցութեանը լավացնելու մասին XVII կուսկոնֆերանսի վորոշումների կողմից առաջադրված հսկայական խնդիրները:

«Ինսուլիցութեան հիմնական սպառման ապրանքներով, այդ թվում նաև սննդի առարկաներով, ապահովումը յերկրորդ հնգամյակի վերջում պետք է ապելանա առնվազն 2—3 անգամ առաջին հնգամյակի վերջի հանդեպ»:

Թեթև արդյունաբերութեան և հումուլթային բաղայի արագ զարգացումը վորպես այդ խնդրի կատարման կարևորագույն պայման:

«Մեր արդյունաբերութեան զարգացման մեջ նորը, ի միջի այլոց նրանումն է, վոր մենք այժմ հնարավորութիւն ունենք արագացրած տեմպով զարգացնելու թե՛ ծանր և թե՛ թեթև արդյունաբերութիւնները» (Ստայլին) : Լայն սպառման առարկաների արտադրութեան մասին Կենտրոնի սեպտեմբերյան պլանումի վորոշումները : Այդ ասպարիզում ծանր արդյունաբերութեանը, թեթև արդյունաբերութեանը, կոոպերացիային առաջադրված խնդիրները :

Աշխատավորների բարեկեցութիւնը լավացնելու համար խորհրդային և մասնավորապէս կոլտնտեսական առևտրի հսկայական նշանակութիւնը . «Միայն ապրանքաշրջանառութեան ծավալման հիման վրա հնարավոր է բանավորներին և ղյուղի աշխատավորներին արդյունաբերական ապրանքներով և զյուզտնտեսական մթերքներով մատակարարելու հետագա արագ լավացումը, վորի համար և իբ՛ հերթին անհրաժեշտ է ամեն կերպ ընդլայնել խանութները, կրպակների ցանցը և ամբողջ առևտրական ցանցը՝ անցկացնելով նրա անհրաժեշտ տեխնիկական վերակառուցումը : Միմիայն այդ հիման վրա հնարավոր է նախապատրաստել ապրանքներ բաց թողնելու նորմավորման վերացումը և փոխարինել այն ծավալուն խորհրդային առևտրով կենտրոնացված բաշխման սխեմայով» (XVII կուսկոնֆերանսի վորոշումներէց) :

Կենտրոնի սեպտեմբերյան պլանումի վորոշումները խորհրդային, մասնավորապէս կոլտնտեսական առևտրի հետագա ծավալման մասին, արդյունաբերութեան, կոոպերացիային, պետառևտրի աշխատանքի լավացման մասին խորհրդային առևտրի կազմակերպման դործում :

Յերկրորդ հնդամյակը— կապիտալիստական աշխարհից ԽՍՀՄ-ի տնտեսական անկախութեան, «մոտակա տաս տարում հասնել ու անցնել տեխնիկական-տնտեսական տեսա-

կետից առաջա՛վոր կապիտալիստական յերկրներին» լողունդի կատարման համար մղվող պայքարում վճռական հաղթանակներին հնդամյակն է : «Յերկրորդ հնդամյակում ԽՍՀՄ առաջին տեղն է զբաղում Յեվրոպայում տեխնիկական տեսակետից : Առաջին հնդամյակում մեքենաներ և սարքավորում ներմուծող յերկրից ինքնուրույն մեքենաներ և սարքավորում արտադրող յերկիր զարձնելու աշխատանքը կավարտվի և վերջնականապէս կասրահովի ԽՍՀՄ-ի տնտեսական ինքնուրույնութիւնը, վորը կպաշտպանի ԽՍՀՄ կապիտալիստական համաշխարհային տնտեսութեան կցորդը լինելուց» (XVII կուսկոնֆերանս) :

XVII կուսկոնֆերանսի կողմից յերկրորդ հնդամյակում առաջադրված խնդիրներին վիթխարիութիւնը և այդ խնդիրները կատարելու հնարավորութիւնը միայն աշխատանքի արտադրողականութեան բարձրացման հիման վրա ամբողջ ժողովրդական տնտեսութեան մեջ, բանավոր դասակարգի և աշխատավորական մասսաների բոլոր ստեղծագործական ուժերի մեծազույն խանդավառութեան և մորիլիզացիայի հիման վրա, սոցիալիստական մրցակցութեան և հարվածայնութեան ծավալման հիման վրա :

Յերկրորդ հնդամյակի խոշորագույն խնդիրները կարելի յե կատարել միմիայն կատաղի պայքար մղելով դասակարգային քշմամու և նրա ագենտուրայի—բոլոր տեսակի ռպորտունիստների դեմ և առանձնապէս աջ թեքման դեմ, վորպէս զլիա՛վոր վտանդի :

### III. ՏԵՆԵԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ՅԵՎ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՎԵՅ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .

1. ԸՆԿ. Ստալինի վեց պայմանները : Թերութիւնները սոցիալիստական արդյունաբերութեան աշխատանքում՝ ար-

գյուղնարեբուծյան միջանի ճյուղերի պլանների թերակատարումը, պլանի վորակային ցուցանիշների թերակատարումը, աշխատանքի արտադրչդականության անբավարար բարձր լինելը, ինքնարժեքի անբավարար իջեցում: Աշխատանքի արտադրողականության բարձրացման և սոցիալիստական շինարարության մեջ մեր աշխատանքների բոլոր թերությունների վերացման բանալին—ընկ. Ստալինի վեց պայմաններն են: Ընկ. Ստալինի վեց պայմանները՝ 1) արդյունաբերությունը բանվորական ուժով կազմակերպչական ապահովումը՝ արդյունաբերական միավորումների կողմից կոլտնտեսությունների հետ պայմանադիր կնքելու միջոցով և աշխատանքի մեքենայացումը (մեխանիզացիան): 2) հավասարեցման վերացումն աշխատավարձի և բանվորների նյութական ու կուլտուրական մակարդակի լավացումը: 3) գեիմադրկության վոչնչացումը: 4) ստեղծել պրոլետարական տեխնիկական կադրեր: 5) համարձակ ոգտադործել հին տեխնիկական կադրերին, փոխել վերաբերմունքը նրանց նկատմամբ: 6) անցկացնել տնտհաշվարկ:

Ընկ. Ստալինի այս վեց պայմաններից յուրաքանչյուրի նշանակությունը: Փաստերը, վորոնք ցույց են տալիս թե ինչպես է ընթանում պայքարը ընկ. Ստալինի վեց պայմանների իրագործման համար ֆարրիկների, գործարանների աշխատանքում:

Ընկ. Ստալինի վեց պայմանները խորհանտեսությունների և ՄՏԿ աշխատանքում:

Ընկ. Ստալինի վեց պայմանների անշեղ անցկացումը, պայքարը ոսյորտունիզմի դեմ, վորը ձախողում է նրանց անցկացումը, վորպես արմատական խնդիր, վորի լուծումից է կախված յերկրորդ հնգամյակի խնդիրների կատարումը:

2. Տեխնիկային տիրապետումը: «Բայլէիկները պետք է

տիրպետեն տեխնիկային» ընկ. Ստալինի առաջադրած խնդրի նշանակությունը, վորպես վճռական խնդիր ներկա շրջանում, վորովհետեւ «տեխնիկան վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ»:

Տեխնիկային տիրապետելու խնդրի մեծադույն նշանակությունը յերկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման պլանը կատարելու համար:

#### IV. ԿՈՒՏԵՏԵՍՍԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (4 ժամ)

1. Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ավրացումը: Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը, վորպես ընկ. Ստալինի վեց պայմանների կիրառում կոլտնտեսական շինարարության նկատմամբ: Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կենտրոնական խնդիրն է, գյուղատնտեսության աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական միջոցն է:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը, վորպես կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակության, մնացորդների և կուլակային ազդեցության դեմ պայքարի կարևորագույն լծակ:

2. Գյուղատնտեսական արտելը կոլտնտեսությունների հիմնական ձևն է ներկա շրջանում:

Արտելը տնտեսության սոցիալիստական ձևն է: Արտելում են համախորված բատրակները, չքավորները և միջակները, «վորպեսզի արտադրության ընդհանուր միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կառուցեն խո-

չոր հոլեկտիվ տնտեսութիւնն և այդպիսով ապահովեն իսկական և լիակատար հաղթանակը կուլակի դեմ, աշխատավորների բոլոր շահագործողների և թշնամիների դեմ, իսկական և կատարյալ հաղթանակը կարելի ու խալարի դեմ, մենատնտես մանր գյուղացիութեան յետամնացութեան դեմ և ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականութիւնն և կոլեկտիվ տնտեսութեան ապրանքայնութիւնն (դյուրատնտեսական արտելի կանոնադրութիւնն) :

«Գյուղատնտեսական արտելում հանրայնացված են արտադրութեան հիմնական միջոցները, գլխավորապես հատիկային տնտեսութեան հիմնական միջոցները՝ աշխատանքը, հողոգտադրածումը, մեքենաները և մյուս ինվենտարը (աշխատող անասուններ, տնտեսական շենքեր) : Այդ արտելում չեն հանրայնացվում ազարակային հողերը (մանր ազարակներ, բանջարանոցներ, պարտեզներ), բնակելի շենքերը, կաթնատու անասունների վորոշ մասը, մանր անասունները, տնային թռչունները և այլն» (Ստալին : Գյուղատնտեսական արտելի ձևը առաջ է քաշված աշխատավոր դյուրացիութեան յայն մասանների կողմից, վորպես ամենից սիւելի նրա արմատական շահերին համապատասխանող մի ձև. սյգ. չէնում միլիոնների փորձով հաստատված է կոլտնտեսականի և կոլտնտեսութեան հասարակական շահի ամբողջութեամբ վերացրած և կոլտնտեսական-դյուրացու մասնավոր շահի դուրակացումը :

Արտելի տարբերութիւնը կոմունայից և կուսակցութեան վճռական պայքարը «ձայն» ուղորտունիտների դեմ, վորոնք ձգտում են արտելն ամիջապես վերածել կոմունայի : Կենտկոմի մարտի 28-ի վորոշումը կոլտնտեսականների կովերի և մանր յեղջուրավոր անասունների հարկադիր հանրայնացման դեմ պայքարի մասին : Կոլտնտեսականների կովերի ու

մանր յեղջուրավոր անասունների հարկադիր հանրայնացման քաղաքականութիւնը, վորպես դասկարգայնորեն անհարազատ քաղաքականութիւն : Արտել տարբերութիւնը, վորտեղ արտադրութեան միջոցները պատկանում են իրենց կոլտնտեսականներին, խորհտնտեսութիւններից, վորոնք պետական ձեռնարկութիւններ են, վորտեղ արտադրութեան միջոցները պատկանում են պետութեանը :

Կուսակցութեան վճռական պայքարը պորտունիստների դեմ, վորոնք փորձում են կոլտնտեսութիւնների նկատմամբ կիրառել հրամատարութեան մեթոդը : Առանց վերադաս կադմակերպութիւնների թուլտվութեան կոլտնտեսականների դեկավար աշխատողներին տեղական մարմինների կողմից հետացնելու արդելումը : Համկ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի վորոշումը. Կենդործկոմի վորոշումը կոլտնտեսական սեփականութեան պահպանման, հողերը կոլտնտեսութիւններին ամրացնելու, նրանց ռայոնացման և ամրացման մասին :

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը կոլտնտեսութիւնների կազմակերպչական-տնտեսական ամրացման կարեորագույն ողակն է : Կենտկոմի փետրվարի 11-ի հրահանգը : Տնտհաշվարկային բրիգադը կոլտնտեսութեան մեջ, նրա կազմակերպման կարգը, բրիգադների կազմը, բրիգադիրների ընտրութիւնը : Առաջադրութիւն բրիգադին : Նրա աշխատանքի կազմակերպման կարգը : Պայքար կորուստների դեմ : Փաստեր աշխատանքի ճիշտ և սխալ կազմակերպման մասին կոլտնտեսութիւններում :

Յեկամուտների բաշխումը կոլտնտեսութիւններում և այդ բաշխման նշանակութիւնը կոլտնտեսութիւնների կադմակերպչական-տնտեսական ամրացման համար : Պայքարը կուլակային հավասարեցման դեմ : Գործավարձի արմատա-

վորումը և նրա կիրառման առանձնահատկութիւնները կորտնտեսութիւններում: Աշխատանքի ղեկահամման կարգը, կոլտնտեսականի աշխտրերի հաշվառումը: Փաստեր յեկամոտները ճիշտ և սխալ բաշխման մասին կոլտնտեսութիւն մեջ:

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը և յեկամոտների բաշխումը պայքարի կարևորագույն զենքն և կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակութիւն համար, բարձր աշխատանքային կարգապահութիւն համար, կոլտնտեսութիւնների աշխատանքի պլանայնութիւն համար:

Կոլտնտեսութիւնների կազմակերպչական-տնտեսական ամբացումը և կոլտնտեսական կենդանարուծութիւն զարգացման խնդիրները (կոլտնտեսական Ֆերմաների կազմակերպումը, առանձին կոլտնտեսականներին աջակցութիւնը ձեռք բերելու կովիք և մանր յեղջուրավոր անասուններ և այլն): Պայքարը ամբողջ կաթնատու անասուններին հարկադիր հանրայնացնելու «ձախական» պրակտիկայի դեմ:

Կոլտնտեսական ակտիվի առաջընթացումն ու դաստիարակութիւնը:

3. Հացամթերում, գյուղեարկ և կոլտնտեսական առևտուր:

Կուտակցութիւնն ու կառավարութիւնն վորոշումները հացամթերման, գյուղհարկի և կոլտնտեսական առևտրի մասին: Հացամթերումների պլանի կրճատումը 1932—33 թ. և կոլտնտեսականին ու աշխատավոր մենատնտեսին իրավունք վերապահելը վաճառելու իրեն հասանելիք հացահատիկի բաժինը պետութիւնն առաջ իր պարտավորութիւնները կատարելուց հետո և վաճառելու կենդանարուծութիւնն մթերքները պետութիւնն առաջ ճշտապահութիւնամբ իր պարտավորութիւնները կատարելու պայմանով, այն զներով, վորպիսի

զներ վորութիւնն ունին շուկայում: Կենտրոնիկումի վորոշումը մասմթերման մասին և նրա նշանակութիւնը:

Կոլտնտեսական առևտրի մեծագույն նշանակութիւնը կոլտնտեսութիւնների կազմակերպչական-տնտեսական ամբացման և աշխատավորների հայթայթումը բարելավելու համար: Կառավարութիւնն վորոշումը կոլտնտեսական առևտուրը ընդլայնելու կարգի մասին: Պայքարը սպորտունիստների դեմ, վորոնք խանգարում են կոլտնտեսական առևտրի ծավալմանը: Սպեկուլյանտներին— կուլակների ու մասնավոր առևտրականներին դեմ անհաշտ պայքարի անհրաժեշտութիւնը, նրանք վորոձում են հարստանալ բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիութիւնն հաշվին: Կառավարութիւնն և կուտակցութիւնն վորոշումները սպեկուլյացիայի դեմ պայքարի մասին:

Կոլտնտեսական առևտրի ծավալումը և արդյունարեւական ապրանքներով գյուղի հայթայթման խնդիրները: Կենտրոնի սեպտեմբերյան պլենումի վորոշումները խորհրդային առևտրի և լայն սպառման ապրանքների արտադրութիւնն մասին:

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ կապիտալիզմի ժամանակ բանվոր դասակարգը հանդես և դալիս վորպես ճնշվածների դասակարգ:

2. Ինչո՞ւ կապիտալիզմի ժամանակ անխուսափելի յեն ճգնաժամերը և վորոնք են այդ ճգնաժամերի հետևանքները աշխատավորների համար:

3. Ի՞նչ և կոմունիզմը:

4. Ինչո՞վ և տարբերվում սոցիալիզմը կոմունիզմից:

5. Ինչո՞ւ մեր հասարակակարգը սոցիալիստական հասարակակարգ և:

6. Ի՞նչ փաստեր կան սոցիալիստական բիստեմի հակա-  
յական առավելութունները մասին հանդեսը կապիտալիստա-  
կան սիստեմի :

7. Ինչո՞ւ սոցիալիստական ինդուստրացումը հանդիսա-  
նում է սոցիալիզմի կառուցման հիմքը և ի՞նչպես ենք մենք  
կատարում լենինի պատգամները սոցիալիստական ինդուս-  
տրացման մասին (փաստերով) :

8. Ինչո՞ւ կոլեկտիվացումը հանդիսանում է գյուղատն-  
տեսութեան սոցիալիստական վերակառուցման հիմնական  
միջոցը և ի՞նչպես ենք մենք կատարում լենինյան պատգամը  
գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման մա-  
սին :

9. Ինչո՞ւմ են «ով-ում»-ի հարցի ելույթունը և ինչպի-  
սի փաստեր կան, վորոնք վկայում են այդ մասին, վոր այդ  
հարցը լուծված է յերկրի ներսում հողուտ սոցիալիզմի :

10. Ի՞նչ փաստերով կարելի յե հաստատել, վոր մեր  
յերկիրը թեվակոխել է սոցիալիզմի շրջանը և վոր ԽՍՀՄ  
վերջնականապես հաստատվել է զարգացման սոցիալիստա-  
կան ուղիների վրա :

11. Ինչո՞ւ մենք պայքարում ենք սոցիալիստական շի-  
նարարութեան արագ տեմպերի համար :

12. Ինչո՞վ են տարբերվում մեր դժվարութունները  
կապիտալիզմի դժվարութուններից և ի՞նչ միջոցներ կան  
այդ դժվարութունները հաղթահարելու համար :

13. Վո՞րն է յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքա-  
կան խնդիրը :

14. Ի՞նչ հաջողութուններ ունենք մենք անդասակարգ  
սոցիալիստական հասարակութուն կառուցելու և դասակար-  
գային ճնշումը վոջնացնելու գործում :

15. Ինչո՞ւ շահագործող տարրերի վերջնական վսչըն-

չացումը վճռական խնդիր է հանդիսանում ԽՍՀՄ-ում դասա-  
կարգերի վոջնացման գործում :

16. Ինչո՞ւ հնարավոր չե անդասակարգ սոցիալիստական  
հասարակութուն կառուցել առանց դաժան դասակարգային  
պայքարի :

17. Ինչո՞ւմ են արտահայտվում դասակարգային պայքա-  
րը և ինչո՞ւմ նա կարող է արտահայտվել յերկրորդ հնգա-  
մյակի ընթացքում :

18. Ինչո՞ւ անհրաժեշտ է ամեն կերպ ամրացնել սրբու-  
տարական սեփականությունը :

19. Վո՞րն է յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսա-  
կան խնդիրը :

20. Ինչո՞ւ յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքա-  
կան խնդիր—անդասակարգ սոցիալիստական հասարակու-  
թյուն կառուցելու խնդիր—կատարումը հնարավոր է միայն  
ամբողջ ժողովրդական տնտեսութեան տխնիկական վերակա-  
ռուցման հիման վրա :

21. Ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված յերկրորդ  
հնգամյակում սոցիալիստական արդյունարերութեան և  
տրանսպորտի տխնիկական վերակառուցման ասպարիզում :

22. Ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված յերկրորդ հրն-  
գամյակում գյուղատնտեսութեան տխնիկական վերակառուց-  
ման ասպարիզում :

23. Ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված յերկրորդ հրն-  
գամյակում աշխատավորների բարեկեցութեան լավացման  
ասպարիզում :

24. Ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված յերկրորդ հրն-  
գամյակում «մտտակա տասնամյակում հասնել և անցնել  
առաջավոր կապիտալիստական յերկրներին տխնիկական  
տնտեսական տեսակետից լողունդի կատարման համար :

25. Ի՞նչ հիմնական թերություններ կան սոցիալիստական արդյունաբերության աշխատանքում և վո՞րոնք են այդ թերությունների պատճառները:

26. Ինչո՞ւ են ընկ. Ստալինի վեց պայմանների նշանակութունը սոցիալիստական շինարարության համար:

27. Ինչո՞ւ են «բալչևիկները պետք է տիրապետեն տեխնիկային» լոզունգի նշանակութունը:

28. Ինչո՞ւ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը հանդիսանում է այժմ կարևորագույն խնդիր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

29. Ինչո՞ւ են արտելի տարբերիչ առանձնահատկությունները և ինչո՞ւ արտելը հանդիսանում է ժամանակակից շրջանում կոլտնտեսությունների հիմնական ձևը:

30. Ի՞նչպես կազմակերպել աշխատանքը և յեկամուսների բաշխումը կոլտնտեսություններում:

31. Ինչո՞ւ հասարակական սեփականությունը սրբազան է և անձեռնմխելի:

32. Վո՞րն է կոլտնտեսական առևտրի նշանակությունը և վորո՞նք են նրա ծավալման խնդիրները:

33. Ի՞նչ նշանակութուն ունեն կառավարության վորոշումները հացամթերման և մսամթերման մասին:

Գ) Բացի կոնտրոլ հարցերից պտտասլոսանիլուց կարմիր բանակայինը պետք է՝

1) կարողանա պատմել իր տետրակի համաձայն սոցիալիստական շինարարության մեջ հիմնական ճյուղերում մեր ձեռք բերած գլխավոր նվաճումների մասին և հիմնական նշումներն այդ ճյուղերի նկատմամբ յերկրորդ հնգամյակում:

2) կարողանա պատմել հիմնական նոր կառուցումների մասին, ցույց տա ջարտեղի վրա.

3) իմանա կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման հիմնական դրությունները (գյուղատնտեսական արտելի կանոնադրություն, կոլտնակենտրոնի 1932 թ. փետրվարի 11-ի հրահանգը և հաջորդները), աշխատանքի կազմակերպման և կոլտնտեսությունների յեկամուսները բաշխելու կարգի մասին.

4) իմանա կառավարության և կուսակցության հիմնական վորոշումները կոլտնտեսական առևտրի, հացամթերման, մսամթերման, հողագտագործման մասին:

Դ) Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակայինը պետք է՝

1) գրանցի տետրի մեջ այն հիմնական թվերը, վորոնք բնորոշում են մեր նվաճումները սոցիալիստական շինարարության մեջ ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի համաձայն, և հիմնական նշումները յերկրորդ հնգամյակում.

2) գրանցել տետրի մեջ հիմնական նոր կառուցումները.

3) գրանցի տետրի մեջ յերկրորդ հնգամյակի տնտեսական խնդրի մասին XVII կուսկոնֆերանսի բանաձևից քաղվածքներ.

4) պատրաստի համառոտ բանավոր յելույթներ ինքնուրույն կազմված պլանով հետևյալ թեմաների շուրջը 1) «կուսակցությունը—սոցիալիստական շինարարության առաջնորդն է» 2) «կուսակցության պայքարը յերկու ճակատի վրա լենինյան գլխավոր գծի համար» 3) սոցիալիստական շինարարության ընթացիկ հարցերից մեկը (ինչպես են կիրառվում ընկ. Ստալինի վեց պայմանները, ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը կոլտնտեսություններում և այլն):

ա) Թեմայի բովանդակությունը

I. ՀԱՄ Կ(Բ)Կ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՎԱԳԱՐԴՆ Ե, ԱՇ-  
ԽՍԱՍՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ (4 ժամ)

Բանվոր դասակարգը ժամանակակից հասարակության ամենից հետևողական, կազմակերպված հեղափոխական դասակարգն է: Համ Կ(բ)Կուսը ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի ավանգարդը՝ առաջավոր ջոկատն է, նա իր մեջ է քաջում բանվոր դասակարգի լավագույն ուժերը: «Բանվոր դասակարգըն առանց հեղափոխական կուսակցության՝ դա մի բանակ է առանց շտաբի» (Ստալին): Կուսակցությունը բանվոր դասակարգի մարտական ղեկն է իր ղեկատուրան նվաճելու և ամրացնելու համար, նոր հասարակություն կառուցելու համար:

Համ Կ(բ)Կ—հեղափոխական պրոլետարիատի միակ կուսակցությունը՝ յերեք տասնյակից ավելի տարիների ընթացքում անհողդողդ և վստահ պայքարում է սոցիալիզմի համար և հաղթականորեն աշխատավորներին տանում է ղեպի կոմունիզմը: Կուսակցության պատմությունը՝ բանվոր դասակարգի պայքարի և հաղթանակների պատմությունն է: Պատմական որինակներ, վորոնք ցույց են տալիս կուսակցության դերը Ռուսաստանի բանվորների հեղափոխական պայքարի մեջ (կուսակցության ստեղծումը, 2-րդ համադրումաբը, 1905 թ., ծաղկման և վերելքի շրջանը, իմպերիալիստական պատերազմի տարիները, Փետրվար-Հոկտեմբեր): Լենինին՝ բայլչեիկյան կուսակցության կազմակերպիչն է: Կուսակցության և Լենինի դերը ցարիզմի, կալվածատերերի և բուրժուազիայի դեմ մղած պայքարում, Լենինի և կուսակցության դաժան պայքարը համաձայնողական-մենչեիկներին, մասնավորապես Տրոյկու դեմ, Էսերներին դեմ, բանվոր դա-

սակարգի բոլոր այն թշնամիների դեմ, վորոնք դավաճանում ենին բանվորների և աշխատավոր դեյուզացիության շահերին (կուսակցության պայքարի պատմությունից վերցրած վառ փաստերի հիման վրա 1905 թ., ռեակցիայի տարիներին, իմպերիալիստական պատերազմի տարիներին): Կուսակցությունը՝ Հոկտեմբերյան հաղթանակի կազմակերպիչն է մեր յերկրում (1917 թվի պատմական փաստերի հիման վրա):

II. ԻՆՉՊԵՄ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՆՎ ԱՇԽԱՏՈՒՄ  
ՀԱՄ Կ(Բ)Կ (2 ժամ)

Լենինյան միասնությունն ու միաձուլությունը, բայլչեիկյան կոլեկտիվությունն ու կուսակցական յերկաթյա կարգապահությունը, ինքնաքննադատությունը, անհաշտ պայքարն սպորտունիզմի դեմ յերկու ճակատում—հանդիսանում են բայլչեիկյան կուսակցության շինարարության հիմունքները, վորոնք ապահովում են լենինիզմի հաղթանակը:

Կամավոր անդամության սկզբունքը կուսակցության մեջ: Ով կարող է լինել կուսակցության անդամ: Կոմունիստի՝ վորպես առաջամարտիկի դերը գործարանում, կոլխոզում և կարմիր բանակում: Կուսակցության կանոնադրության և ծրագրի նշանակությունը: Սրտադրական բջիջը՝ կուսակցության հիմքն է: Բանվորական կորիզի ամրացումը՝ կուսակցության կարևորագույն խնդիրն է: Լենինը ֆարրիկների և գործարանների մասին իբրև մեր ամբողջների մասին: Կուսակցության սոցիալական կազմը: Կուսակցության աշխատանքը լավագույն հարվածայիններին կուսակցության շարքերն ընդգրկելու համար: Կարմիր բանակայինների կուսակցության մեջ ընդունելու կարգը ղեկավորական բջիջներում: Կուսակցության գտումն ու նրա խնդիրները: Կուսակ-

ցական բոլոր որդանները ընտրականութունը՝ սկսած բջիջի բյուրոյից մինչև կուսակցութեան կենտրոնը:

Կուսակցութեան գերագույն որդանը՝ Համ Կ(բ)Կ համադրամարն են: Համ Կ(բ)Կ համադրամարն են ու կոնֆերանսները՝ սոցիալիզմի կառուցման խոշորագույն ետապներն են: Կուսակցութեան XIV համադրամարը՝ վորպես ինդուստրացման համադրամար: XV համադրամարը՝ կոլեկտիվացման համադրամարն են: XVI համադրամարը՝ վորպես սոցիալիզմի ամբողջ ճակատով ծախարուն հարձակման համադրամար: XVII կուսկոնֆերանսը՝ անդասակարգ սոցիալիստական հասարակութուն կառուցելու կոնֆերանսն են: Համ Կ(բ)Կ ամբողջ ճակատով սոցիալիստական հարձակման գլխավորողն են:

Լենինը վորպես Համ Կ(բ)Կ և Կոմինտերնի տեսաբանը, կազմակերպիչը և առաջնորդը: Լենինն առաջին խորհրդային պետութեան կազմակերպիչն է և սոցիալիստական շինարարութեան վիթխարի պլանի ստեղծողն է: Լենինը մեռավ՝ լեւինիզմն ապրում է: Համ Կ(բ)Կ ԿԿ-ը՝ պրոլետարական դիկտատուրայի սոցիալիստական շինարարութեան և յիւլըի պաշտպանութեան ղեկավար շտարն է: Համ Կ(բ)Կ-ը վորպես լենինյան կուսակցութեան ղեկավար շտարը, Լենինի գործի շարունակողը: Համ Կ(բ)Կ ԿԿ: ԿԿ՝ Է և նրա խնդիրները: Համ Կ(բ)Կ ԿԿ գլխավոր քարտուղար ընկ. Ստալինը՝ Լենինի ամենահետևողական աշակերտն է, նրա շարունակողն է: Ընկ. Ստալինի կենսադրութունը: Ընկ. Ստալինի գերը քաղաքացիական պատերազմում և Կարմիր բանակի ղեկավարութեան մեջ: Ընկ. Ստալինի գերը լենինյան գիծն անցկացնելու մեջ սոցիալիստական վերակառուցման շրջանում: Ստալինը՝ Համ Կ(բ)Կ և Կոմինտերնի տեսաբանը, կազմակերպիչն ու առաջնորդն է:

Համ Կ(բ)Կ լենինյան ԿԿ ղեկավարութեամբ ընկ. Ստալինի գլխավորութեամբ բանվոր դասակարգը դաշնակցած աշխատավոր գյուղացիութեան հետ իրագործում է լենինյան ավանդները, կյանքում կիրառում է սոցիալիզմ կառուցելու լենինյան գլխավոր պլանը ԽՍՀՄ-ում:

### III. ԿՈՒՍՍԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅԲԱՐԸ ՅԵՐԿՈՒ ԾԱԿԱՍԻ ՎՐԱ ԼԵՆԻՆՅԱՆ ԳՂԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ ( 4 Ժամ )

1. Պայքարը յերկու փակատի վրա՝ կուսակցութեան մարտական հզորութեան գրավակմն է: Կուսակցութեան՝ վորպես բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների առաջնորդի՝ առաջ կանգնած խնդիրների բարդութունը: Կուսակցական շարքերի համախմբվածութունը, յերկաթյա կարգապահութունը, կուսակցութեան շարքերի միասնութունը Համ Կ(բ)Կ մարտական հզորութեան գրավակմնն է, նրա կողմից բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին ճիշտ ղեկավարելու գրավակմնն է: Վ. Ի. Լենինի վողջ կյանքն ու աշխատանքը, կուսակցութեան վողջ պատմութունը՝ կուսակցութեան միասնութեան համար մղված անհաշտ պայքարի պատմութունն է ընդդեմ ուրոտունիստների, վորոնք ձգտել են կուսակցութունը հեղափոխական ճանապարհից շեղել դեպի դասակարգային թշնամու համար ձեռնտու ուղին (որինակ՝ Լենինի պայքարը մենչևիկները դեմ, վորոնք այժմս հանդիսանում են միջազգային սոցիալ-ֆաշիզմի ջոկատը, հանդիսանում են կատաղի հակահեղափոխականներ: Լենինի ավանդը՝ ամբացնել կուսակցութեան բայլելիկյան միասնութունը, վորպես աչքի լույս: Կուսակցութեան մեջ լենինյան միասնութեան և յերկաթյա կարգապահութեան առանձնահատուկ նշանակութունը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ և ընկ. Ստալինի ղեկավարութեամբ կուսակցու-

Թյան կողմից լենինյան ամանդի անշեղ կատարումը կուսակցության ռայլը իկյան միասնության մասին: Կուսակցության անհաշտ պայքարը յերկու ճակատի վրա լենինյան գլխավոր գծի համար՝ ընդդեմ ուղորտունիզմի բոլոր տարրեր տեսաների, ընդդեմ «ձախ» ուղորտունիստների, վորոնք փորձում են իրենց հակակուսակցական հայացքները ծածկել «ձախ», իրրե թե «հեղափոխական» բառերով, կուսակցության մեջ կուլակային դործակալություն հանդիսացող ներկայիս գրլխավոր վտանգ աջ ուղորտունիզմի, ընդդեմ հաշտվողականների, վորոնք քարոզում են համաձայնության դալ, հաշտվել ուղորտունիստների հետ, փոխանակ անհաշտ պայքար մղելու նրանց դեմ, ընդդեմ յերկյերեսանիների: Բոլոր ուղորտունիստները՝ անկախ նրանց հայացքներից և խոսքերից, վորոնցով ծածկվում են այդ հայացքները, հանդիսանում են դասակարգային թշնամու դործակալներ:

2. Կուսակցության պայքարը տրոցկիզմի դեմ մինչև 17 թիվը և նրանից հետո: Տրոցկիզմի հայացքները՝ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելու հնարավորության բացասումը մեր յերկրի բանավոր դասակարգի և գյուղացիության ուժերով. աշխատավոր գյուղացիության՝ վորպես բանվոր դասակարգի թշնամու մասին ունեցած հայացքները. գյուղացիական հիմնական մասաներին սոցիալիստական շինարարության մեջ և դրուգատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ ներգրավելու հնարավորության բացասումը: Կուսակցության մեջ յերկաթյա կարգապահության անհրաժեշտության բացասումը. տրոցկիստների փորձերը կողմակերպելու իրենց սեփական կուսակցությունը: Ընկ. Ստալինի ղեկավարությամբ կուսակցության կողմից տրոցկիզմի ջախջախումը, նրա հակահեղափոխական ելության մերկացումը, Տրոցկու վտարումը:

Մը կուսակցությունից և ԽՍՀՄ սահմաններից: Տրոցկիզմի վերածումը հակահեղափոխական բուրժուազիայի առաջադրը ջոկատի, վորը պայքարում և սոցիալիստական ինդուստրացման և կոլեկտիվացման դեմ, վորը բուրժուազիային ոգնում և ինտերվենցիա պատրաստելու ընդդեմ ԽՍՀՄ:

3. Կուսակցության պայքարը «ձախ» ուղորտունիստների դեմ: «Ձախ» ուղորտունիստների հակակուսակցական հայացքները: «Ձախ» խտորումները 1930 թ. կոլեկտիվացման ժամանակ, վորպես դեպի միջին գյուղացիությունն ունեցած տրոցիստական վերաբերմունքի արտահայտություն: «Ձախներ» առաջարկների դասակարգային խորթ ելությունը հավասարեցման մասին, փողի անհապաղ վերացման մասին, կոլիտոզները սովխոզներ վերածելու մասին, առևտրի լիվլիզացիայի և ուղղակի մթերափոխանակության անցնելու մասին և այլն: «Ձախական» քաղաքականության դասակարգային խորթ ելությունը կոլխոզային անասունների բուն հանրայնեցման մասին: Կուսակցության վճռական, անհաշտ պայքարը «ձախ» ուղորտունիստների դեմ և նրանց ջախջախումը:

4. Կուսակցության պայքարն աջ ուղորտունիզմի դեմ: Աջ ուղորտունիստների դեմը՝ դա կուլակային-կապիտալիստական տարրերի առաջ անձնատուր լինելու դիժն և: Աջերի առաջարկները ինդուստրացման տեմպերի դանդաղեցման մասին: Նրանց յելությունը սովխոզների և կոլխոզների ծավալուն շինարարության դեմ, հաշտություն կուլակի հետ. ընդդեմ պայքարի կուլակության դեմ: Աջերի քարոզը՝ «կուլակի ներածումը սոցիալիզմի մեջ»: Աջերը՝ վորպես ինքնահոսի կողմակիցներ սոցիալիստական շինարարության մեջ:

Աջ ուղորտունիստները կուլակի դործակալներն են, վորոնք գլորվել են դեպի կուլակային հակահեղափոխության

գիրքերը: Աջ ուսուցիչը գլխավոր վտանգն է, «վորով-  
հետև նա արտացոլում է կուլակային վտանգը, իսկ կուլակա-  
յին վտանգը ներկա ետապում, ծավալուն հարձակման և կա-  
պիտալիզմն արժատախիլ անելու մոմենտին հանդիսանում է  
հիմնական վտանգը յերկրում»: (Ստալին):

Սոցիալիստական շինարարության վիթխարի հաջողու-  
թյունները ԽՍՀՄ մեջ կուսակցության կողմից լենինյան գըլ-  
խավոր դժի անչեղ կիրառման արդյունքն է, կուսակցության  
անհաշտ պայքարի արդյունքն է ուսուցիչի դեմ: Դասա-  
կարգային պայքարը յերկրորդ հնգամյակում և կուսակցու-  
թյան հետագա անհաշտ պայքարի խնդիրները ընդդեմ ու-  
սուցիչի:

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն է կոմունիստական կուսակցության դերը կա-  
պիտալի դեմ ուղղված բանվորների հեղափոխական պայքա-  
րում:

2. Ի՞նչպես է կուսակցությունն իրագործում սոցիալիս-  
տական շինարարության ղեկավարությունը:

3. Ի՞նչպես է կառուցված Համ Կ(բ)Կ:

4. Ինչո՞ւմն է Համ Կ(բ)Կ 14-րդ, 15-րդ, 16-րդ համա-  
գումարների և 17-րդ կուսկոնֆերանսի նշանակությունը:

5. Ի՞նչու կուսակցության կարգապահությունը և լենին-  
յան միասնությունը վճռական նշանակություն ունի բանվոր  
դասակարգի պայքարի համար կապիտալի դեմ:

6. Ինչո՞ւ տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուա-  
զիայի առաջավոր ջոկատն է:

7. Ի՞նչպես էր կուսակցությունը պայքարում և պայքա-  
րում է «ձախ» ուսուցիչի դեմ և ի՞նչ հայացքներ է  
արտացոլում «ձախ» ուսուցիչի:

8. Ի՞նչ հայացքներ են պաշտպանում աջ ուսուցիչու-  
նեքը և ի՞նչու աջ ուսուցիչը հանդիսանում է վորպես  
գլխավոր վտանգ տվյալ ետապում:

9. Ի՞նչ փաստեր են վկայում այն մասին, վոր ուսու-  
սուցիչները հանդիսանում են իբրև դասակարգային թշնա-  
մու գործակալներ:

10. Ո՞վքեր են հաշտվողականները և ի՞նչու կուսակցու-  
թյունը նրանց դեմ պայքարում էր և պայքարում է:

11. Վորո՞նք են ուսուցիչի դեմ պայքարի խնդիր-  
ները յերկրորդ հնգամյակում:

գ) Բացի կոնսրոլ հարցերին պատասխանելուց կարմիր  
բանակայինը պետք է

1) գիտենա ընկ. ընկ. Լենինի և Ստալինի համառոտ կեն-  
սագրությունները և Համ Կ(բ)Կ ԿԿ Գաղբյուրոյի կողմը:

2) գիտենա Համ Կ(բ)Կ կանոնադրության հիմնական  
դրույթները կուսակցության կառուցման վերաբերյալ  
(բժիշ, կոնֆերանս, համագումարներ, Համ Կ(բ)Կ ԿԿ, Գաղ-  
բյուրո, Կաղբյուրո, ԿՎՀ):

դ) Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակայինը  
պետք է գրի առնի՝

1) 8-րդ և 11-րդ կոնսրոլ հարցերի պատասխանները:

2) Ընկ. Ստալինի ճառից քաղվածք աջ թեման մասին  
(III և IV բաժինները):

3) գծել Համ Կ(բ)Կ կառուցման սխեման:

4) պատրաստվել բանավոր յելույթ ունենալու «Համ  
Կ(բ)Կ-ը բանվոր դասակարգի առաջնորդն է» և «կուսակցու-  
թյան պայքարը յերկու Փրոմտի վրա» թեմաներից մեկն ու  
մեկի վերաբերյալ:

VIII. ԻՆՉԻՑ ԴՐԴՎԱԾ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ  
ԵՆ ԼԻՆՈՒՍ (6 ժամ)

ա) Թեմայի բովանդակութիւնը

I. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ՝ ՄԵՌՆՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ ( 2 ժամ)

1. Իմպերիալիզմ. Արդէ ժամանակաշրջանը՝ իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխութիւնների ժամանակաշրջանն է:

Իմպերիալիզմի բնորոշ հատկանիշներն են՝ մրցման պայքարի հետեանքով արտադրութեան հսկայական մասի կենտրոնացումը վոչ մեծ թիվով խոշորագույն կապիտալիստների ձեռքում, այսինքն, մոնոպոլիաների առաջացումը: (Մոնոպոլիան մրցումը չի վոչնչացնում, այլ սրում է: Բանկերի հզորութեան և իշխանութեան անսահման աճումը): Բանկերի միակցվելն արդյունաբերութեան հետ: Բանկերը՝ կոլեկտիվ կապիտալիստներ են, խոշորագույն մոնոպոլիստական միավորումների տնօրէնները: Կապիտալների արտահանութեան առանձնահատուկ կարեւոր նշանակութիւնն իմպերիալիզմի որով, վորովհետեւ այդ յերաշխալորում է խոշոր շահույթ: «Կապիտալն իր ցանցն է փոսում աշխարհի բոլոր յերկրների վրա» (Լենին): «Ստեղծվում են կապիտալիստների միջազգային մոնոպոլիստական միութիւններ, վորոնք բաժանում են աշխարհը» (Լենին): «Կապիտալիստական յերկրների զաղութային քաղաքականութիւնը վերջացրել է մեր մոլորակի վրայի չբռնված հողերի զբաղումը: Յերկրագունդն առաջին անգամ բաժան-բաժան է արված այն ձևով, վոր այսուհետեւ մնում է լոկ վերաբաժանել» (Լենին): Բաժանումը չի բացասում վերաբաժանմանը: Վերաբաժանման անխուսափելիութիւնը: Կապիտալիզմի բոլոր հակասու-

թիւնները (անսղանախութիւն, ճգնաժամեր, պատերազմներ և այլն) իմպերիալիզմի որով հասնում են մեծագույն չափերի: Իմպերիալիզմը՝ նեխվող, մեռնող կապիտալիզմն է, սոցիալիստական հեղափոխութեան նախորդակն է:

2. Պատերազմների անխուսափելիութիւնը իմպերիալիզմի որով: Յերկրների տնտեսական և քաղաքական անհավասարաչափ զարգացման խիստ սրումն իմպերիալիզմի որով: Ուժերի փոխհարաբերութեան փոփոխումն իմպերիալիստական պետութիւնների միջև: Կապիտալների զավթողական քաղաքականութիւնը և պայքարը վաճառման շուկաների համար, կապիտալների արտահանման շուկաների, «աղբեցութեան շրջանների» և հումույթի աղբյուրների համար անխուսափելիորեն վերածվում են զինված ընդհարման ձևի՝ պատերազմի, յերկրագունդը վերաբաժանելու համար: «Պատերազմը քաղաքականութեան շարունակութիւնն է այլ միջոցներով»:

«Իրա հետ միաժամանակ հարյուր միլիոնավոր պրոլետարների և զաղութային ստրուկների շահագործումը կարող է շարունակվել միմիայն արյունահեղ հարստահարիչ պատերազմների զնով» (Կոմիւտերնի VI կոնգրեսի բանաձևից):

Կապիտալի խոշորագույն պետութիւնների միջև իմպերիալիստական պայքարը յերկրագունդի նոր վերաբաժանման համար հանգեցրեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմին (1914—18 թ.թ.)» (Կոմիւտերնի ծրագրից):

II. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՈՐՈՎ  
ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊ  
ՆՐԱՆՅ (2 ժամ).

Պատերազմների յերեք տեսակն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխութիւնների դարաշրջանում. իմպե-

րիալիստական, ազգային—ազատագրական, հեղափոխական—  
դասակարգային պատերազմներ :

Պրոլետարիատի վերաբերմունքը դեպի պատերազմները  
նայած նրանց բնույթին : «Պրոլետարիատը պայքարում է իմ-  
պերիալիստական պետութիւններէ միմյանց միջև մղած պա-  
տերազմների դեմ, կանգնած լինելով պարտաւիճակաւ տեսա-  
կետի վրա սեփական կառավարութեան նկատմամբ և իմպե-  
րիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի  
վերածելու տեսակետի վրա ընդդէմ բուրժուազիայի : Հենց  
այդպիսի սկզբունքային դիրք և բռնում իմպերիալիստական  
յերկրների պրոլետարիատն իմպերիալիստների հարստահա-  
րիչ պատերազմի դեպքում, վորն ուղղված կլինի ազգային-  
հեղափոխական շարժման դեմ, առաջին հերթին գաղութա-  
յին ժողովուրդների դեմ և իմպերիալիզմի բացահայտ հա-  
կահեղափոխական պատերազմի դեպքում ընդդէմ պրոլետա-  
րական դիկտատուրայի : Դրա հետ միաժամանակ պրոլետա-  
րիատն աջակցում և ազգային-հեղափոխական պատերազմ-  
ներ է մղում, սոցիալիզմի պատերազմներ է մղում իմպե-  
րիալիզմի դեմ և կազմակերպում է ազգային հեղափոխու-  
թեան և պրոլետարական դիկտատուրայի պետութիւնների  
պաշտպանութիւնը» (Կոմինտերնի V կոնգրեսի հանրագու-  
մարմներէր) :

Պատերազմների պատմական որինակներ և պրոլետարիա-  
տի վերաբերմունքը դեպի նրանց : 1914—1918 թ.թ. պա-  
տերազմը : Բայլընիկների պայքարն իմպերիալիստական պա-  
տերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու համար :

1918—1921 թ.թ. քաղաքացիական պատերազմը : «Մենք  
պաշտպանողականներ ենք» սկսած 1917 թվի հոկտեմբերի  
25-ից» (Լենին) :

Պատերազմների վոչնչացման միակ ուղին՝ կապիտա-

լիզմի վոչնչացմուն է : Պացիֆիստական (խաղաղասիրա-  
կան) հայացքների կեղծութիւնն ու վնասակարութիւնը  
պատերազմների վոչնչացնելու հնարավորութեան մասին  
կապիտալիզմի շրջանակներում, վոր տարածում են սոցիալ-  
ֆաշիստներն ու զանազան մանր-բուրժուական կուսակցու-  
թիւններ, նպատակ ունենալով խաբել բանվորներին և հե-  
ռացնել նրանց հեղափոխական պայքարից կապիտալիզմը տա-  
պալելու համար :

II Ինտերնացիոնալի դաւաճանական դերը, վորը ջո-  
ղարկում է իմպերիալիստական պատերազմների իսկական ե-  
յութիւնը և բուրժուազիայի հետ միասին նորանոր պատե-  
րազմներ և ինտերվենցիա յե պատրաստում ընդդէմ ԽՍՀՄ :

III. ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

1. Նոր պատերազմների վտանգը : Համաշխարհային տըն-  
տնսական ճգնաժամը, հակասութիւնների սրումն իմպե-  
րիալիստների բանակում կարևորագույն այն կապիտալիստա-  
կան յերկրների միջև, վորոնք հաղթել են անցյալ համաշ-  
խարհային պատերազմում (Ամերիկա, Անգլիա, Փրանսիա,  
Ճապոնիա), հաղթող և պարտված յերկրների միջև (դաշ-  
նակիցներ և Գերմանիա), իմպերիալիստական յերկրների և  
գաղութների միջև : Որինակներ, վորոնք ցույց են տալիս  
հակասութիւնների աճն իմպերիալիստական լազերում :

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և հեղափո-  
խական շարժման աճն կապիտալի յերկրներում : ԽՍՀՄ դե-  
րը, վորի դոյութիւն «մեկնացնում է մինչև արմատները  
կապիտալիզմի բոլոր հակասութիւնները և հավաքում է մի  
կծիկի մեջ, դարձնելով այդ կենաց և մահու խնդիր հենց կա-  
պիտալիստական կարգերի համար» (Ստալին) : ԽՍՀՄ-ը հա-  
մաշխարհային հեղափոխութեան՝ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի

հաղթանակի՝ համաշխարհային սրբութեան հեղափոխութեան հաղթանակի հենարանն է: Կապիտալիստների ճշգրտումը պատերազմի և ինտերվենցիայի միջոցով վտնջապնդու ՍՍՀՄ-ը՝ համաշխարհային հեղափոխութեան միջնաբերդը:

Կապիտալիզմի կայունացման (ստարիլիզացիայի) վերջանալը և դարձը դեպի նորանոր պատերազմների և հեղափոխութեանների շրջանը:

Կապիտալիստներն արտաքին քաղաքականութեան բնագավառում ճշմարտացի յեղք են փնտռում մի նոր իմպերիալիստական պատերազմի մեջ, առաջին հերթին ՍՍՀՄ դեմ: «Նոր համաշխարհային իմպերիալիստական պատերազմը դարձել է անմիջական վտանգ» (ԿԻԳԿ 12 սլենում):

2. Ինչպես են իմպերիալիստները պատրաստում մի նոր իմպերիալիստական պատերազմ: Զինված ուժերի պատրաստութեանը կապիտալիստական յերկրներում: Ռազմական ծախքերի աճը, ռազմական արդյունաբերության դարգացումը՝ չնայած անտեսական ճղնաժամին: Կապիտալիստական բանակների, Ֆաշիտական ջոկատների աճումն և նրանց տեխնիկական հագեցվածութեանը: Այն հատուկ ուղադրութեանը, վոր իմպերիալիստները նվիրում են ուղային տորմիդ և մոտո-մեքենայացված միափորումներ ստեղծելու գործին:

Առաջիկա պատերազմի թիկունքի պատրաստումն ու ապահովումը: Յերկրի և ազդարնակչութեան ռազմականացման (միլիտարիզացիայի) մասին յեղած որենքները: Ֆաշիզմի աճումը, բուրժուական պետութեանների Ֆաշիզացումն և կատաղի պայքարն աճող հեղափոխական շարժման դեմ:

II Ինտերնացիոնալը վորպես իմպերիալիստական բուրժուազիայի կարևորագույն դենքը նորանոր պատերազմներ պատրաստելու գործում: Սոցիալ-Ֆաշիստների դերը հեղա-

փոխական շարժման դեմ յեղած պայքարում: Սոցիալ-Ֆաշիստների անջակցութեանը բուրժուազիայի անջակցրած կատաղի սպառազինումների վաղըի քաղաքականութեանը:

Ազգերի Լիգան և նրա դերը վորպես մի նոր պատերազմ պատրաստելու գործիք խոչորագույն իմպերիալիստական պետութեանների ձեռքին: «Սաղագրութեան» կոնֆերանսը և դինաթափման կոնֆերանսը վորպես շիրմա, վորը ծածկում է իմպերիալիստական նորանոր պատերազմների պատրաստութեանը: Զինաթափման մասին խորհրդային բոլոր առաջարկների սարտաժան ու տապալումն այդ կոնֆերանսում: Ընկ. Լիավինովի մերկացումներն ժնեպի վերջին կոնֆերանսում:

«Ճրանխայի լիակատար և բացահայտ անջակցութեամբ և Անգլիայի ծածկված անջակցութեամբ տեղի ունեցած ճապոնական իմպերիալիզմի հարձակումն Զինաստանի վրա հանդիսանում է մի նոր իմպերիալիստական պատերազմի սկիզբը» (Կ. Ի. Գ. Կ. XII սլենում):

«Տվյալ մոմենտի առանձնահատկութեանն այն է, վոր ավելի ու ավելի ջնջվում է լրագող դրութեան և, պատերազմի միջև յեղած սահմանը, քաջվում են պատերազմի մեջ և պատերազմում են առանց բացահայտ պատերազմ հայտարարելու» (Սոլոտով): Ծապոնիայի վարած պատերազմը Զինաստանում և Մանջուրիայում, վորպես այդ դրութեան վայրուն սպացույցը: Ծապոնիայի քաղաքականութեանը Զինաստանում, ինչպես և իմպերիալիստների վորջ քաղաքականութեանն իր սուր ծայրով ուղղված է ընդդեմ ՍՍՀՄ:

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ԼԱՐՅԵՐ

1. Ի՞նչու իմպերիալիզմն անխուսափելիորեն պատերազմներ է ծնեցնում:

2. Ի՞նչու Լենինը իմպերիալիզմն անվանել է «մեծնոց կապիտալիզմ»:

3. Ի՞նչ տեսակի պատերազմներ են լինում իմպերիալիզմի դարաշրջանում:

4. Ի՞նչ վերաբերմունք ունի պրոլետարիատը այդ տարբեր տիպի պատերազմներին:

5. Ի՞նչու չի կարելի պատերազմները վունչացնել առանց կապիտալիզմը տապալելու:

6. Ի՞նչու համաշխարհային տնտեսական ճգնաժամն ուժեղացրեց պատերազմի վտանգը, առաջին հերթին ընդդեմ ԽՍՀՄ:

7. Ի՞նչպես են իմպերիալիստները պատրաստվում պատերազմի, ինչպես են նրանք սպառազինվում և իրենց թիկունքը պատրաստում պատերազմի համար:

8. Վո՞րն է սոցիալ-ֆաշիստների և ֆաշիստների զեքը նոր պատերազմի պատրաստութան գործում:

9. Վո՞րն է Ազգերի Լիգայի դերը պատերազմի պատրաստութան գործում:

10. Ի՞նչ նպատակ են հետապնդում Ազգերի Լիգայի հրաժարած ամեն տեսակի «ղինաթափման» կոնֆերանսները:

Թեմայի մշակման պրոցեսում, կարմիր բանակայինը պետք է՝

1) գրավոր պատասխան տա 1, 2, 6 կոնտրոլ հարցերին.

2) գրել առնի հիմնական թվերը կապիտալիստական յերկրների սպառազինման մասին.

3) քաղվածք անի Կոմինտերնի VI կոնգրեսի բանաձևից պատերազմների տեսակների մասին (Թեմայի II բաժինը).

4) պատրաստվի բանավոր յերույթ ունենալու հետևյալ թեմաներից մեկնումեկի առթիվ ըստ խմբակավարի ցուցումի՝ ա) «Ի՞նչպիսի պատերազմներ են լինում և ի՞նչպես պետք

են նրանց վերաբերվի բանավոր դասակարգը». բ) «Ի՞նչպես են կապիտալիստները նոր պատերազմ պատրաստում և ում դեմ»:

## IX ԽՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՂԱԿՄԱՆ ՍԵՁ (10 ժամ)

ա) Թեմայի բովանդակությունը.

### 1. ՅԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կապիտալիստների քաղաքականությունը՝ ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա պատրաստելու քաղաքականությունն է: Սկսած խորհրդային յերկրի ծաղումից իմպերիալիստները խիստ թշնամական քաղաքականություն են վարում ԽՍՀՄ նկատմամբ: Իմպերիալիստների կողմից քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի կազմակերպումը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: «Յերեք տարվա ընթացքում մեր դեմ պատերազմում էլին յերկրագնդի բոլոր ամենահարուստ պետությունները» (Լենին): Սպիտակ ղվարդիականության կազմակերպումն և ակնհայտ աջակցությունը իմպերիալիստների կողմից: Իմպերիալիստների թշնամական քաղաքականությունը ԽՍՀՄ նկատմամբ քաղաքացիական պատերազմից հետո: ԽՍՀՄ ճանաչելու ցանկությունը չունենալը: Տերորիստական ակտերը ԽՍՀՄ ներկայացուցիչներին նկատմամբ: Հարձակումը Չին-Արևելյան յերկաթուղու վրա 1929 թվին, վորպես ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի մի փորձ:

Կապիտալիստների թշնամության ուժեղացումը ԽՍՀՄ նկատմամբ վերջին տարիների ընթացքում՝ շաղկապված համաշխարհային տնտեսական ճգնաժամի աճման հետ, հեղափոխական շարժման աճման հետ կապիտալի յերկրներում և սո-

ցիալիստական շինարարութեան հաջողութիւնները հետ  
ԽՍՀՄ մեջ: Ֆրանսիական բուրժուազիան հակախորհրդային  
պատերազմի գլխավոր կողմակիերային է: Ռազմաքաղաքա-  
կան դաշինքները ստեղծումը ԽՍՀՄ շրջապատելու նպատա-  
կով: «Պան Յելրոպա» և «Դանուբյան Ֆեդերացիա» ստեղ-  
ծելու պլանները. արևելյան-յեւրոպական յերկրները «ազրա-  
բային» կոնֆերանսը: Մեր հարեաններին սպառազինելը  
Ֆրանսիայի և Անգլիայի կողմից: Ջեխո-Սլովակիան, Շվեդիան  
և այլ յերկրները վորպես հակախորհրդային պատերազմի  
արսենալներ: Ստրատեգիական յերկաթուղիների, նավահան-  
գիստների, ռազմական կամուրջների կառուցումը մեր սահ-  
մանների ուղղութեամբ: Ֆրանսիական ղեկնչտարի տենդային  
«տեսչական» գործունեյութիւնը: Մեր հարեանների բանակ-  
ների հրամանատարութեան համախմբումը:

Տնտեսական պատերազմի կողմակիերայումը ընդդէմ ԽՍՀՄ  
հնդամյակը տապալելու նպատակով: Հակախորհրդային կամ-  
պանիաները՝ «Կուտեպովչինա», «Ուաչակրաց արշավանք»,  
«ԽՍՀՄ մեջ հարկադրական աշխատանքի» և «դեմպինդի»  
մասին յեղած հեքիաթները: ԽՍՀՄ միջկողային դրութեան  
առանձնահատուկ սրումը 1932 թվին: Ճապոնիայի պատե-  
րազմը Մանջուրիայում և Չինաստանում իր սուր ծայրով  
ուղղված է ԽՍՀՄ դէմ: Ճապոնական և գերմանական դե-  
պանների դեմ կատարված մահափորձերը: Պատերազմի հրա-  
հրում սպիտակ գլարդիականների կողմից (դորգեւելովչին-  
նա):

«Այդ վոճրագործ աշխատանքի՝ տնտեսական պաշարման  
(բրկադայի) կողմակիերայման և ԽՍՀՄ դեմ ռազմական ին-  
տերվենցիա նախապատրաստելու մեջ II ինտերնացիոնալը  
և սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւններն անմիջակա-  
նորեն ղեկավար մասնակցութիւն են ունենում» (Կ.Ի.Գ.Կ.

XI պլենումի բանաձևից): Սոցիալ-Ֆաշիստների կողմից  
ԽՍՀՄ մասին պրովակացիոն լեգենդների տարածումը «դեմ-  
պինդի», «հարկադրական աշխատանքի» մասին և այլն: Սո-  
ցիալ-Ֆաշիստական հակահեղափոխական պնդումները «կտց-  
միը իմպերիալիզմի» մասին, այն մասին, վոր «պատերազմի  
վտանգը գալիս է Արևելքից»: Սոցիալ-դեմոկրատական առաջ-  
նորդների ուղղակի մասնակցութիւնն անմիջականորեն պե-  
տութիւնների պատերազմական պատրաստութիւնների մեջ:  
Հակահեղափոխական տրոցկիզմը ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա  
պատրաստող իմպերիալիստական բուրժուազիայի առաջավոր  
ընկառն է:

2. Մեր քաղաքականութիւնը՝ յաղաղութեան քաղաքա-  
կանութիւն է: ԽՍՀՄ արտաքին քաղաքականութիւնը՝ իտա-  
ղադութեան քաղաքականութիւն է: «Այդ քաղաքականութեան  
նպատակն է կանգնել միջկողային հեղափոխութեան  
պահպանի դիրքերում և պահպանել սոցիալիզմի շինարար  
աշխատանքը» (Կոմինտերնի VI կոնգրեսի թեղիսներից):  
Դեկրետը իսպաղութեան մասին՝ խորհրդային իշխանութեան  
առաջին քայլն է նրա ճաղման սկզբից: Խորհրդային  
կառավարութեան պայքարը իսպաղութեան համար քաղա-  
քացիական պատերազմի տարիներին: Խորհրդային պետութեան  
պայքարը իսպաղութեան համար քաղաքացիական պա-  
տերազմի վերջնապուց հետո, ԽՍՀՄ ձգտումը սահմանելու  
իսպաղ հարաբերութիւններ մոտավոր հարեանների հետ:

ԽՍՀՄ առաջարկները ղինաթափման մասին «իսպաղութեան»  
կոնֆերանսում և այդ առաջարկների տապալումն կա-  
պիտալիստների կողմից: Կապիտալիստների ինտերվենտա-  
կան պլանների մերկացումը վորպես ԽՍՀՄ իսպաղութեան  
քաղաքականութեան միջոցներից մեկը: Մեր քաղաքականութեան  
թիւնը իսպաղութեան քաղաքականութիւնն է և այլ յերկրներ

րի հետ առևտրական կապերի ամրացման քաղաքականութիւնն է: Խաղաղութեան այս քաղաքականութիւնը կվարենք նաև հետագայում բոլոր ուժերով և բոլոր միջոցներով: «Ռտարի հողից վոչ մի թիղ չենք ուզում, բայց և մեր հողը, մեր հողից վոչ մի վերջուկ վոչ վոքի չենք տա» (Ստալին):

Վերջին տարիների և ամիսների փաստերը, վոր ապացուցում են ընկ. Ստալինի այս բառերը և ԽՍՀՄ պայքարը խաղաղութեան համար (մեր քաղաքականութիւնը ճապոնացիների նկատմամբ, միմյանց վրա չհարձակվելու դաշինքների ստորագրումը մեր արևմտյան հարևանների հետ և այլն): ԽՍՀՄ խաղաղ քաղաքականութիւնը մի հզոր գենք է մերկացնելու կապիտալիստների ռազմական մտադրութիւնները, ԽՍՀՄ պաշտպանութեան գենքն է:

Իմպերիալիստների կողմից նշված ինտերվենցիայի նախորդ պլանների տասպայման պատճառները՝ հակասութիւնների աճումն կապիտալիստական յերկրներում, Կոմինտերնի աշխատանքը, ԽՍՀՄ տնտեսական հզորութեան և պաշտպանունակութեան ամրացումը, մեր խաղաղութեան ամրացումը, մեր խաղաղութեան քաղաքականութիւնը: Կապիտալիստական մասնակի կայունացման վերջնալը և դարձը գեպի պատերազմների և հեղափոխութիւնների մի նոր շրջան: Պատերազմի ուժեղ պատրաստութիւնը իմպերիալիստների կողմից և նրանց կողմից ամեն մի բուպե ԽՍՀՄ դեմ պատերազմ սկսելու հնարավորութիւնը:

«Սոցիալիզմի համար մարտնչողի ամենաառաջին պարտականութիւնն այն է, վոր բոլոր անհրաժեշտ քաղաքական, տնտեսական և ռազմական պատրաստութիւնները տեսնի պատերազմի առնչութեամբ, ամրացնի Կարմիր բանակը... և լայն աշխատավորական մասսաներին սովորեցնի ռազմական գործը» (Կոմինտերնի ՎԻ կոնգրեսի թեզիսներից):

Խորհրդային Միութեան խաղաղ քաղաքականութիւնը հաշտութիւն չի նշանակում կապիտալիզմի հետ: «Նա հանդիսանում է... ներկա պարագաներում պայքարի ավելի ձեռընտու ձև ընդդեմ կապիտալիզմի» (Կոմինտերնի ՎԻ կոնգրեսի թեզիսներից):

## II. ԽՍՀՄ ՅԵՎ ԽՈՇՈՐԱՅՈՅՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ (4 ժամ)

1. ԽՍՀՄ և ՀԱՄՆ: ՀԱՄՆ-ը խոշորագույն և հզորագույն պետութիւնն է կապիտալիստական աշխարհում: ՀԱՄՆ-ի իմպերիալիստական հզորութեան ուժեղացման պատճառները պատերազմի հետևանքով: ՀԱՄՆ-ը յեվրոպական յերկրների գլխավոր վարկավորողն է:

ՀԱՄՆ-ի և յեվրոպական կապիտալիստական յերկրների հարաբերութեան սրումը ՀԱՄՆ-ի իմպերիալիստական հզորութեան ուժեղացման հետևանքով: Հակասութիւնները ՀԱՄՆ-ի և Անգլիայի միջև: Այդ հակասութիւնների պատճառը՝ պայքարն է համաշխարհային հեգեմոնիայի համար: Հակասութիւնները Ամերիկայի և Ճապոնիայի միջև Սաղաղովկիանոսում ազդեցութիւն ունենալու համար:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և ՀԱՄՆ-ը: «Ճգնաժամն ամենից ուժեղ հարված է և կապիտալի գլխավոր յերկիրը, նրա միջնարբը, ՀԱՄՆ-ը, վորն իր ձեռքում կենտրոնացրել է յերկրագնդի բոլոր յերկրների վողջ արտադրութեան և սպառման առնվազն կեսը» (Ստալին): Տնտեսութեան անկումը ՀԱՄՆ-ում, գործազրկութեան, աղքատութեան մասսայական աճումն, բոլոր հակասութիւնների խիստ սրումն ՀԱՄՆ-ի և Յեվրոպայի կապիտալիստական յերկրների միջև: Այդ մասին վկայող փաստեր (Ճապոնիայի վարած

պատերազմը Մանջուրիայում և Չինաստանում, ՀԱՄՆ-ի առաջարկած ռեպարացիոն պլանները և այլն) :

ՀԱՄՆ-ը և ԽՍՀՄ : ՀԱՄՆ-ի ակտիվ մասնակցութիւնը ինտերվենցիայի մեջ ընդդեմ ԽՍՀՄ (Արխանգելսկ, Հեռավոր Արեւելք, սպիտակ դժարդիականներին աջակցութիւն և այլն) : ՀԱՄՆ-ի կառավարութիւնը չի ցանկանում ճանաչելու ԽՍՀՄ-ը : Յերկու տենդենցների միայնքը ԽՍՀՄ նկատմամբ՝ խողաղ հարաբերութիւնն և առևտրի տենդենցը և պատերազմի ու ինտերվենցիայի տենդենցները : ՀԱՄՆ-ի բանակն ու տորմիլը :

2. ԽՍՀՄ և Անգլիան : Անգլիան հնազույն կապիտալիստական յերկիր է, վորը շահագործում է միլիոնավոր դաղութային սարուկների, վորը մինչև պատերազմն առաջատար յերկիրն էր կապիտալիստական աշխարհում : Պայքարը Անգլիայի և Գերմանիայի միջև համաշխարհային տիրապետութեան համար՝ 1914—1918 թ. թ. պատերազմի պատճառն էր : Անգլիայի տեսակարար կշռի անկումն իմպերիալիստական պատերազմի հետևանքով և անգլո-ամերիկյան հակասութիւնների սրումն ղեկավար դեր ունենալու կապիտալիստական աշխարհում : Հակասութիւնները Անգլիայի և Ֆրանսիայի միջև ղեկավար դեր ունենալու համար Յելլոուպայում :

Անգլիան և ԽՍՀՄ : Անգլիայի ինտերվենտական քաղաքականութիւնը ԽՍՀՄ նկատմամբ : Այդ քաղաքականութեան հիմնական պատճառը՝ անգլիական իմպերիալիստների ձգտումն է զավթել ԽՍՀՄ հարստութիւնները (նավթ, անտառ), հեղափոխական շարժման աճը Անգլիայի դաղութներում : Անգլիայի ղեկավար դերը և 1918—1921 թ. թ. ինտերվենցիայի կազմակերպումը (սպիտակդարձիականներին ողնելը, սպառաժամբութիւնների կազմակերպումը, դորբերի ախ հանելը հարավում, Բագու քաղաքի դրավումը և այլն) : Անգլիայի

ինտերվենտական քաղաքականութիւնը ԽՍՀՄ նկատմամբ քաղաքացիական պատերազմից հետո (Քերզոնի և Չեմբերլինի ուղտիմատումները, դիպլոմատիկական հարաբերութիւնների խղումը 1927 թվին և այլն) : ԽՍՀՄ հետ դիպլոմատիկական հարաբերութիւնների վերականգնումը Անգլիայի լեյբորիստական կառավարութեան կողմից՝ բանվորների ճնշման տակ : Անգլիայի դերը հակախորհրդային պատերազմի պատրաստութեան մեջ՝ պատերազմի պատրաստութիւնը ԽՍՀՄ դեմ ծովերում, ռազմական բազաների ստեղծումը, ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստութիւնը Պարսկաստանի, Հնդկաստանի, Ալգանտանի սահմանների կողմից : Անգլիայի բանակն ու տորմիլը :

3. ԽՍՀՄ և Ֆրանսիան : Ֆրանսիան աշխարհի բոլոր պրեսիվ և ռազմատենչ յերկիրներից ամենաազդեցիվ և ռազմատենչ յերկիրն է : Պատերազմի և Գերմանիային կողոպտելու հետևանքով Ֆրանսիան զլաւել և Յելլոուպայի ամենահարուստ յերկիրը խոշոր արդյունաբերութեամբ և զարդացած դյուղամտնութեամբ : Ֆրանսիայի կողմից վերստայան սահմանների ռազմաքաղաքական ապահովումը, ռազմական համաձայնութիւններ Լեհաստանի, Ռումինիայի, Չեխո-Սլովակիայի հետ և այլն : Հակասութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի միջև : Ֆրանսիայի դիտավոր դերը Այդերի Լիգայում :

Ֆրանսիան և ԽՍՀՄ : Ֆրանսիայի դերը քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի կազմակերպման մեջ 1918—1921 թ. թ. (սպառակ դժարդիականներին աջակցելը, դորբերի առաքումը խորհրդային յերկիր, սպիտակ Լեհաստանին ողնելը և այլն) : Ֆրանսիան նոր պատերազմի և ինտերվենցիայի կազմակերպողն է ընդդեմ ԽՍՀՄ : ԽՍՀՄ-ի անտեսական ողակման կազմակերպումը Ֆրանսիայի կողմից :

«Արդյունաբերական կուսակցութեան» պատկանող միա-  
աբարոններին կազմակերպելն ու աջակցելը, հակախորհրդա-  
յին կամպանիաների կազմակերպումը Ֆրանսիայի կողմից  
(մասնավորապես Գորդուլովի սրտցեսը) : Ֆրանսիան՝ սպիտակ  
քվարդիական կազմակերպութեանների կենտրոնն է : Ֆրան-  
սիական ռազմական ու արդյունաբերական աճումն ընդհա-  
նուր տնտեսական ճգնաժամի Փոնի վրա և ռազմական ար-  
դյունաբերողների շահագրգռվածութեանը նոր պատերազմի  
մեջ : Ֆրանսիայի աջակցութեանը Ճապոնիային նրա հակա-  
խորհրդային քաղաքականութեան մեջ : Ֆրանսիայի բանակը :

4. ԽՍՀՄ և Ճապոնիան : Ճապոնիան յերիտասարդ իմ-  
պերիալիստական յերկիր է Հեռավոր Արևելքում : Ճապոնիայի  
տնտեսութեանը և համաշխարհային տնտեսական ճգնաժամի  
խիստ անդրադարձումը նրա վրա : Ճապոնիայի իմպերիալիս-  
տական քաղաքականութեանը : Ճապոնիայի մրցակցութեանը  
Ամերիկայի դեմ և այդ յերկրների պայքարը Խաղաղ ուկի-  
անոսում իշխելու համար : Տնտեսական ճգնաժամը Ճապոնի-  
այում և ճապոնական բուրժուազիայի իմպերիալիստական  
գաղթողական ձգտումների աճումը : Մանջուրիայի դրավումը  
Ճապոնիայի կողմից : Ճապոնիայի գաղթողական նպատակնե-  
րը Մանջուրիայում : Չինաստանի, Մանջուրիայի աշխատա-  
վորութեան պայքարը ճապոնական իմպերիալիզմի դեմ  
(պարտիզանական սպասամբական շարժումները և այլն) :  
Ճապոնիան վորպես համաշխարհային իմպերիալիզմի մի ջո-  
կատը, վորը պայքարում է ծավալվող հեղափոխական շարժ-  
ման դեմ Չինաստանում :

Ճապոնիան և ԽՍՀՄ : Ճապոնիան ինտերվենցիայի գլխա-  
վոր կազմակերպիչն էր Հեռավոր Արևելքում քաղաքացիա-  
կան պատերազմի տարիներին : Ճապոնիայի իմպերիալիստա-  
կան քաղաքականութեանը ԽՍՀՄ նկատմամբ և նրա կողմից

ինտերվենցիայի կազմակերպումը Հեռավոր Արևելքում :  
Ճապոնիայի իմպերիալիստական պլանները ԽՍՀՄ նկատ-  
մամբ՝ «Ճապոնիան մինչև Ուրալ» : Իմպերիալիստական Ճա-  
պոնիայի պատերազմն ու քաղաքականութեանը Չինաստա-  
նում իր սուր ծայրով ուղղված է ընդդեմ ԽՍՀՄ : Ճապոնիան  
հակախորհրդային ճակատի գլխավորողն է : Ճապոնիայի  
բանակն ու տորմիդը :

5. ԽՍՀՄ և Գերմանիան : Մինչև պատերազմը Գերմա-  
նիան խոշորագույն և հզորագույն կապիտալիստական յեր-  
կիր էր : Պատերազմից հետո Գերմանիան պարտված յերկիր  
է : Պատերազմական տուրքերի արտահանումը Գերմանիայից  
հաղթող յերկրների կողմից, Գերմանիայի տերրիտորիայի  
մի մասի (կարևորագույն արդյունաբերական հումքային  
ռայոնների) անջատումը նրանից, Գերմանիայի զրկվելը դա-  
շութներից և նրա սպառազինումների սահմանափակումը :

Գերմանիայի և ԽՍՀՄ փոխհարաբերութեանը : Ռապ-  
պարտի դաշինքը և նորմալ առևտրական հարաբերութեան-  
ների սահմանումը ԽՍՀՄ և Գերմանիայի միջև :

Գերմանիայի տնտեսական ճգնաժամը : Հակասութեան-  
ները Գերմանիայի և Լեհաստանի միջև : Անգլիայի և Ֆրան-  
սիայի պայքարը Գերմանիային հակախորհրդային բլոկի մեջ  
քաշելու համար : Գերմանական բուրժուազիայի ֆաշիստական  
քաղաքականութեանը :

### III. ԽՍՀՄ ՅԵՎ ՍՍՀՄ ԱՆԱԿԻՑ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Իմպերիալիստների կողմից Ֆինանսական և ռազմական  
աջակցութեանը ցույց տալը սահմանակից պետութեաններին  
վորպես մի բարյերի, վոր ԽՍՀՄ բաժանում է Արևմուտքի  
բանվոր դասակարգից և աշխատավորութեանից և վորպես

իմպերիալիստների առաջափոր ջոկատի, վորոնք պատրաստ-  
վում են հակախորհրդային պատերազմի:

1. Չեխո-Սլովակիան, Եվեդիան, Հարավ-Սլավիան՝  
սահմանակից պետությունների ուղղմական թիկունքն ու ար-  
տենալն են: Այս յերկրների ուղղմական արդյունաբերությունն  
ու նրա կապը խոշորագույն կապիտալիստական պետություն-  
ների ուղղմական արդյունաբերության հետ:

2. Լեհաստան: Լեհաստանը վորպես իմպերիալիզմի գլը-  
խավոր դործակայն արեմտյան սահմանակից պետություն-  
ների կողմից հակախորհրդային ճակատ ստեղծելու մեջ,  
լեհական պետություն Փաշիստական բնույթը, զինվորական  
կլիկի գերիշխանությունը: Տնտեսական ճղնածամի բնութա-  
գիրը Լեհաստանում: Ռազմական արդյունաբերություն զար-  
գացումը, արդյունաբերության հին ճյուղերի անկումը,  
ազրարային ճղնածամը, Ֆեոդալական մնացորդները, ուղ-  
մական ծախքերի անսահման աճումը, սպառման արտաքին  
չուկանների բացահայտությունը, կապիտալների անբավարար  
քանակը, գործազրկությունը, աշխատավոր դյուրագիտության  
աղքատացումն ու սովը Լեհաստանում: Հեղափոխական  
չարժման աճումն քաղաքում և դյուրում: Ազդային փոքրա-  
մասնությունների ճնշումը Լեհաստանում և աղբային-ա-  
զատապրական շարժումն Արեմտյան Ուկրայնայում և Բե-  
լոռուսիայում: Լեհական իմպերիալիզմի ուղղմական քաղա-  
քականությունը, հակապետությունները Լեհաստանի և Գեր-  
մանիայի միջև, Լեհաստանի և Լիտվայի միջև: Լեհական  
բուրժուազիայի ուժեղ պատերազմական պատրաստություն-  
ները ԽՍՀՄ դեմ: Լեհաստանի իմպերիալիստական պլաննե-  
րը: Զինված ուժերը և ուղղմական Փաշիստական կազմակեր-  
պությունները: Լեհական բանակը. նրա դասակարգային  
բնույթը, նրա քանակն ու սպառազինումը: Զինվորների

առուցումն ու քաղաքական մշակումը: Լեհաստանի Փաշիս-  
տական կազմակերպությունները և նրանց դերը Լեհաստանի  
պատրաստություն մեջ պատերազմի համար:

3. Ռումինիա: Ընդհանուր բնութագիրը: Ռումինական  
բուրժուազիայի քաղաքական ձգտումները: Բեսարաբիայի  
դրավումն ու ճնշումն Ռումինիայի կողմից: Ազրարային ճղ-  
նածամը Ռումինիայում: Սովը և աշխատավոր դյուրագիտների  
աղքատանալը:

Ազդային հարցը Ռումինիայում: Ֆրանսիայի, Անգլիա-  
յի, Իտալիայի աղքեցությունը Ռումինիայի եկոնոմիկայի և  
քաղաքականություն վրա: Հեղափոխական շարժման աճումն  
Ռումինիայում: Ռումինական պետություն ուժեղ Փաշիզա-  
ցումը: Ռումինիայի կողմից պատերազմի պատրաստումը  
ԽՍՀՄ դեմ: Ռումինական բանակը, նրա դասակարգային  
ևյուրությունը և ընդհանուր բնութագիրը:

4. Մերձբալթյան պետություններ: Համառոտ տեղեկու-  
թյուններ Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լատվիայի մասին:  
Այդ յերկրների պետական անկախությունն Հոկտեմբերյան  
հեղափոխության հետևանքով: Այդ յերկրների բուրժուազիա-  
յի պայքարը հեղափոխական շարժման դեմ: Անգլիայի,  
Ֆրանսիայի, Գերմանիայի և Լեհաստանի աղքեցությունը  
Մերձբալթյան պետությունների քաղաքականություն վրա,  
վորպիսին ուղղվում է ԽՍՀՄ դեմ: Լեհաստանի ձգտումը հե-  
ղեմոնիայի այդ յերկրների նկատմամբ: Ֆրանսիայի և Ան-  
գլիայի դերը պատերազմի պատրաստության մեջ Մերձ-  
բալթիկում ընդդեմ ԽՍՀՄ: Մերձբալթյան պետություննե-  
րի բանակները բնութագիրը:

#### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ.

1. Ինչո՞ւ համաշխարհային տնտեսական ճղնածամը,  
ԽՍՀՄ հաջողությունները սոցիալիստական շինարարության

մեջ և հեղափոխական շարժման աճն սրում են կապիտալիստական աշխարհի թշնամությունն ընդդեմ ԽՍՀՄ :

2. Վո՞րն է մեր արտաքին քաղաքականությունը և վո՞րն է իմպերիալիստների արտաքին քաղաքականությունը :

3. Ի՞նչ փաստեր են վկայում այն մասին, վո՞ր ԽՍՀՄ վարձում է խաղաղության անչեղ քաղաքականություն :

4. Ի՞նչ փաստեր են վկայում այն մասին, վո՞ր իմպերիալիստները նոր պատերազմ և ինտերվենցիա յեն պատրաստում ընդդեմ ԽՍՀՄ :

5. Վո՞րն է II Ինտերնացիոնալի և հակահեղափոխական տրոցկիստների դերը պատերազմի պատրաստության մեջ ընդդեմ ԽՍՀՄ :

6. Ի՞նչ նպատակով են իմպերիալիստները ստեղծել Ադդերի Լիգան և ինչո՞ւ համար են գինաթափման կոնֆերանսներ դումարում :

7. Վո՞րն է սահմանակից պետութայունների դերը պատերազմ և ինտերվենցիա պատրաստելու մեջ ընդդեմ ԽՍՀՄ :

8. Վորո՞նք են իմպերիալիստների նախկին պլանները խորտակման պատճառներն ինտերվենցիա կազմակերպելու նկատմամբ ընդդեմ ԽՍՀՄ :

9. Ի՞նչ նշանակություն ունի սոցչինարարությունը ԽՍՀՄ պաշտպանության համար :

դ) Թեմայի մշակման հետևանքով կարմիր բանակայինը բացի կոմունալ կարգերին պատասխանելուց պետք է կարողանա՝

1) ցույց տալ քարտեզի վրա խոշորագույն կապիտալիստական յերկրները, պատմել այդ յերկրներից ամեն մեկի դերի մասին կապիտալիստական աշխարհում և ԽՍՀՄ հետ փոխհարաբերության և այդ յերկրների բանակների մասին .

2) Ցույց տալ քարտեզի վրա ԽՍՀՄ սահմանները, բուրք

սահմանակից կապիտալիստական յերկրները, հաղորդել համառոտ տեղեկութայուններ այդ յերկրներից ամեն մեկի մասին, այդ յերկրների դերի մասին նոր պատերազմ և ինտերվենցիա պատրաստելու մասին ընդդեմ ԽՍՀՄ և նրանց բանակների մասին :

դ) Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակայինը պետք է՝

1) կազմի հակիրճ գրավոր աշխատանք «ԽՍՀՄ խաղաղ քաղաքականութայունը և կապիտալիստների իմպերիալիստական քաղաքականութայունը» թեմայի մասին .

2) համառոտակի ղեկուցի ինքնուրույն կերպով կազմած գրավոր պլանի (գրանցումների) հիման վրա ԽՍՀՄ միջադաշին դրութայան հարցերից մեկնումեկի մասին (ընթացիկ լրագրական ղեկուցումների հիման վրա) . յելույթի թեման խմբակավարի ցուցումով .

3) գրանցել տեսրում հիմնական թվերը (դիագրամները) կարևորագույն կապիտալիստական յերկրների և մեր կապիտալիստական հարևանների նպատաղինումների մասին :

## X. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ

ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ (10 ժամ)

ա) Թեմայի բովանդակութայունը

### 1. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԱՐՃՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ (2 ժամ)

1. Դասակարգային պայքարը կապիտալիստական աշխարհում : ԽՍՀՄ միակ յերկիրն է աշխարհում, վորտեղ տապալված է կապիտալիզմի իշխանութայունը : Վողջ կապի-

տալիստական աշխարհում տեղի ունի կատաղի պայքար բան-  
վոր դասակարգի և բուրժուազիայի միջև: Բանվոր դասա-  
կարգի պայքարի միջազգային բնույթը բուրժուազիայի դեմ:  
«Կապիտալը միջազգային ուժ է: Նրան հաղթելու համար ան-  
հրաժեշտ է բանվորների միջազգային միությունը, նրանց  
միջազգային յեղբայրությունը» (Լենին):

Պրոլետարիատի դաշնակիցները կապիտալիստների  
լծից ազատելու համար մղված պայքարում՝ աշխատավոր  
դուրսագիտությունը և գաղութների և կախումն ունեցող  
յերկրների ճնշված ժողովուրդները, վորոնք յննթարկվում են  
կրկնակի ճնշման՝ իմպերիալիստների և իրենց սեփական  
բուրժուազիայի և կալվածատերերի ճնշմանը:

Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Ենգելսը բանվոր դասակարգի  
խոչորագույն ուսուցիչներն են, վորոնք նշել են բանվոր  
դասակարգի՝ վորպես կապիտալիզմի գերեզմանափորի պատ-  
մական դերը, վորպես բոլոր աշխատավորների առաջնորդը  
կապիտալիզմի տապալման համար մղված պայքարում, վո-  
րոնք ուսուցանում եյին, վոր դասակարգային պայքարը կա-  
պիտալիստական հասարակության մեջ պետք է հանդեպնի  
պրոլետարական հեղափոխությանը և պրոլետարիատի դիկ-  
տատուրայի սահմանելուն: Մարքս-Ենգելսի յողունգի վիթ-  
խարագույն նշանակությունը՝ «Պրոլետարները բոլոր յերկրնե-  
րի՝ միացե՛ք»: Լենինը, Մարքս-Ենգելսի ուսմունքի հանճա-  
րեղ շարունակողն է պրոլետարական հեղափոխությունների  
կոխայում:

Համաշխարհային պատերազմը սկիզբ դրեց կապիտալիզ-  
մի ընդհանուր ճգնաժամին: Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունն ու ԽՍՀՄ առաջ դարը մի նոր խոչորագույն ետապ է  
բանվոր դասակարգի պայքարի մեջ ընդդեմ բուրժուազիայի:  
Հոկտեմբերյան հեղափոխությունը վորպես համաշխարհային

պրոլետարական հեղափոխությունների սկիզբը: Միասնական  
համաշխարհային տնտեսության բաժանումը յերկու բանակի՝  
սոցիալիզմի բանակի՝ ԽՍՀՄ և կապիտալիզմի բանակի՝ բո-  
լոր մնացած յերկրները՝ վորտեղ դեռևս կապիտալն է գե-  
րիշխում: Ժամանակակից շրջանը՝ բանվոր դասակարգի  
և բոլոր աշխատավորների վճռական մարտերի շրջանն է կա-  
պիտալիզմի տապալման համար ամբողջ աշխարհում: «Վողջ  
համաշխարհային ուժեղ ցնցման, դասակարգային պայքարի  
արման և անմիջականորեն պրոլետարական Հոկտեմբերյան  
հեղափոխության ազդեցության հիման վրա տեղի ունեցան  
մի շարք հեղափոխություններ և հեղափոխական ընդլայնու-  
մներ... Յեվրոպայի ցամաքում... և դադութային ու կիսադա-  
դութային յերկրներում» (Կոմինտերնի ծրագրից): Որինակ-  
ներ, վորոնք ցույց են տալիս հեղափոխական պայքարի ծա-  
վալն ու դաժանություններն իմպերիալիստական հետադա-  
տերազմյան տարիներին (անմիջականորեն Հոկտեմբերից հե-  
տո և հետագա տարիներին):

2. Կոմինտերնը՝ համաշխարհային հեղափոխության  
շտաբն է: Կապիտալիզմը չի կարող ինքն իրեն կործանվել,  
նա. պետք է կործանվի բանվոր դասակարգի հեղափոխական  
պայքարում ընդդեմ բուրժուազիայի: Ձի կարելի հաղթու-  
թյուն տանել կապիտալիզմի դեմ առանց ամուր շտաբի դո-  
յության, վորը ղեկավարում է բանվորների և բոլոր աշխա-  
տավորների հեղափոխական պայքարը: «Կոմինտերնը (հա-  
մաշխարհային հեղափոխության շտաբն է, պրոլետարիատի  
և բոլոր աշխատավորների առաջնորդն է հեղափոխական պայ-  
քարի մեջ ընդդեմ կապիտալի: «Կոմունիստական յնտերնա-  
ցիոնալը՝ բանվորների միջազգային ընկերությունը՝ ասան-  
ձին յերկրների կոմունիստական կուսակցությունների հա-  
մախմբումն է, միասնական համաշխարհային կոմունիստա-

կան կուսակցութիւնն է: Հանդիսանալով համաշխարհային հեղափոխական շարժման առաջնորդն ու կազմակերպիչը, կոմունիզմի սկզբունքները և նպատակները կրողը, կոմունիստական Ինտերնացիոնալը պայքարում է բանվոր դասակարգի մեծամասնութիւնն ու չքավոր գյուղացիութեան լայն շերտերը նվաճելու համար, պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրան հաստատելու համար, սոցիալիստական յոբանջարային հանրապետութիւնների համաշխարհային մոնոթիւն ստեղծելու համար, դասակարգելի լիակատար չնչնչացման և սոցիալիզմի՝ կոմունիստական հասարակութեան աչք առաջին աստիճանի իրազործման համար (կոմինտերնի կանոնադրութիւնը):

Կոմինտերնը՝ միակ շարունակողն է բանվորները առաջին միջազգային համախմբման՝ I Ինտերնացիոնալի դործի, վորին 1864 թվին հիմնել եր պրոլետարիատի խոշորագույն ուսույչիչ Կարլ Մարքսը: «II Ինտերնացիոնալը իր լավոյողոյն ժամանակներին հող եր պատրաստում լայնորեն և մասսայորեն տարածելու բանվորական շարժումը» (կոմինտերնի ծրագրից): Ոպորտունիզմը և սոցիալ-չովինիզմը II Ինտերնացիոնալում և նրա վերջնական անցումն բուրժուազիայի կողմը 1914 թվի պատերազմին: Արդի II Ինտերնացիոնալը՝ բանվոր դասակարգի գործի դավաճանները՝ սոցիալ-ֆաշիստների, կապիտալիզմի գործակալների համախմբումն է:

Դեռինը՝ կոմունիստական Ինտերնացիոնալի առաջնորդն ու հիմնադիրն է: Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնումը՝ 1919 թվին: Կոմինտերնի ազդեցութեան հսկայական աճումը վողջ աշխարհի բանվոր դասակարգի և աշխատավորութեան վրա ներկա շրջանում:

Յերիսասարգութեան կոմունիստական Ինտերնացիոնա-

լը: ԿԻՄ-ի խնդիրները բանվորական յերիտասարգութեան մասաները կոմունիզմի կողմը դրավելու համար:

Կարմիր Պրոֆինտերնը՝ հեղափոխական արհեստակցական միութիւնների միջազգային համախմբումն է:

Համ Կ(բ)Կ-ը կոմինտերնի առաջավոր ղեկավար ջոկատն է: Համ Կ(բ)Կ ղեքը համաշխարհային հեղափոխական շարժման ղեկավարութեան մեջ: Ընկ. Ստալինը՝ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդն է, կոմինտերնի առաջնորդն ու տեսարանն է:

Յերկաթյա կարգապահութիւնը կոմկուսակցութիւնների ամբութեան դրավականն է: Անհաշտ պայքարը յերկու ճակատի վրա՝ աջ ոպորտունիզմի դեմ, վոր դլխավոր վտանգն է ներկա ետապում, «ճախ» ոպորտունիզմի և ղեպի դրանց հաշտողականութեան դեմ՝ կոմինտերնի մարտունակութեան և ճիշտ բայլչելիյան դծի հիմքն է:

II. ՊԱՅԳԱՐԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԲՈՒԹՈՒՄ-ՉԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՆԵՐԿԱ ՇՐՋԱՆՈՒՄ (2 Ժամ)

1. Հեղափոխական վերելքը կապիտալի յերկրներում: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և նրա հետեանքներն աշխատավորութեան համար:

Ժողովրդական լայն մասսաների աճող դժգոհութիւնը կապիտալի յերկրներում սոցիալիզմի հաջողութիւնները եՍՉՄ պատճառ են դառնում բանվորների և աշխատավորների հեղափոխական վերելքի աճմանը: Փաստեր, վոր ցույց են աալիս հեղափոխական շարժման վիթխարի աճը և բանվորների անմիջական մարտերի մոտեցումն իշխանութեան համար ժի շարք կապիտալիստական յերկրներում և դազութներում (Գերմանիա, Լեհաստան, Չինաստան, Իսպանիա, Հնդկաստան և այլն): Կապիտալիզմի կայունացման վախճանը և

նշմարտող անցումը դեպի պատերազմների և հեղափոխութ-  
յունների նոր շրջանը :

Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի բնույթը  
ժամանակակից շրջանում : Բուրժուազիան ճգնաժամից յեւթ  
և փնտոում հետագա Փաշիդացման և բանվոր դասակարգի  
վրա ճնշում գործ դնելու մեջ ներքին քաղաքականութեան  
քնազավաւում, նոր խմբերիալիստական պատերազմի և ին-  
տերվենցիայի մեջ և առաջին հերթին ընդդէմ ԽՍՀ Միու-  
թեան՝ արտաքին քաղաքականութեան բնազավաւում :

Գրոյեստարիատը, պայքարելով կապիտալիստական շա-  
հագործման և ռազմական վտանգի դէմ, յեւթ և փնտոում  
հեղափոխութեան և կապիտալիզմի տապալման մեջ :

2. Փաշիդը և սոցիալ-ֆաշիզմը : Բուրժուազիայի պայ-  
քարն աճող հեղափոխական շարժման դէմ : Փաշիզմի և սո-  
ցիալ-ֆաշիզմի դերն այդ պայքարում : Փաշիզմը՝ խոշոր կա-  
պիտալի մերկայաբաւոց դիկտատուրան է : Փաշիզմը՝ բուր-  
ժուազիայի մարտական զենքն է բանվոր դասակարգի վրա  
հարձակվելու և աճող հեղափոխական շարժման դէմ պայ-  
քարելու գործում : Փաշիզմն Իտալիայում, Ահաստանում,  
Գերմանիայում և այլ յերկրներում : Փաշիզմի գլխավոր խն-  
դիրը՝ կոմունիստական կուսակցութեան ջախջախումն  
է : Հուլիսյան դեպքերը Գերմանիայում վորպես բուրժուա-  
զիայի կողմից Փաշիստական մեթոդներ կիրառելու որինակ  
պայքարելու համար աճող հեղափոխական շարժման դէմ :

«Փաշիզմի աճումն վերջին ժամանակները հնարավոր է  
դառել միմիայն միջազգային սոցիալ-դեմոկրատիայի աջակ-  
ցութեան հիման վրա» (ԿիԳԿ XI պլենում բանաձևից) : Սո-  
ցիալ-ֆաշիստները՝ Ո՞րտեղնացիոնալի կուսակցութեաննե-  
րը, վորոնք իրենց անվանում են «սոցիալիստական և բան-

վորական», սակայն իրականում հանդիսանում են Փաշիզմի  
տարբեր տեսակը (ձախ թեւը) :

«Դասակարգային պայքարի դարձացման բոլոր հիմնական  
և բարնեղում, սկսած համաշխարհային խմբերիալիստական  
պատերազմից և պրոլետարական դիկտատուրայի սկզբնավո-  
րութեանից սոցիալ-դեմոկրատիան անցել է կապիտալիզմի  
կողմն ընդդէմ բանվոր դասակարգի» (ԿիԳԿ XI պլենումի  
բանաձևից) : Սոցիալ-դեմոկրատիայի անընդհատ եվոլյու-  
ցիան դեպի Փաշիզմը : Միջազգային սոցիալ-դեմոկրատիան՝  
բուրժուազիայի գլխավոր սոցիալական հնարանն է բան-  
վոր դասակարգի մեջ : Սոցիալ-ֆաշիստների խնդիրն է պայ-  
քար մղել աճող հեղափոխական շարժման դէմ բանվոր դա-  
սակարգի ներսում : Սոցիալ-դեմոկրատական կուսակցու-  
թեանների վերնաշերտերի և ստորին շերտերի միջև յեղած  
խիտ տարբերութեանը : Սոցիալ-դեմոկրատական կուսակ-  
ցութեանների ստորին խմբերը՝ բանվորներ են, խաբված  
սոցիալ-ֆաշիստների կողմից, սոցիալ-ֆաշիստական «ա-  
ռաջնորդները» բուրժուազիայի վարձկաններն են : Սոցիալ-  
ֆաշիստական առաջնորդների ուղղակի մասնակցութեան-  
նը հակահեղափոխական տեսողի, բանվորների զնդակա-  
հարութեանների մեջ և այլն : Կոմունիստական կուսակցու-  
թեանների և բանվոր դասակարգի պայքարը Փաշիզմի դէմ  
անհնար է առանց ամենաանհաշտ պայքարի սոցիալ-ֆաշիզմի  
դէմ : Միմիայն հիմնական հարվածն ուղղելով սոցիալ-դեմո-  
կրատիայի՝ բուրժուազիայի այդ գլխավոր սոցիալական հե-  
նարանի դէմ, կարելի յէ հաջողութեամբ հարվածել և ջախջա-  
խել պրոլետարիատի գլխավոր դասակարգային թշնամուն՝  
բուրժուազիային : Յեւ միմիայն խիտ տարբերութեան անե-  
լով սոցիալ-դեմոկրատական առաջնորդների և բանվորների  
միջև, կոմունիստները կարող են վերացնել այն անջրպետը,

վոր շատ հաճախ նրանց բաժանում է սոցիալ-դեմոկրատ բան-  
վորներին, հանուն միասնական հեղափոխական ճակատի  
(ԿԻԳԿ XII պլենումը) :

«Ձախ» սոցիալ-Ֆաշիստների դեմ պայքարի խնդիրները,  
վորոնց հիմնական խնդիրն է «ձախ Ֆրազները» ողնությամբ  
կասեցնել սոցիալ-դեմոկրատ բանվորների անցնելը կոմու-  
նիստների կողմը : Վճռական պայքարի անհրաժեշտութունը  
հակահեղափոխական տրոցկիզմի՝ հակահեղափոխական  
բուրժուազիայի առաջավոր ջոկատի՝ և աջ ունեզատների  
(հավատուրացների), պրոլետարիատի զործի այդ դավաճան-  
ների դեմ, վորոնք լիովին անցել են սոցիալ-Ֆաշիստների  
բանակը :

### III. ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱ- ԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ (2 ժամ)

1. Պայքար բանվոր դասակարգի մեծամասնությամբ նվաճ-  
ման համար : «Այժմ բոլոր կոմունիստական կուսակցու-  
թյունների առջև ծառայած գլխավոր խնդիրն է իր կողմը  
թեքել բանվոր դասակարգի մեծամասնությունը, վորպես  
բուրժուազիային հաղթանակելու և բանվոր դասակարգին  
պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող վճռական  
մարտերի պատրաստելու մի անհրաժեշտ պայման» (ԿԻԳԿ XI  
պլենումի բանաձևից) :

«Կապիտալիստական կայունացման վախճանը, հեղափո-  
խական ճշմարտության նախադրյալների արագ զարգացումը  
մի շարք կապիտալիստական յերկրներում և վողջ միջազգա-  
յին նոր պարզան իրենց ամբողջ սրությամբ դնում են ներ-  
կա շրջանում կոմունիստական կուսակցությունների հիմնա-  
կան խնդրի կատարման հարցը, այն է բանվոր դասակարգին  
և շահագործվող մասսաներին տնտեսական և քաղաքական  
պայքարի ընթացքում պատրաստել առաջիկա մարտերին իչ-

խանությունը նվաճելու համար, պրոլետարիատի դիկտա-  
տուրայի համար : Հենց այն պատճառով, վոր մինչև հեղա-  
փոխական ճշմարտության ժամկետները կարճ են,  
անհրաժեշտ է, առանց մի բույե ժամանակ կորցնելու, ու-  
ժեղացնել և արագացնել բայլչեիկյան մասսայական աշխա-  
տանքը բանվոր դասակարգի մեծամասնությունը նվաճելու  
համար, բանվոր դասակարգի հեղափոխական ակտիվու-  
թյունն բարձրացնելու համար» (ԿԻԳԿ XI պլենում) : Ծանր  
պայմանները, վորոնց մեջ աշխատանք են տանում յեղբայ-  
րակից կոմունիստական կուսակցությունները՝ Ֆաշիստա-  
կան-վոստիկանական տեոորը կոմունիստների և հեղափոխա-  
կան բանվորների նկատմամբ, կոմունիստական մամուլի վրա  
դրվող արգելքները, ժողովների և դեմոնստրացիաների ցրու-  
մը և զնդակահարությունները, կոմունիստներին աշխա-  
տանքից արձակելը ձեռնարկներում, ձերբակալումները և  
քաղբանտարկյալների տանջանքները և այլն : Կոմունիստական  
կուսակցությունների համար հատուկ կարևորություն ունի  
մասսաների մեջ աշխատանք տանելու հմտությունը նման  
պայմաններում, ձեռնտրկներում բլիջներ ստեղծելու և ամ-  
բացնելու, բաց և ընդհատակյա աշխատանքի բոլոր մեթոդ-  
ները զուգակցելու հմտությունը :

Բոլոր բանվորների միասնական ճակատի տակտիկայի  
կիրառումը ցածից, վորպես կադավերպչական մի յեղանակ  
կուսակցության ղեկավարությամբ, անկախ բանվորների  
կուսակցական պատկանելիությունից միասնական պայքարի  
համար ընդդեմ կապիտալիզմի : Միասնական ճակատի տակ-  
տիկան ցածից, վորպես մի միջոց դեպի սոցիալիզմի կողմը  
քաշելու սոցիալ-Ֆաշիստ առաջնորդներից խաբված բանվոր-  
ներին, վորպես մի միջոց մերկացնելու այդ առաջնորդներին :

Կոմունիստների աշխատանքի առանձնահատուկ կարևոր

նշանակութիւնը համաձայնողական արհեստակցական միութիւններում. նրանց աշխատանքն ինքնուրույն հեղափոխական, արհեստակցական կազմակերպութիւններ ստեղծելու և ամրացնելու համար:

Պայքարի հիմնական ուղղութիւնները բանվոր դասակարգի մեծամասնութիւնը նվաճելու համար:

«Ներկայումս Կոմիտեերնի և բոլոր կապիտալիստական յերկրներում նրա սեկցիաների ընդհանուր խնդիրը հանդիսանում է կոնկրետ պայքարը՝ 1) ընդդէմ կապիտալի հարձակման, 2) ընդդէմ Փաշիզմի և ուսակցիայի, 3) ընդդէմ մոտեցող իմպերիալիստական պատերազմի և ինտերվենցիայի ինտերգային Միութեան դէմ» (ԿիԳԿ XII սլենում):

«Գասակարգը դասակարգի դէմ» լոզունգի նշանակութիւնը կոմկուսակցութիւնների պայքարում բանվոր դասակարգի մեծամասնութեան համար:

Կոմիտեերնի և կոմունիստական կուսակցութիւնների աշխատանքի հսկայական կարեւորութիւնն աշխատավոր զյուղացիութեան մէջ կապիտալիստական յերկրներում նրանց բանվոր դասակարգի ղեկավարութեամբ կազմակերպելու համար պայքարի հանելու ընդդէմ կապիտալիստների և կալվածատերերի:

Կոմիտեերնի անհաշտելի պայքարը յերկու ճակատում ողորտունիզմի բոլոր տարրեր տեսակների դէմ և դեպի նրանց հաշտվողականութեան դէմ՝ կոմկուսակցութիւնների ամբողջական գրավականն է, նրանց կողմից բանվոր դասակարգի մեծամասնութեան նվաճման յերաշխիքն է:

Կոմիտեերնի պայքարն ալ ուղորտունիզմի դէմ, վորը գլխավոր վրտանդն է կոմկուսակցութիւններում: «Ալ թեքումը կոմունիզմի մէջ կապիտալիզմի պայմաններում նշանակում է կոմունիստների մի մասի տենդենցը՝ հակու-

մը... հեռանալու մարքսիզմի հեղափոխական գծից դեպի սոցիալ-դեմոկրատիայի կողմը» այն նպատակով, վոր կոմունիզմը հարմարեցնեն սոցիալ-դեմոկրատիզմին: Ալ թեքման հաղթանակը կապիտալիստական յերկրների կոմկուսակցութիւնների մէջ կնշանակելը կոմկուսակցութիւնների դադարաւարական ջախջախումը և սոցիալ-դեմոկրատիայի հսկայական ուժեղացումը:

Կոմիտեերնի պայքարը «ձախ» ուղորտունիստների դէմ, վորոնք քարոզում են առաջ վաղել և կտրվում են մասսաներից: 2. Հեղափոխական վերելքը և կոմկուսակցութիւնների աշխատանքն առանձին կապիտալիստական յերկրներում (Գերմանիա, Լեհաստան, Իսպանիա, Չեխո-Սլովակիա և այլն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Այս կետը լուսաբանվում է համաձայն վերջին տվյալների հեղափոխական շարժման մասին կապիտալիստական յերկրներում:

#### IV. ՀեղԱՓՈՒՍԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ ( 2 ժամ )

1. Հեղափոխական շարժման անը գաղութներում: Իմպերիալիստների համար դադութները ծառայում են վորպես կապիտալի արտահանման և դործադրութեան մի վայր, վորպես աժան բանվորական ուժ, հումք ստանալու աղբյուր և վորպես ապրանք սպառելու շուկա:

Համաշխարհային տնտեսական ճղնաժամը և դադութների ճնշման աճն իմպերիալիստների կողմից: Դրա որինակները:

Կոմիտեերնը, վորը «առաջին անգամ համաշխարհային պատմութեան մէջ իրականում, հեղափոխական պայքարի դործնակամբ համախմբել է յեվրոպական և ամերիկյան

պրոչետարիատի առաջադր շերտերը Չինաստանի և Հնդկաստանի պրոչետարների հետ, Աֆրիկայի և Ամերիկայի սևամորթ աշխատավորների հետ» (Կոմինտերնի ծրագրից)՝ գաղափարային յերկրների աշխատավորների առաջնորդն է: Հեղափոխական շարժման աճը դադուրթներում և Կոմինտերնի խնդիրները պրոչետարիատի ղեկավար զերն համար մղվող պայքարում դադուրթներում բարձրացող աշխատավորների հեղափոխական պատերազմում ընդդեմ իմպերիալիզմի և ագրային բուրժուազիայի և կալվածատերերի:

2. Հեղափոխական շարժումը Չինաստանում: Չինաստանը՝ իմպերիալիստներից ճնշված յերկիր է: Բանվորների և աշխատավոր գյուղացիության գրուրթյունը Չինաստանում, վորոնք կրկնակի ճնշում են զգում, իմպերիալիստների և չինական բուրժուազիայի ու կալվածատերերի ճնշումը: Չինական ղեներալական կլիկների պայքարը, վորոնք տարբեր իմպերիալիստական յերկրների շահեր են ներկայացնում: Գոմինզանի՝ չինական բուրժուազիայի կուսակցության հակահեղափոխական եյությունն ու քաղաքականությունը: Տնտեսական ճղնաժամը Չինաստանում և հեղափոխական շարժման վիթխարի աճը: Խորհուրդները, Կարմիր բանակը և պարտիզանական շարժումը Չինաստանի մի շարք սայոններում:

Կոմունիստական կունակցությունը Չինաստանում և նրա յնդիրները հեղափոխության ծավալման համար մղվող պայքարում: Չինական կոմկուսակցության բայլլեիկացումը և պայքարը յերկու ճակատի վրա: Կարմիր բանակի և չինական խորհուրդների հաջողությունները վորպես այլ խորհուրդների բայլլեիկյան ղեկավարման հետևանք չինական կոմկուսակցության կողմից: Ճապոնիայի ինտերվենցիան

Չինաստանում ուղղված և ընդդեմ չինական ծավալվող հեղափոխության:

3. Հեղափոխական շարժումը Հնդկաստանում: Հնդկաստանն անգլիական իմպերիալիզմի կարևորագույն դադուրթն է: Հնդկաստանի աշխատավորության ճնշումն, իրավադուրկ գրությունը և աղքատացումը: Տնտեսական ճղնաժամն ու հեղափոխական շարժման աճն Հնդկաստանում: Հնդկաստանի կոմկուսակցության կազմելն ու աճումը, վորպես բանվորագյուղացիական աղբարային և հակաիմպերիալիստական հեղափոխության հաղթանակի կազմակերպման անհրաժեշտ սայոյմանը: Հնդկաստանի կոմունիստական կուսակցությունը և նրա պայքարն ընդդեմ հակահեղափոխական դանդիզմի և իմպերիալիզմի:

Մ. ԽՍՀՄ-Ը՝ ՀԱՄԱՇԽՍՐ ՀԱՅԻՆ ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ե ( 2 ժամ )

1. ԽՍՀՄ Համաշխարհային պրոչետարիատի հարվածային բրիգադն է: ԽՍՀՄ համաշխարհային պրոչետարիատի սոցիալիստական հայրենիքն է: «ԽՍՀՄ բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է»: Մենք հաղթանակեցինք վոչ միայն ԽՍՀՄ բանվոր դասակարգի ջանքերով, այլև համաշխարհային բանվոր դասակարգի աջակցության շնորհիվ:

«Մենք մի այնպիսի գործ ենք կատարում, վորը հաջողության ղեպում տակնուվար կանի վողջ յերկրագունդը և կաղտադրի վողջ բանվոր դասակարգը» (Ստալին):

Սոցիալարարության հաջողությունները ԽՍՀՄ մեջ՝ համաշխարհային պրոչետարական հեղափոխության հաջողություններն են: ԽՍՀՄ վորպես «կապիտալիզմի ճղնաժամի խորացման մի ավելի ու ավելի վիթխարի ազդակ, վորը հե-

դա՛րժի Թիւանացնում ե համայն աշխարհի պրոլետարիատն ու շահագործվող մասսաները» : ԽՍՀՄ վերջնականապէս ամրացել է սոցիալիստական ուղիի վրա : ԱՎԼ կուսկոնֆերանսի վարչոճումների համաշխարհային-պատմական նշանակութիւնն անդասակարգ սոցիալիստական հասարակութիւնն կառուցելու մասին յերկրորդ հնգամյակում :

2. Կոմինտերնի պայքարը պատերազմի և ռազմական վտանգի դեմ : «Ռազմական ինտերվենցիայի վտանգը ԽՍՀՄ դեմ դառել է անմիջական վտանգ վողջ համաշխարհային պրոլետարիատի համար» (ԿիԳԿ XI պլենումի բանաձևից) :

Կոմինտերնի խնդիրները և աշխատանքը ԽՍՀՄ դեմ ռազմական ինտերվենցիա կազմակերպելու դեմ մղած պայքարում :

Կոմինտերնի աշխատանքը բանվորական մասսաների և աշխատավորութիւնն մեջ՝ գործադուլային պայքարն ընդդէմ սպառազինումների և պատերազմի պատրաստութիւնն, իմպերիալիստական կառավարութիւններին կողմից ռազմական ինտերվենցիայի պատրաստման մերկացումները, կամպանիաների անցկացնելը և մասսաների մորիլիզացիան ԽՍՀՄ և Սորհրդային Չինաստանի պաշտպանութիւնն համար, կանանց և յերիտասարդութիւնն մեջ տարվող աշխատանքը, կոմունիստական մամուլը և այլն :

Պայքար ֆաշիզմի դեմ և կոմկուսակցութիւններին կողմից կատարվող մերկացումները սոցիալ-ֆաշիզմի և հակահեղափոխական տրոցկիզմի՝ վորպէս իմպերիալիստական բուրժուազիայի գործակալութիւնն նկատմամբ, ԽՍՀՄ դեմ ռազմական ինտերվենցիա պատրաստելու դործում :

Կոմունիստական կուսակցութիւններին աշխատանքը կապիտալիստական բանակներում : Ընկ. Լենինի ցուցումներն այդ մասին՝ «Կոմունիստական դադախարների տարածման

պարտականութիւնն իր մեջ պարփակում է մի տունձնահատուկ անհրաժեշտութիւնն համար սխտեմատիկ պրոպագանդ մղելու դորքերի մեջ : Այդ աշխատանքից հրաժարվելը հավասարազոր կլիներ հեղափոխական պարտքին դավաճանելուն և անհամատեղելի յե III Ինտերնացիոնային պատկանելու հետ» : Հեղափոխական շարժման փաստեր կապիտալիստական բանակներում :

ԿիԳԿ վորոշումները ռազմական վտանգի դեմ պայքարելու մասին, վորը կոչ է անում վողջ աշխարհի բոլոր կոմունիստներին, բանվորներին և աշխատավորներին սպայքարելու ռազմական վտանգի դեմ, սպայքարելու ԽՍՀՄ նկատմամբ ռազմական ինտերվենցիայի սպառնալիքների դեմ, լողունդ լեննայով՝ ԽՍՀՄ աշխատավորութիւնն դեմ ուղղված պատերազմը վերածել պատերազմի ընդդէմ իր սեփական բուրժուազիայի :

«Ընդհուպ մոտեցող և հատկապէս ֆաշիզմի կողմից արագացվող վորճրագործ պատերազմի պարագայում կոմունիստական կուսակցութիւնները պետք է սոցիալ-դեմոկրատների արտարկտ և կեղծավոր-պացիֆիստական հայտարարութիւններին հակադրեն իրական պայքար ընդդէմ պատերազմի պատրաստութիւնն : ԿիԳԿ բոլոր կոմկուսակցութիւններին պարտավորեցնում է հատուկ համարութիւնն և յեռանդով կյանքում կիրառել Կոմինտերնի վորոշումներն իմպերիալիստական պատերազմի և ինտերվենցիայի դեմ պայքարելու մասին յեղած հարցի առնչութիւնն» (ԿիԳԿ XII պլենում) :

«ԿիԳԿ XII պլենումը բոլոր կոմկուսակցութիւններին կարևորագույն խնդիրն է համարում կազմակերպել և գլխավորել բանվորների, գյուղացիների և համայն աշխատավորների պայքարը Չինաստանի և չինական հեղափոխութիւնն պաշտ-

պանության համար, բոլոր յերկրների բանվորների հայրե-  
նիք՝ ԽՍՀՄ պաշտպանութան համար ընդգեմ մտեցող սպա-  
մական ինտերվենցիայի, կապիտալիստական յերկրների աշ-  
խատավորութան պաշտպանութան համար մի նոր խմպե-  
րխախտական պոտերադից» (Կ)ԳԿ XII պլենումի բանա-  
ձևից) :

Հակապատերազմական կոնգրեսը Ամստերդամում, 1932  
թվի սեպտեմբերին, և նրա վորոշումները :

Կոմկուսակցությունների պայքարն ընդդեմ սպորտու-  
նիզմի պատերազմի հարցում, ընդդեմ ռազմական վաանդի  
աջ սպորտուստական թերազնահատման :

### Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ կապիտալի դեմ պայքարելու համար հարկա-  
վոր և «բանվորների միջադպային միությունը, նրանց միջադ-  
պային յեղբայրությունը» :
2. Ո՞վ և ի՞նչու հանդիսանում է իրրև բանվոր դասա-  
կարգի գաշակիցը կապիտալիզմի դեմ մղվող պայքարում :
3. Ինչո՞ւմն է Հոկտեմբերյան հեղափոխության և ԽՍՀՄ  
ստեղծելու հեղափոխական նշանակությունը համաշխարհային  
բանվոր դասակարգի համար ընդդեմ բուրժուազիայի :
4. Ի՞նչ դրության մեջ է կապիտալիզմը 1914 թվի պատե-  
րազմից հետո :
5. Վո՞րն է Կոմունիստական Ինտերնացիոնալի դերը բան-  
վոր դասակարգի պայքարում ընդդեմ բուրժուազիայի :
6. Վո՞րն է ԿԻՄ-ի և Կարմիր Պրոֆինտերնի դերը :
7. Ինչո՞ւ անհաշտ պայքարն սպորտունիզմի դեմ հանդի-  
սանում է Կոմինտերնի ամբողջական զբաղականը :
8. Ի՞նչ փաստեր են ասում հեղափոխական վերելքի ան-  
ման մասին վերջին տարիներում :

9. Ի՞նչի մեջ է բուրժուազիան յեւթ փնտում ճշնաթամից  
և ի՞նչի մեջ է յեւթ փնտում ճշնաթամից բանվոր դասակար-  
դը :

10. Վո՞րն է Փաշիզմի դերը բուրժուազիայի պայքարում  
ընդդեմ բանվոր դասակարգի :

11. Ովքե՞ր են սոցիալ-ֆաշիստները և վո՞րն է նրանց  
դերը հեղափոխական շարժման դեմ պայքարելու մեջ :

12. Ի՞նչ զլխավոր խնդիր է դրել Կոմինտերնը բո-  
լոր կոմունիստական կուսակցությունների առաջ :

13. Վո՞րոնք են կոմունիստների կողմից բանվոր դասա-  
կարգի մեծամասնության դեպի իր կողմը նվաճելու ուղի-  
ները :

14. Ի՞նչ նշանակություն ունի միասնական ճակատի  
սակտիկան և ի՞նչպես կոմունիստները պետք է այդ  
սակտիկան անցկացնեն :

15. Ի՞նչ նշանակություն ունի հեղափոխական շարժման  
աճն գաղտնիքում բանվոր դասակարգի պայքարի համար  
ընդդեմ բուրժուազիայի :

16. Վորո՞նք են կոմկուսակցության խնդիրները Չինաս-  
տանում :

17. Ի՞նչու մեներ ԽՍՀՄ անվանում ենք համաշխարհային  
պրոլետարիատի հարվածային բրիգադը, սոցիալիստական  
հայրենիքը :

18. Ի՞նչու ռազմական ինտերվենցիայի վտանգն ընդդեմ  
ԽՍՀՄ այժմս գտուել և անմիջական վտանգ համայն աշխարհի  
պրոլետարիատի համար :

19. Ի՞նչպես են կոմունիստները կապիտալիստական յեր-  
կրներում պայքարում ռազմական վտանգի և ինտերվենցիայի  
դեմ դեպի ԽՍՀՄ :

20. Ի՞նչ փաստեր են ասում հեղափոխական խմորման

աճման մատին կապիտալի բանակներում և վո՞րոնք են կոմ-  
կուսակցությունների խնդիրները կապիտալիստական բա-  
նակներում աշխատանք տանելու բնագավառում :

դ) Բացի կոնտրոլ հարցերին պատասխանելուց կարմիր  
բանակայինը պետք է՝

1) կոմիտեերնի կանոնադրության համաձայն իմանա կո-  
միտեերնի հիմնական խնդիրները և կառուցվածքի սկզբունք-  
ները :

2) Յերկրազեղի քարտեղի վրա կարողանա պատմել հե-  
ղափոխական շարժման մասին կարևորագույն կապիտալիս-  
տական յերկրներում և զաղութներում :

3) Կարողանա բացատրել «Բոյեվոյա Պողոտովկա»  
կամ «կարմիր զինվոր» լրագրի ընթացիկ թղթակցու-  
թյունները հեղափոխական շարժումների մասին կապիտա-  
լիստական յերկրներում և զաղութներում :

դ) Թեմայի մշակման պրոցեսում կարմիր բանակայինը  
պետք է՝

1) զրի համառոտ գլխավոր աշխատանք հետևյալ թեմա-  
յով, «ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատի հարվածային  
բրիգադն է . կարմիր բանակը՝ համաշխարհային հեղափոխու-  
թյան բանակն է» :

2) Գրի կոնտրոլ հարցերից 1, 2, 5, 9, 10 և 11-րդի պա-  
տասխանները :

3) Պատրաստի կարճառոտ բանավոր զեկուցում ինքնու-  
րույն կերպով գրած սլանով, հետևյալ թեմայից՝ «կոմու-  
նիստների պայքարը բանվոր դասակարգի մեծամասնության  
նվաճման համար» (կամ զեկուցի լրագրային նյութերի հի-  
ման վրա հեղափոխական շարժման մասին այս կամ այն յեր-  
կրում) :

